

# ԱՌՕՐՅԱՅԻ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿՈՂՄԸ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ԿԵՆՑԱՂՈՒՄ

ԱՄ Փարթնըրզ  
Քոնսալթինգ Քամփնի

*Հրատարակությունն իրականացվել է «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի»-ի և Վորլդ Վիժն Հայաստանի համագործակցության շրջանակներում՝ Վորլդ Վիժնի «Հոգաբարություն հանուն հավասարության» ծրագրի ֆինանսավորմամբ: Պարտադիր չէ, որ արտահայտված կարծիքները համընկնեն Վորլդ Վիժն Հայաստանի տեսակետների հետ:*

Երևան  
Աստղիկ - 2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                               |            |
|-----------------------------------------------------------------------------------------------|------------|
| <b>ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ .....</b>                                                            | <b>3</b>   |
| <b>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>                                                                   | <b>7</b>   |
| <b>2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....</b>                                                    | <b>14</b>  |
| 2.1 Խոսք ունենալու, առօրյայում որոշումներ կայացնելու իրավունք .....                           | 14         |
| 2.1.1 Կանանց՝ որոշումների կայացմանը մասնակցության<br>աստիճանը տնային տնտեսությունում .....    | 15         |
| 2.1.2 Կանանց մասնակցությունը համայնքային որոշումների<br>կայացմանը .....                       | 39         |
| 2.2 Առօրյա աշխատանքի իրականացում .....                                                        | 50         |
| 2.2.1 Կանանց կողմից առօրյայում իրականացված աշխատանքների<br>կարևորությունը և դասակարգումը..... | 50         |
| 2.2.2 Առօրեականության փոփոխություն .....                                                      | 64         |
| 2.3 Ժամանցի Կազմակերպում .....                                                                | 70         |
| 2.4 Երեխաների Դաստիարակություն .....                                                          | 77         |
| <b>3. ԱՄՓՈՓՈՒՄ. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ<br/>    ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>                      | <b>84</b>  |
| <b>4. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....</b>                                                              | <b>100</b> |
| 4.1 Առօրեականություն .....                                                                    | 100        |
| 4.2 Կիրառված Մեթոդներ .....                                                                   | 102        |
| 4.2.1 Անհատական խորին հարցազրույցներ .....                                                    | 102        |
| 4.2.2 Ներգրավված դիտարկումներ .....                                                           | 105        |
| 4.2.3 Փորձագիտական հարցազրույցներ .....                                                       | 108        |

### Հապավումներ և բացատրություններ

|     |                              |
|-----|------------------------------|
| ՎՎՀ | Վորլդ Վիժն Հայաստան          |
| SS  | Տնային տնտեսություն          |
| ՀԿ  | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ  | Հայաստանի Հանրապետություն    |

## ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հետազոտությունն իրագործվել է Վորլդ Վիժն Հայաստանի կողմից իրականացվող «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է փոխել և կանխել կանանց ու աղջիկներին վնասող կարծրատիպային վերաբերմունքն ու վարքագիծը, նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ աղջիկներն ու տղաները ծնվում ու արժևորվում են հավասարապես:

Վերջին շրջանում հանրային տարբեր ոլորտների կողմից ներկայացվում է սեռով պայմանավորված հղիությունների ընդհատումների վերաբերյալ տեղեկատվություն, որն ուղեկցվում է բացասական գնահատականներով և ժողովրդագրական կանխատեսումներով: Այն, որ խնդիրն առկա է, կարևոր և մտահոգիչ, արդեն իսկ արձանագրված փաստ է: Մենք կանդրադառնանք այս խնդրին՝ հասարակության մեջ կնոջ «երկրորդային» դերի և խտրական վերաբերմունքի հիմքերը փորձելով տեսնել առօրյա հարաբերություններում:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել գենդերային անհավասարության դրսևորումներն առօրեական հարաբերություններում:

Հետազոտության **թիրախային խմբերն են՝**

1. **Թիրախային համայնքների բնակիչներ**, որոնց հետ անցկացվել են խորին (մանրակրկիտ) հարցազրույցներ:
2. **Թիրախային համայնքների բնակիչներ**, որոնց ընտանիքներում իրականացվել են ներգրավված դիտարկումներ:
3. **Փորձագետներ**, այդ թվում՝ կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, օրենսդրական դաշտի փորձագետ, կրթական ոլորտի ներկայացուցիչներ:

Հետազոտության յուրաքանչյուր թիրախային խմբի համար նախատեսված են եղել 1-2 **հետազոտական գործիքներ**, այդ թվում՝

1. **Խորին հարցազրույցներ**, որոնց իրականացման նպատակով կիրառվել է երկու գործիք՝ **կիսաձևայնացված հարցաշար** և **ժողովրդագրական տվյալների հավաքագրման հարցաշար**: **Կիսաձևայնացված հարցաշար** կիրառվել է նաև փորձագիտական հարցազրույցների ժամանակ:
2. **Ներգրավված դիտարկումներ**, որոնց անցկացման համար նախատեսված է եղել ուղեցույց: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը կարող է բացակայել հետազոտվողների բանավոր նկարագրություններում: Դիտարկումը թույլ է տալիս բացահայտել այնպիսի երևույթներ, որոնք առաջին հայացքից կարող են չնկատվել և վրիպել հետազոտողի ուշադրությունից: Չնայած վերջինս կիրառման տեսանկյունից ամենաբարդ և դժվար իրագործելի մեթոդներից մեկն է, այնուամենայնիվ, մեր հետազոտության շրջանակներում այն կիրառվել է հետևյալ պատճառներով. ելնելով ոլորտում ունեցած մեր փորձից՝ կարող ենք վկայել, որ սեռով պայմանավորված բռնությունները որոշ դեպքերում ունեն «միջնորդավորված» բնույթ, այսինքն՝ պայմանավորված են սոցիալ-մշակութային ոչ անուղղակի գործոններով: Միայն հարցազրույցների միջոցով դրանց բացահայտումը կարող է լինել ոչ ամբողջական և/կամ աղավաղված: Մինչդեռ ներգրավված դիտարկումների ժամանակ հնարավոր է լինում բացահայտել հետազոտության վերաբերյալ առաջին հայացքից ոչ առաջնային, սակայն իրականում խնդրի ձևավորման կարևորագույն գործոնները ևս: Մեթոդի առավելություններից մյուսն այն է, որ ներգրավված դիտարկման ժամանակ հետազոտող-հետազոտվող կապը հստակ ընդգծված չի լինում, իսկ հետազոտությունը դառնում է առավել ոչ պաշտոնական՝ հնարավորություն տալով հասկանալ խնդիրը պայմանավորող գրեթե բոլոր հանգամանքները<sup>1</sup>:

**Հետազոտության արդյունքները** ցույց են տալիս, որ մեր հասարակության մեջ **կնոջ նկատմամբ կիրառվում է անհավասար, խտրական վերաբերմունք** մի շարք ոլորտներում.

---

1 Հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ առավել մանրամասն տես աշխատանքի վերջում:

- **Մեր հասարակությունը հայրիշխանական է և ապրում է տղամարդկային փոխհարաբերությունների օրենքներով:**
- **Կանայք դուրս են մնում հասարակական կյանքում իրականացվող հաղորդակցությունից,** որի ժամանակ ձևավորվում կամ վերափոխվում են հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքներ, գաղափարներ, իրավիճակներ:
- Առօրյա աշխատանքների իրականացման հարցում հստակ նկատելի է **անհավասար բաշխում և խտրական վերաբերմունք կանանց նկատմամբ:** Անկախ կանանց զբաղվածությունից (ունեն վարձատրվող աշխատանք, թե՛ ոչ), նրանք ներգրավված են առօրյայում իրականացվող գրեթե բոլոր աշխատանքներում:
- **Տնային, առօրյա աշխատանքներ իրականացնող կինը (տնային տնտեսուհի) ավելի քիչ հեղինակություն (ստատուս) ունի,** քան տղամարդը, ով գումար է վաստակում և ընտանիքը պահում: Այսինքն՝ կանանց կատարած աշխատանքները պակաս կարևոր են, քան տղամարդկանցը: Որոշակի բացառություններով դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ կինը միաժամանակ գումար է վաստակում:
- Եթե անգամ տղամարդը կնոջը ներգրավում է մի շարք որոշումների կայացմանը կամ ինքն է մասնակցում կնոջ համար նախատեսված աշխատանքներին, այնուամենայնիվ, **տղամարդուն է «պատկանում» վերջնական որոշում կայացնողի իրավունքը:**
- 8-9 տարեկանից սկսած՝ երեխաների մեջ դրվում է սեռային-դեռային բաժանումը, որտեղ **աղջիկ երեխաների սահմանափակումներն ավելի շատ են, իսկ դաստիարակության ձևերն՝ ավելի խիստ: Ակնհայտ է աղջիկ երեխաների նկատմամբ կիրառվող խտրական վերաբերմունքը:** Ի տարբերություն տղաների՝ նրանք ավելի շատ են մասնակցում տան կենցաղային գործերին՝ ճաշ եփել, տունը մաքրել, խանութ գնալ, կով կթել, սուրճ եփել, ամանները լվանալ, անկողինը հավաքել, թխվածք թխել, զբաղվել փոքր երեխաների խնամքով և այլն:
- Հասարակությունը դեռ պատրաստ չէ առօրյա աշխատանքների բաժանումն իրականացնել առանց սեռային խտրականության:

Ուսումնասիրվող երևույթն ունի բավական ամուր և կարծրացած հիմքեր, և այստեղ փոփոխությունների հասնելու համար առաջ կգան մի շարք դժվարություններ, քանի որ երևույթի վերաբերյալ նույն ընկալումները միաժամանակ ձևավորվում են երկու գործոնների հիման վրա՝ ընտանիքում, համայնքում անգիտակցաբար յուրացվող և նպատակադրված ձեռք բերվող կապիտալ գիտելիքի: Այսինքն՝ անհնար է այս հարցում փոխել հասարակությունը՝ առանց երևույթի վերաբերյալ նրանց ընկալումները փոխելու: Անկասկած, այդ փոփոխությունների համար արդյունավետ կարող են լինել նույն այն ուղիները, որոնց միջոցով ձևավորվել են կին-տղամարդ հարաբերությունների վերաբերյալ ընկալումները, այսինքն՝ խոսքը կրթական ինստիտուտների, ՁԼՄ-ների և տեղեկատվության փոխանցման այլ միջոցների (գովազդ, տարբեր միջոցառումներ և այլն) մասին է: Այնուամենայնիվ, որպես առկա իրավիճակի փոփոխման հնարավոր տարբերակներ, **առաջարկում ենք**.

- Բարձրացնել կրթական հաստատություններում աշխատող մանկավարժների գիտելիքները՝ արժեքների ձևավորման, վերակառուցման, «գենդեր» հասկացության վերաբերյալ:
- Վերանայել դպրոցական դասագրքերը:
- Իրականացնել հստակ մշակված քաղաքականություն ՁԼՄ-ների միջոցով:
- Ճիշտ կրթության միջոցով կնոջը հնարավորություն տալ ձեռք բերել տնտեսական ինքնուրույնություն:
- Իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնց միջոցով հնարավոր կլինի միաժամանակ ներգրավել ընտանիքի բոլոր անդամներին:
- Ընտանիքներում կիրառել երեխաների դաստիարակության այնպիսի մեթոդներ, որոնցում չկան կարծրատիպային տարբերություններ տղա և աղջիկ երեխաների միջև: Միևնույն ժամանակ այդ մեթոդների միջոցով մեծացնել հայրերի մասնակցությունը երեխաների դաստիարակության հարցում՝ ապահովելով ծնողների հավասար մասնակցություն:

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### **Թեմայի հետազոտման կարևորությունը և արդիականությունը:**

Վերջին շրջանում, ինչպես գիտենք, հանրային տարբեր ոլորտների կողմից ներկայացվում է սեռով պայմանավորված հղիությունների ընդհատումների վերաբերյալ տեղեկատվություն, որն ուղեկցվում է բացասական գնահատականներով և ժողովրդագրական կանխատեսումներով: Չնայած երևոյթն ավելի վաղ հիմքեր ունի, քան դրա մասին բարձրաձայնելու և խնդիրը հանրային դարձնելու հնարավորությունները, այդուհանդերձ, այն խոսում է երևոյթի կարևորության մասին: **Այն, որ խնդիրն առկա է, կարևոր և մտահոգիչ, արդեն իսկ արձանագրված փաստ է:** Մենք կանդրադառնանք այս խնդրին՝ հասարակության մեջ կնոջ «երկրորդային» դերի և խտրական վերաբերմունքի հիմքերը փորձելով տեսնել առօրյա հարաբերություններում:

**Թեմայի նպատակը և խնդիրները:** Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել գենդերային անհավասարության դրսևորումներն առօրեականության տեսանկյունից: Հաշվի առնելով «առօրեականություն» հասկացության լայն շրջանակը՝ մենք խնդիրը կդիտարկենք գլխավորապես ընտանեկան հարաբերությունների կառուցման հարթությունում՝ անհրաժեշտության դեպքում հղումներ անելով այլ միջավայրերի՝ համայնք, աշխատավայր, կրթական օջախներ և այլն:

Թեմայի հետազոտման հիմքում ընկած են եղել հետևյալ հիմնական պատճառները.

- Հաշվի առնել խնդրի ձևավորման այն սոցիալ-մշակութային հիմքերը, որոնց գործառնման հիմնական միջավայրն առօրյան է, օրինակ՝ առօրեական աշխատանքի կազմակերպում, խոսքի (խոսք ունենալու) մշակույթ՝ ազատ արտահայտվելու և լսելի լինելու, տարածքը տնօրինելու և որոշումներ կայացնելու հնարավորություններ և այլն:
- Խնդիրն այս տեսանկյունից դիտարկելը հնարավորություն

կտա պարզել՝ արդյոք սեռով պայմանավորված բռնությունները մեր հասարակությունում ընկալվում և դիտարկվում են որպես խնդիր, որն ունի լուծման կարիք, թե այն դարձել է առօրյայի սովորական մի մաս. այսինքն՝ վերոնշյալ գենդերային անհավասարության վերաբերյալ գիտելիքներն ու դրանց օգտագործումը դարձել են սոցիալ-մշակութային ժառանգության բաղկացուցիչ տարր և փոխանցվում են սերնդեսերունդ:

Ընդհանրապես, որևէ երևույթ, խնդիր հասկանալու և հետազայում այն հաղթահարելու մեխանիզմներ գտնելու համար նախ և առաջ պետք է հասկանալ՝ **որն է այդ խնդիրը ձևավորող միջավայրը, որոնք են այդ երևույթի վերաբերյալ առկա ընկալումները, և ինչպես են դրանք ձևավորվել.** վերոնշյալ հարցադրումներն էլ սույն **հետազոտության խնդիրներն են:**

**Հետազոտության աշխարհագրական տարածքը:** Ելնելով հետազոտական թեմայի առանձնահատկություններից՝ թիրախային համայնքների ընտրությունն իրականացվել է մի քանի կարևոր գործոնների հիման վրա, այդ թվում՝

- գյուղական և քաղաքային համայնքներ,
- քաղաքամերձ և սահմանամերձ համայնքներ,
- վերաբնակեցված և տեղացիներով բնակեցված համայնքներ,
- քաղաքային համայնքների պարագայում՝ ծայրամասային և կենտրոնական թաղամասեր:

Ըստ այդմ՝ հետազոտությունն իրականացվել է հետևյալ համայնքներում՝

- Գեղարքունիքի մարզ՝ Վարդենիս, Սարուխան, Դրախտիկ,
- Շիրակի մարզ՝ Գյումրի, Ամասիա, Կամո,
- Արագածոտնի մարզ՝ Ապարան, Դավթաշեն, Շենավան,
- Սյունիքի մարզ՝ Կապան,
- Երևան՝ Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն:



**Հետազոտության թիրախային խմբերն են՝**

1. **Թիրախային համայնքների բնակիչներ**, որոնց հետ անցկացվել են խորին հարցազրույցներ:
2. **Թիրախային համայնքների բնակիչներ**, որոնց ընտանիքներում իրականացվել են ներգրավված դիտարկումներ:
3. **Փորձագետներ**, այդ թվում՝
  - 3.1. **Կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպության (հեղափոխություն՝ ՀԿ) ներկայացուցիչ**: Այս հարցազրույցը թույլ կտա հասկանալ ոչ միայն գենդերային հիմնախնդիրների քանակական և բովանդակային կողմերը, այլև դրանք հաղթահարելու հնարավորություններն ու ներուժը:
  - 3.2. **Օրենսդրական դաշտի փորձագետ**: Այս ոլորտի փորձագետի ներգրավումը կարևորել ենք ոչ թե հասկանալու համար, թե օրենսդրական ոլորտում ինչ օրենքներ են ընդունվել կամ ընդունվելու, այլ որքանով են դրանք համապատասխանում մեր մշակութային միջավայրին և, դրանից կախված, որքանով են իրագործելի:
  - 3.3. **Կրթական ոլորտի ներկայացուցիչներ**: Այս ոլորտի փորձագետների հետ ունեցած հարցազրույցները թույլ կտան պարզել՝ որքանով է կարևոր և իրագործելի կրթական համակարգ - ընտանիք փոխհամագործակցությունը՝ խնդրի լուծման տեսանկյունից, ինչպես նաև արդյո՞ք համապատասխան առարկաների դասավանդումը կրթական հաստատություններում կարող է նպաստել խնդրի վերաբերյալ ընկալումների փոփոխությանը և, հետևաբար, խնդրի հաղթահարմանը:

**Հետազոտության գործիքները**: Հետազոտության յուրաքանչյուր թիրախային խմբի համար նախատեսված են եղել 1-2 հետազոտական գործիքներ, այդ թվում՝

1. **խորին հարցազրույցների** իրականացման նպատակով կիրառվել է երկու գործիք՝
  - 1.1. **Կիսաձևայնացված հարցաշար**: Այն կազմված է չորս հիմնական բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը՝ մի քանի ենթաբաժիններից՝

*Առաջին բաժին: Խոսք ունենալու, առօրյայում որոշումներ կայացնելու «իրավունք»*<sup>2</sup>: Այս բաժնում դիտարկել ենք

2 Իրավունք ասելով՝ նկատի չունենք բառի իրավական սահմանումը:

կանանց՝ որոշումների կայացման մասնակցության աստիճանը տնային տնտեսությունում (հետայսու՝ SS) և համայնքում: SS-ում կանանց մասնակցությունը որոշումների կայացմանը դիտարկել ենք չորս հիմնական ոլորտներում՝ կենցաղ, կրթություն, գյուղատնտեսություն, ֆինանսներ: Հիմնական շեշտադրումը կատարվել է այն խնդրին, թե ինչ դերակատարություն ունեն և պետք է ունենան կանայք SS-ներում վերոնշյալ ոլորտների վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

*Երկրորդ բաժին: Առօրյա աշխատանքի իրականացում:* Այս բաժնում անդրադարձել ենք, թե որքանով են կարևորվում կանանց կողմից առօրյայում իրականացվող աշխատանքները, և հետազոտության մասնակիցները առօրյա աշխատանքները կանանց և տղամարդկանց կողմից հավասար իրականացնելու գաղափարի հետ կապված ինչ դիրքորոշում ունեն: Մյուս կողմից՝ փորձել ենք դիտարկել՝ արդյոք կանայք ցանկանում են որևէ փոփոխություն տեսնել իրենց առօրյայում, և որոնք են այդ ակնկալվող փոփոխությունները: Արդյո՞ք այդ փոփոխությունները գաղափարական՝ գիտելիքների ձեռքբերման, իրավագիտակցության բարձրացման դաշտին են վերաբերում, որոնք էլ կարող են նպաստել հասարակության մեջ կանանց կարգավիճակի փոփոխությանը, թե՛ միայն կենցաղային մակարդակին:

*Երրորդ բաժին: Ժամանցի կազմակերպումն առօրեականության համատեքստում:* Հիմնական շեշտադրումներն արվել են SS-ում և դրանից դուրս կանանց ժամանցի կազմակերպման հնարավորություններին և սահմանափակումներին: Մասնավորապես՝ արդյո՞ք կանայք գրանցված են սոցցանցերում, եթե այո, ապա՝ ինչ միջոցներից են օգտվում (օրինակ՝ իրենց հեռախոսներով, թե՛ ամուսինների/եղբայրների): Ի՞նչ կարգավիճակ ունեն կանայք ընտանիքում հեռուստաալիքի նախընտրության հարցում: Ի՞նչ հաճախականությամբ և իմ

ուղեկցությամբ են կանայք օգտվում ժամանցի վայրերից՝ սրճարան, զբոսայգի, կինոթատրոն և այլն:

*Չորրորդ բաժին: Երեխաների դաստիարակություն:* Դիտարկվել է տղամարդկանց ներգրավվածության աստիճանը երեխաների դաստիարակության հարցում: Արդյո՞ք կա տարբերակվածություն ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցում՝ պայմանավորված երեխայի սեռով: Մյուս կողմից անդրադարձ է կատարվել տղա և աղջիկ երեխաների ունեցած դերակատարությանն ընտանիքում և այլն:

Բոլոր բաժիններում արծարծված հարցադրումներին առավել մանրամասն կանդրադառնանք համապատասխան բաժիններում:

## **1.2. Ժողովրդագրական տվյալների հավաքագրման հարցաշար:**

Հիմնական գործիք հանդիսացող կիսաձևայնացված հարցաշարից բացի՝ խորին հարցազրույցների թիրախային խմբերի համար կիրառվել է նաև ժողովրդագրական տվյալների հավաքագրման հարցաշար: Հարցաշարում ներառված են եղել զրուցակցին վերաբերող բոլոր հնարավոր բնութագրական բաղադրիչները՝ սեռ, տարիք, կրթական մակարդակ, մասնագիտացում, ամուսնական կարգավիճակ, զբաղվածություն, զբաղվածության ոլորտ, ընտանիքի կազմ, ընտանիքի անդամների թիվ, բնակության վայր: Վերոնշյալ բնութագրիչները թույլ կտան տեսնել դրանց ունեցած ազդեցությունը դիտարկվող խնդրի ձևավորման վրա:

- 1. Ներգրավված դիտարկումների** անցկացման համար նախատեսված ուղեցույցը կազմված է հիմնականում նույն մոտեցումներից/ձևակերպումներից, որոնք կարևորվել են խորին հարցազրույցների իրականացման ժամանակ: Սակայն, ի տարբերություն խորին հարցազրույցների, դրանք ոչ թե հարցադրումներ են, այլ հնարավոր իրավիճակների նկարագրության համար նախատեսված ձևակերպումներ:

Այդ պատճառով բացառություն են կազմել այն հարցադրումները, որոնք հնարավոր չէին լինի դիտարկել: Թիրախային ընտանիքներում դիտարկվել են հիմնականում (սակայն ոչ բոլոր դեպքերում) հետևյալ իրավիճակները.

*Կանանց մասնակցության աստիճանը SS-ում՝* կենցաղային, կրթական, գյուղատնտեսական և ֆինանսական ոլորտներին վերաբերող որոշումների կայացման մեջ:

*Կանանց կողմից առօրյայում իրականացվող աշխատանքները,* այդ թվում՝ առօրյա ռոտացիայի աշխատանքներն են կանայք իրականացնում առանց դժգոհությունների՝ դրանք համարելով իրենց պարտականությունը, և որոնք են համարում դժվար կամ ոչ կարևոր աշխատանք: Ինչպես նաև փորձել ենք դիտարկել, թե «կնոջ գործ» համարվող որ աշխատանքների իրականացման ժամանակ են SS տղամարդիկ օգնում կանանց, և հակառակը, ծանր ֆիզիկական որ աշխատանքներն են իրականացնում կանայք: Հասկանալու համար, թե որ տարիքից է սկսվում ընտանիքում աշխատանքի բաժանումը կնոջ և տղամարդու միջև, թիրախային ընտանիքներում դիտարկվել են 10-17 տարեկան տղա և աղջիկ երեխաների կողմից տանն իրականացվող աշխատանքները:

*Կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը երեխաների դաստիարակության հարցում,* այդ թվում՝ արդյո՞ք տղամարդիկ մասնակցում են երեխաների դաստիարակությանը, ինչ չափով, ռոտացիայում: Դիտարկվել է նաև կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը երեխաների դաստիարակության հարցում՝ ըստ երեխայի սեռի: Ինչ դերակատարություն ունեն տատիկները երեխաների դաստիարակության հարցում:

*Ժամանցի կազմակերպում:* Դիտարկման ոլորտներն են՝ արդյո՞ք կանայք գրանցված են սոցցանցերում, եթե այո,

ապա ինչ միջոցներից են օգտվում (օրինակ՝ իրենց հենախխուններով, թե՛ ամուսինների/եղբայրների): Ինչ կարգավիճակ ունեն կանայք ընտանիքում հեռուստաալիքի նախընտրության հարցում:

2. **Փորձագիտական հարցազրույցների** անցկացման համար կիրառվել են բովանդակային առումով երեք տարբեր հարցաշարեր՝ նախատեսված երեք տարբեր ոլորտների փորձագետների համար.

*Կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ փորձագետի* համար նախատեսված հարցաշարի թեմաները հիմնականում վերաբերում են գենդերային անհավասարության տեսակներին, դրանց լուծման հնարավոր միջոցներին, կանանց վերաբերմունքի փոփոխությանն իրենց հանդեպ կիրառվող գենդերային անհավասարության նկատմամբ և այլն:

*Օրենսդրական դաշտի փորձագետի* համար նախատեսված հարցաշարի միջոցով փորձել ենք պարզել կանանց իրավագիտակցության աստիճանը, գենդերային անհավասարության վերաբերյալ ընդունված օրենքների կիրառելիության աստիճանը Հայաստանի Հանրապետությունում (հետայսու՝ ՀՀ), դատաիրավական համակարգի մասնագիտական կազմի ընկալումները գենդերային անհավասարության վերաբերյալ և այլն:

*Կրթական ոլորտի ներկայացուցիչներն* անդրադարձել են հետևյալ հարցերին. արդյո՞ք հնարավոր է առկա կրթակարգերի միջոցով մեղմել գենդերային անհավասարությունը, արդյո՞ք սերունդը պատրաստ է նման գաղափարական փոփոխության, ինչ խոչընդոտների է հանգեցնելու բարձրագույն կրթական համակարգում ձեռք բերած գիտելիքների կիրառելիությունը դրանից դուրս գտնվող օղակներում, մասնավորապես՝ ընտանիքում, համայնքում, աշխատավայրում և այլն:

## 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 2.1 ԽՈՍՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ, ԱՌՕՐՅԱՅՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Դեռ հին ժամանակներից հասարակության մեջ ընդունված էր որոշել նրա անդամների տեղն ու դիրքը, պարտականությունները, և դա իրականացվել է գլխավորապես սեռային, ինչպես նաև տարիքային պատկանելության հիման վրա: Տարբեր հասարակություններում, այդ թվում՝ մեր, դրանք պահպանվել են մինչև մեր օրերը: Մեր իրականության մեջ դրանց պահպանմանը, կարծում ենք, նպաստել են սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակները, մշակույթը և այն պահպանող կառույցները:

Ինչպես վկայում են ազգագրական հետազոտական նյութերը, հայ ժողովրդի սովորույթային համակարգում կին թե տղամարդ դաստիարակվում էին իրենց դերին լիարժեք ծառայելու գիտակցությամբ: Հայ կինը պարտավոր էր հետևել ընդունված ավանդական որոշ չափանիշների՝ հնազանդություն, հավատարմություն, տնային աշխատանքների կատարման պատրաստակամություն, նոր ընտանիքի մշակութային միջավայրին հարմարվելու կարողություն և այլն: Կյանքն ընտանեկան խիստ պայմանների մեջ մշակել էր որոշակի սովորույթային օրենքներ, կանոնակարգումներ, որոնց հետևում էին սրբությամբ: Կինը մանկուց դաստիարակվում էր ընտանիքի շահերի պաշտպանության և հավատարմության ու ավանդույթների պահպանման, հնազանդության ոգով: Ի դեպ՝ կնոջ խոսքի սահմանափակումները բավական տարածված են եղել նաև մեր ավանդական մշակույթում և ունեցել են ամենից ծայրահեղ դրսևորումները, ընդհուպ մինչև չխոսկանության ավանդույթը<sup>3</sup>: Այն, որ ամուսնուն հնազանդվելը կնոջ կարևոր պարտականություններից մեկն էր, վկայում են ոչ միայն ազգագրական նյութերը, այլև կրոնական գրականությունը:

---

3 Լալայան, Եր., 2004, Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3:

### 2.1.1 Կանանց՝ որոշումների կայացմանը մասնակցության աստիճանը տնային տնտեսությունում

**Տնտեսական/կենցաղային բնույթի որոշումներ:** Կանանց<sup>4</sup> տնտեսական/կենցաղային որոշումներին մասնակցություն ունենալու դերակատարությանը սույն հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք երկու տեսանկյուններից՝ ըստ պատկերացումների, ընկալումների և ըստ տվյալ ընտանիքում առկա իրադրության: Որոշումների կայացմանը մասնակցությանն անդրադառնալու պատճառներից մեկն այն էր, որ ցանկանում էինք տեսնել՝ գրեթե բոլոր կենցաղային աշխատանքներն իրականացնող կանայք արդյոք մասնակցում են դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը, թե՛ ոչ: Միևնույն ժամանակ կանանց մասնակցությունը որոշումների կայացմանը դիտարկել ենք ըստ ամուսնական կարգավիճակի և ըստ ընտանիքում զբաղեցրած դերի:

Հետազոտության գրեթե բոլոր մասնակիցները դժվարանում են պատասխանել որոշումների կայացմանն առնչվող հարցերին: Վերջիններս հստակ կարողանում են ասել, թե տվյալ աշխատանքն ով է իրականացնում, իսկ թե ինչպես կամ ում կողմից է կայացվում այդ աշխատանքն իրականացնելու որոշումը՝ դժվարանում են պատասխանել: Պատճառներից մեկն այն է, որ, ինչպես արդեն նշեցինք, այդ ամենն ինքն իրեն է կազմակերպվում: Օրինակ՝ անհրաժեշտություն չկա, որ SS անդամներից ինչ-որ մեկը որոշում կայացնի, թե ով է լվանալու ափսեսները կամ լվացքն ու արդուկն անելու: Դրանք արդեն իսկ որոշված գործողություններ են. պետք է իրականացվեն կանանց կողմից:

Այն բոլոր դեպքերում, երբ զրուցակիցներն անգիտակցաբար պատասխանում են, որ կենցաղային որոշումները պետք է կայացնեն SS բոլոր անդամներով կամ ամուսիններով միասին, առավել մանրամասնելու ժամանակ պարզվում է, որ դրանք կրկին չեն վերաբերում, օրինակ, տան մաքրությանը. «*Կենցաղային հարցերում երկուսս*

4 Այս թեմայի մեջ գործածվող կին/կանայք, տղամարդ/տղամարդիկ հասկացությունները վերաբերում են միայն մեր հետազոտության մասնակիցներին:

էլ իրավունք ունենք, դրանք երկուսի որոշումն է՝ թե տղամարդ, թե կին... Այ՛, օրինակ, երեխաների հիգիենայի հարցը. ես եմ զբաղված դրանցով: Դե տղամարդը ինչ գործ ունի, դա իմ որոշելիքն է, որ երեխաները մաքուր, կոկիկ, չափավոր, լվացած, արդուկած, նորմալ ձևով դուրս գան տնից: Չեն ասի չէ՛ հայրը չի արել, կասեն՝ մայրը չի արել: Տան մաքրությունն էլ ես եմ պլանավորում» (Սարուխան, իգ., 38 տ., ամուսնացած):

Հետաքրքիր է այն փաստը, որ SS կենցաղային բոլոր աշխատանքներն իրականացնող կանայք, եթե տան առօրյային վերաբերող որոշումներ են կայացնում, օրինակ՝ ինչ եփել այդ օրը կամ երբ իրականացնել տան մաքրությունը, համոզված են, որ տան իշխանությունն իրենց ձեռքում է՝ «Մեր տանը մայրիշխանություն է տիրում» (Վարդենիս, իգ., 29 տ., ամուսնացած):

Տղամարդկանց դիրքորոշումը կանանց կողմից կայացվող որոշումների վերաբերյալ բաժանված է երկու խմբի՝ կամ դրանք գնահատվում են ոչ կարևոր՝ «Մաքրություն ա, լվացք ա, ըտե՛նց մանր-մունր բաներ» (Սարուխան, ար., 28 տ., ամուրի), կամ կինն իրավունք չունի կամ ի վիճակի չէ որոշումներ կայացնել, քանի դեռ իր ամուսինը ողջ է. «էտի պարտադիր տղամարդն ա, էտի կնիկը կյանքում չի ասում ըտե՛նց բան: Ես կարող ա մեռած լինեմ, նոր ինքը որոշի» (Շենավան, ար., 54 տ., ամուսնացած):

Կան ընդգծված դիրքորոշումներ, երբ կենցաղային որոշումները հստակ բաժանված են կնոջ և տղամարդու միջև, և մեկը չի կարող իրականացնել մյուսի դաշտին պատկանող որոշումները: Նման ընկալումները բնորոշ են և՛ արական, և՛ իգական սեռերի ներկայացուցիչներին. «Տղամարդու որոշումը կինը չի կարող կայացնել, կնոջն էլ՝ տղամարդը» (Սարուխան, ար., 28 տ., ամուրի): «Տղամարդը քիթը չմպցնի էդ եփել-թափելու մեջ» (Քանաքեռ-Ձեյթուն, իգ., 48 տ., ամուսնացած):

Ինչ վերաբերում է SS ներսում կանանց կողմից իրականացվող որոշումներին, ապա դրանք կայացվում են համատեղ՝ սկեսուրի



ունեցած դերի գերակշռությամբ: SS հարսի կարգավիճակ ունեցող կանայք հիմնականում չեն նեղվում այն հանգամանքից, որ որոշումները գերազանցապես կայացվում են իրենց սկետուրների կողմից. «*Ես մինչև էսօր էլ իմ կիսուրի կարծիքը հաշվի եմ առնում յուրաքանչյուր հարցում: Տնից դուրս գալուց պետք ա անպայման ասեմ. բա Կինից դուրս եմ գալիս, ես իմ մեծին չասեմ, ո՞նց կլինի: Ինքը կիսուր ա, ես՝ հարս, կապ չունի, որ ես արդեն 50 փարեկան եմ դառնում, ես եմ մեծացել, ինքը կարող ա պուճուրիկացել ա, ինքն էլ ա մեծացել» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 48 տ., ամուսնացած):*

Այսպիսով՝ համաձայն մեր հետազոտության մասնակիցների ընկալումների՝ SS-ում հստակ տարանջատված են կանանց և տղամարդկանց կողմից իրականացվող որոշումները: Կանայք կայացնում են որոշումներ հետևյալ գործողությունների և իրավիճակների վերաբերյալ՝ տան մաքրություն, սննդի պատրաստում, տան կահույքի տեղափոխում, տունը վերանորոգելիս որոշ դեպքերում տան պատերի գույնի ընտրություն և այլն: Այսինքն՝ այն ամենը, ինչ վերաբերում է տան «ներսի» գործերին: Տղամարդկանց կողմից իրականացվող որոշումներն են՝ զրուցակիցների բնորոշմամբ, «դրսի» գործերը, այդ թվում՝ գյուղատնտեսությանն առնչվող որոշումները: Ինչ վերաբերում է առևտրին, ապա այստեղ ևս նշվում է հստակ սահման. ամենօրյա, «փոքր» առևտրին վերաբերող որոշումները կայացնում են կանայք, ինչպես օրինակ՝ տվյալ օրվա սննդի պատրաստման համար անհրաժեշտ պարագաները, տնտեսական փոքր իրերը՝ լվացքի փոշի, ամանի հեղուկ և այլն, իսկ «մեծ» որոշումները՝ տղամարդիկ, այդ թվում՝ տան վերանորոգման համար անհրաժեշտ իրեր, ծմռան վառելիք, տեխնիկա, մեքենա և այլն: Նշենք մեկ հստակ տարաբաժանված որոշման մասին ևս՝ տեխնիկայի վերանորոգման նպատակով «վարպետի հետ պայմանավորվածություն ձեռք բերելը», միանշանակ, տղամարդու գործն է: Կինը տեղյակ է պահում ամուսնուն, և միայն վերջինս իրավունք ունի որոշում կայացնել և պայմանավորվել մասնագետի հետ:

Այդուհանդերձ, վերոնշյալ երևույթների մի մասի վերաբերյալ պատկերն այլ է Երևանի Կենտրոն համայնքում: Այս տարածքի

գրուցակիցների ընկալումները տարբերվում են և՛ գնահատականների, և՛ ընտանիքում որոշումների կայացման առումով: Նրանց ընկալմամբ՝ որոշումների կայացումը պայմանավորված չէ սեռով. «*Դա կախված ա մարդու խառնվածքից, թե նա ինչքանով ա պատրաստ իրա վրա վերցնի ընտանիքի պատասխանատվությունը: Սեռից չի կախված*» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):

Կենտրոն համայնքի գրուցակիցների շրջանում շատ թույլ է արտահայտված կին-տղամարդ տարբերակվածությունը որոշումների կայացման տեսանկյունից: Օրինակ՝ մարզային բնակավայրերում կինն է որոշում, որ լվացքի փոշին գնելու ժամանակն է, որից հետո այն կարող է գնել ինչպես կինը, այնպես էլ՝ քիչ դեպքերում տղամարդը: Մինչդեռ Կենտրոն համայնքում տղամարդիկ մասնակցում են նաև որոշումների կայացմանը. «*Հայրիկը տուն գալուց կարա որոշի, որ լվացքի փոշի չկար ու գնի*» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի): Նաև հակառակը, կանայք իրականացնում են այն որոշումները, որոնք մարզային բնակավայրերում համարվում են «տղամարդկային», օրինակ՝ համապատասխան մասնագետ հրավիրելը. «*Դե գիտես ոնց, նայած, ես էլ, Մարիամն էլ (նկատի ունի հարսին): Ես տանը չեմ լինում, կարող ա, ասենք, օրինակ, տելեվիզորն էր փչացել, էրեխեքը փոշեկուլի լարն էին պոկել, ինքը որոշում ա, զանգ ա տալի, վարպետ ա գտնում*» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):

**Կրթությանը վերաբերող որոշումներ:** Երեխաների կրթության վերաբերյալ որոշումների կայացման գաղափարական պատկերացումները փոքր-ինչ տարբերվում են առկա իրողությունից: Արական սեռի ներկայացուցիչների ընկալումների համաձայն՝ կրթության որոշման հարցերով պետք է զբաղվեն հիմնականում կանայք (ավելի հստակ՝ երեխաների մայրերը), և այդ ընկալումները նրանք իրագործում են առօրյա գործողություններում: Իգական սեռի ներկայացուցիչների մոտ ակնհայտ տարբերություն է նկատվում ընկալումների և իրականության հարցերում: Վերջիններս գտնում են, որ երեխաների կրթությանը վերաբերող որոշումները ծնողները պետք է կայացնեն հավասարապես: Մինչդեռ պատկերն այլ է հետազոտության

մասնակիցների շրջանում. երեխաների կրթության վերաբերյալ որոշումները, ինչպես նաև գործընթացը իրականացվում է գլխավորապես մայրերի կողմից, որոշ չափով՝ նաև տատիկների: Սակայն, այն կին զրուցակիցները, ովքեր գտնում են, որ տղամարդիկ նույնպես պետք է մասնակցեն երեխաների կրթությանը վերաբերող որոշումներին, շատ սահմանափակ են տեսնում տղամարդկանց կողմից իրականացվող այդ գործառույթը: Ընդ որում՝ տղամարդիկ պետք է ներգրավվեն որոշումների կայացմանը, երբ կանանց իշխանությունն այլևս չի գործում. *«Որ ես նստեցնում եմ սովորելու, ինձ չլսի, ամուսինս ասի, տղա ջան, որ մամադ ասում ա, ճիշտ ա ասում, նստի, սովորի»* (Կամո, իգ., 36 տ., ամուսնացած): *«Ինձ թվում ա, առավոտյան էրեխեն, որ դուրս ա գալի, մայրը պիտի հսկի էրեխուն. փենա՝ իրա դասացուցակը փեղն ա, փեղը չի, ինքը ինչ վիճակում ա: Էփի մայրն ա պատասխանաբար դրա համար: Անկարգ ըլնելիցն էլ ինչ-որ փեղ պիտի էրեխան հայրից քաշվի»* (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած):

Երեխաների կրթության հարցում կանանց առաջնային դեր ունենալու ընկալումը հասարակության մեջ այնքան խորը արմատներ ունի, որ այն դրսևորվում է նաև կրթական համակարգում՝ հատկապես միջնակարգ դպրոցում: Այն հարցին, թե արդյոք գործում է տղամարդ ծնողին դպրոց կանչելու մշակույթը՝ զրուցակիցը պատասխանում է. *«Դա հիմնականում լինում ա այն դեպքերում, երբ արդեն գազաթնակեփին ա հասել, ինչ-որ շատ լուրջ սխալ ա արվել»* (Կապան, իգ., 32 տ., ամուրի): Տղամարդկանց ներգրավում են երեխաների կրթության հարցում հատկապես այն դեպքերում, երբ պահանջվում են ֆինանսական ներդրումներ. *«Էփ հիմնականում կախված ա գումարի հետ, ծախսերի հետ, պարզ չի, որ հայրը»* (Դրախտիկ, ար., 31 տ., ամուսնացած):

Եթե տղամարդիկ մասնակցում են երեխաների կրթությանը վերաբերող որոշումներին կամ դրանց իրականացմանը, ապա խիստ սահմանափակ. դրանք հիմնականում ներառում են՝ դասապատրաստումից՝ շախմատը, և սպորտային հարցերը, եթե երեխան հաճախում է սպորտային խմբակների, ընդ որում՝ խոսքը վերաբերում է տղա երեխաներին:

Երեխաների կրթության հարցում նկատվում է նաև երեխայի սեռով պայմանավորված հստակ բաժանում. եթե տղա երեխաների կրթությամբ կարող են զբաղվել երկու ծնողներն էլ, ապա աղջիկ երեխաների կրթության հարցերով ավելի շատ պետք է զբաղվեն մայրերը. «Դե, ընդհանրապես, աղջկա համար կինն ա, միշտ մայրն ա զբաղվում... Ասենք՝ հարցեր կան, որ պետք ա մենակ կինը զբաղվի դրանով» (Ապարան, ար., 30 տ., ամուսնացած): «Երգի, պարի, ըփենց, ասենք՝ պարին հո ես չեմ խառնվի, պարի թե՛ չպարի: Մայրը ավելի լավ գիտի, կուգի, կարելի ա, թե չի կարելի... պարտադիր մայրը պիտի գնա ծնողական ժողովի, պարի փանի-բերի» (Ապարան, ար., 30 տ., ամուսնացած):

Իսկ ինչպե՞ս են պատկերացնում այս հարցը դեռ ընտանիք չունեցող երիտասարդները: Խնդիրը դիտարկել ենք նույն համայնքի երկու երիտասարդների շրջանում՝ միջնակարգ և բարձրագույն կրթությամբ: Այս պարագայում նկատվում է ընկալումների տարբերություն կրթական ցենզի առումով: Միջնակարգ կրթությամբ զրուցակցի պատկերացումները չեն համընկնում առավել տարածված ընկալումների հետ՝ մայրերը պետք է զբաղվեն դասապատրաստման և նմանատիպ աշխատանքներով, իսկ հայրերը պետք է ներգրավվեն միայն այն դեպքում, երբ կա լրացուցիչ կամ ավելի ազդեցիկ խստության կարիք. «Մայրերը հեղուկ են, որ դասերը նորմալ սովորեն, ուշադիր լինեն... փղամարդիկ են դեպքում, երբ երեխան մորը չի լսում: Հոր խստությունը ըրտեղ պետք կգա» (Դավթաշեն, ար., 28 տ., միջնակարգ կրթ., ամուրի): Մինչդեռ բարձրագույն կրթություն ստացած զրուցակցի ընկալումներն այլ են: Նրա կարծիքով՝ երեխաների կրթության վերաբերյալ որոշումները պետք է կայացնի՝ «Նայած ով ա խելացի. կարող ա հայրիկն ա ավարտած, կարող ա մայրիկն ա ավարտած» (Դավթաշեն, իգ., 26 տ., բարձրագույն կրթ., ամուրի):

Պետք է նշել մի բացասական երևույթի մասին, որն արտահայտված է հատկապես գյուղական համայնքներում: Երեխաների կրթությամբ ընտանիքում որևէ մեկը չի զբաղվում, քանի որ տղամարդիկ հիմնականում տանը չեն լինում, իսկ կանայք կարևորում են տան

կենցաղային գործերը. «Մաման (նկարի ունի իրեն) հազիվ եփի, թափի, լվանալ, հարդուկել, փան գործ: 6 երեխա հեշտ չէր: Էն ժամանակ ջուր չունեինք, կուխնյա, բաղնիս չունեինք, մեծ փուն, սաղ էս մեծ կնոջը (նկարի ունի սկեսորին) թողել էին իմ վրա, գնացել էին» (Շենավան, իգ., 55 փ., ամուսնացած): Իսկ որոշ դեպքերում ընտանիքի առավել կրտսեր երեխաների դասապատրաստմամբ զբաղվում են ընտանիքի համեմատաբար մեծ, սակայն անչափահաս և հիմնականում աղջիկ երեխաները. «Իմ աղջիկը որ առաջին դասարան գնաց, իրան ոնց որ բնածին փված լիներ: Հետո 2-րդ, 3-րդ դասարանից մյուսների հետ ինքը պարապավ: Ես ժամանակ չունեի, ամուսինս դուրս գործի էր, ես էլ հողամաս, անասուններ սաղ ես էի անում: Ես ժամանակ չեմ ունեցել, որ նստեմ, երեխեքով զբաղվեմ» (Շենավան, իգ., 55 փ., ամուսնացած):

Տղամարդիկ պատրաստ են իրենց վրա վերցնել կանանց կողմից իրականացվող գործառույթները միայն սահմանային իրավիճակներում. «Առավոտը շուր արթնացնել, նախաճաշ դնել՝ էփի չէ... եթե հիվանդ ա եղել, հիվանդանոցն ա եղել (նկարի ունի կինը), էփի ես արել եմ: Եթե հիվանդ պառկած ա, երեխուն պփի սփիպված ես անեմ, բայց ամեն օր՝ չէ, հայ ազգը էփի չէ» (Շենավան, ար., 54 փ., ամուսնացած):

Հետաքրքիր է, որ կին զրուցակիցները գտնում են, որ երեխաների կրթության հարցերով պետք է կանայք զբաղվեն: Այդ հարցում նրանք չեն տեսնում կամ չեն կարևորում տղամարդկանց դերը. «Այդպիսի հարց չկա, որ հենց միայն փղամարդիկ պետք է որոշեն» (Ամասիա, իգ., 29 փ., ամուսնացած): «Ես իմ վրա եմ վերցնում, որ իմ երեխաների բոլոր պարպականությունները իմ ուսերի վրա է եղել: Ու ես դա ճիշտ եմ գտնում» (Գյումրի, իգ., 51 փ., ամուսնացած): Ըստ կին զրուցակիցների՝ կանայք ավելի շատ պետք է զբաղվեն երեխաների կրթությամբ, քանի որ իրենք ավելի շահագրգռված են երեխաների ապագայով, քան հայրերը. «Մայրն ավելի է ուզում, որ իր երեխեն լավ թեքումով սովորի, ուսում առնի, քան հերը: Տղամարդիկ ըփենց չեն մտածում: ... փղամարդիկ կրթությունը չեն կարևորում» (Կամո, իգ., 36 փ., ամուսնացած):

Ինչպես կենցաղային որոշումների կայացման դեպքում, այս պարագայում ևս երեխաների կրթությանը վերաբերող որոշ հարցեր ծնողների կողմից դիտարկվում են որպես իրենցից անկախ. «*Դե, ուղղակի, եսիմ, էկավ իրա ժամանակը մանկապարտեզ գնալու, ըրենց չէինք էլ որոշել, ուղղակի գիտեինք, որ պետք ա գնար, ըրենց տվեցինք մանկապարտեզ: ...դե ճիշտն ասած չեմ հիշում որ մեզանից ինչ-որ մեկը նախածեռնել ա, ուղղակի, որ էրեխու տարիքն ա, մանկապարտեզ պիտի գնա ինքը*» (Ապարան, ար., 30 տ., ամուսնացած):

Երևանում, հատկապես Կենտրոն համայնքում, խնդրի մեկնաբանությունն այնքան սուր չէ, ինչպես մարզային բնակավայրերում: Այստեղ նույնպես հայրերը քիչ են զբաղվում կամ չեն զբաղվում երեխաների կրթության հարցերով և որոշ դեպքերում դրա պատճառահետևանքային կապը ևս նույնն է՝ տղամարդիկ ավելի զբաղված են: Սակայն նրանք գիտակցում են, որ նման մոտեցումը առողջ չէ, և պետք է հնարավոր մեխանիզմներ մշակել ընտանիքում՝ հայրերի ներգրավվածությունն այդ հարցում ավելի մեծացնելու համար: Ինչպես նաև նշում են, որ երկու ծնողներն էլ պետք է հավասարապես մասնակցեն երեխայի կրթությանը վերաբերող որոշումներին. «*Հավասարաչափ՝ մայրը, հայրը, եթե ընտանիքում էլ արդեն, ոնց որ մեր մոտ, տարիքով մեծ քույր, եղբայր (նկատի ունի չափահաս և բարձրագույն կրթությամբ), իրանք էլ, ինչո՞ւ չէ, որովհետև իրանք կարող ա ավելի մողեռն աշխարհայացք ունեն, կարող ա ինչ-որ բան ավելի լավ հասկանան*» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի):

Ներկայացնենք մի քանի ներգրավված դիտարկումների արդյունքներ, որոնց ժամանակ հնարավոր են եղել դիտարկել տվյալ ՏՏ-ում երեխաների կրթության վերաբերյալ իրավիճակներ:

*Ներգրավված դիտարկում 1.* Երբ երեխային, ինչպես ընդունված է մեր հասարակությունում, ՏՏ անդամներն առաջարկում/ստիպում են հյուրի ներկայությամբ կամ հյուրի համար արտասանել բանաստեղծություններ, նրան հուշում են միայն մայրը և/կամ տատիկը: Հոր լուռ ներկայությունը փաստում է այն մասին, որ նա ծանոթ չէ այն ստեղծագործությունների «ցանկին», որոնց տիրապետում են իր երեխաները (*Գյումրի*):

*Ներգրավված դիտարկում 2.* Դիտարկման ժամանակ մայրն էր անընդհատ զգուշացնում մեծ որդուն՝ համակարգչի առջև նստելու փոխարեն դասերով զբաղվել, իսկ ընկերների հետ խաղացող փոքր որդուն պարբերաբար զանգում էր և պահանջում տուն գալ, քանի որ դասերը չէր սովորել (*Սարուխան*):

*Ներգրավված դիտարկում 3.* Դիտարկման օրը, երբ երեխաները դասից տուն եկան, դասերի մասին միայն մայրը հետաքրքրվեց, դասընթացների ժամի մասին մայրն էր անընդհատ հիշեցնում, նա էր հորդորում երեխաներին դասընթացների գնալուց առաջ պատրաստվել: Աղջկան դաշնամուրի, իսկ տղային մաթեմատիկայի դասընթացների գնալուց առաջ առաջարկեց պարապել, հետո գնալ (*Ապարան*):

Եթե անգամ բանավոր զրույցներում նշվել է, որ հայրերը նույնպես մասնակցում են երեխաների կրթությանը վերաբերող որոշումներին, ապա ներգրավված դիտարկումների ժամանակ մենք ականատես չեղանք նման իրավիճակների:

**Գյուղատնտեսական բնույթի որոշումներ:** Գյուղատնտեսությանն առնչվող որոշումները դիտարկել իրականացվող գործողություններից դուրս գրեթե անհնար էր: Այդ պատճառով դրանց կանդիդատնանք համատեղ:

Զրուցակիցների շրջանում նկատվում է գյուղատնտեսական բնույթի որոշումների և իրականացվող աշխատանքների հստակ տարաբաժանում: Եվ հողագործական, և անասնապահական աշխատանքները բաժանված են կանանց և տղամարդկանց միջև: Կանայք որոշումներ են կայացնում առավել փոքր տարածք ընդգրկող մշակաբույսերի մասով՝ լոլիկ, վարունգ, գազար, կաղամբ և այլն: Դրանց մշակությամբ նույնպես զբաղվում են միայն կանայք: Իսկ մեծ հողատարածքների մշակությամբ զբաղվում են նաև տղամարդիկ՝ կանանց հետ միասին. «Գյուղում հիմնականում տղամարդիկ էլ, կանանք էլ նույն գործերն են անում: Ասենք, եթե տղամարդը բախչում մի բան անի, կինը միշտ օգնում ա: Եթե տղամարդն անում ա, կինն էլ պիտի անի» (*Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած*):

Զրուցակիցների ընկալմամբ՝ եթե կնոջ ֆիզիկական ուժը հնարավորություն է տալիս, ապա նա պետք է անի գյուղատնտեսությանն առնչվող բոլոր աշխատանքները: Հետաքրքիր է, որ կանայք նույնպես գտնում են, որ իրենք տղամարդկանց հավասար պետք է մասնակցեն գյուղատնտեսական աշխատանքներին. «*Եթե կինը չանի, տղամարդը մենակ է դառնում ո՞նց կանի*» (Շենավան, իգ., 75 տ., այրի):

Եթե դիտարկենք միայն որոշումների կայացման հարցը, ապա այդտեղ մեծ դերակատարություն ունեն տան մեծերը: Եթե անգամ նրանք չեն կարողանում մասնակցել դրանց իրականացմանը, ապա, միևնույն է, որոշում կայացնողը հիմնականում իրենք են. «*Ասել եմ՝ բալա ջան, էսքան կարտոլ անենք, էսքան լոբի անենք, էնքան քյալամ դնենք: Ես եմ ասել էսքան ժամանակ: ...ասեմ՝ էնքան տեղը պտի քյալամ անենք, սուս ու փուս իրար հետ պտի անենք, էլի: ...որ ջրելու լինի, ասելու եմ՝ չոր ա, բերեք, ջրեք: Սուս ու փուս կեթան, կկապեն, կբերեն*» (Շենավան, իգ., 75 տ., այրի): «*Օրինակ՝ իմ հորոխպոր կնոջը վերցնեմ. մեր զալոն ասում ա՝ պտի շապ անենք, Փայլոն (նկարի ունի իր հորեղբոր որդուն, զալոյի որդուն) ասում ա՝ պտի քիչ անենք, կամ հարսը: Զալոն ասում ա՝ չէ, պտի շապ ցանենք՝ ըստեղ ու ընտեղ: Իրա ասածն ա, ֆայո: Էպի մեծին հարգելով*» (Շենավան, ար., 54 տ., ամուսնացած):

Գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ որոշումների և իրականացվող աշխատանքների առումով կա միայն մեկ հստակ հարց, որով զբաղվում են, կարելի է ասել, գերազանցապես տղամարդիկ: Խոսքը տեխնիկայի հարցերով մասնագետի հետ պայմանավորվածություն ձեռք բերելն է: Այն համարվում է «տղամարդկային գործ»: Եթե մյուս աշխատանքների առումով տղամարդկանց բացակայության դեպքում դրանցով զբաղվում են կամ կարող են զբաղվել նաև կանայք, ապա այս դեպքում՝ ոչ: Եթե տանը մշտապես կամ ժամանակավոր չկան տղամարդիկ, օրինակ՝ արտագնա աշխատանքի են մեկնել, ապա դրանով զբաղվում են կամ տղամարդ, ազգականները, կամ համայնքի մեկ այլ տղամարդ. «*Բա հո կնիկը չի գնա, խոսա... կինն էլ կարա տեգորն ասի: Օրինակ՝ իմ տղեն անցյալ*



*դարի փունը չի էղել, իմ մեծ փղեն, իմ թռռներն են բերել... կնիկը էթա, խոսա, ամհոթ չի (Շենավան, իգ., 75 փ., այրի):*

Եթե աշխատանքների իրականացման ժամանակ կանայք պետք է հավասար մասնակցություն ունենան, ապա որոշումների կայացման առումով նրանց դերը զիջում է տղամարդկանց. *«Ավելի թեթև հարցերի որոշումներով պետք ա կանայք զբաղվեն, ավելի մեծ ու ծանր հարցերով՝ տղամարդիկ (Ամասիա, իգ., 29 փ., ամուսնացած):* Հետաքրքիր է, որ կանայք ևս թերագնահատում են որոշումներ կայացնելու իրենց հնարավորությունները՝ գտնելով, որ իրենք կարող են մասնակցել միայն ոչ կարևոր որոշումների կայացմանը: Նրանց կարծիքով՝ տղամարդիկ պետք է կատարեն *«...ավելի լուրջ գործերը, որոնցից կանայք գլուխ չեն հանում» (Ամասիա, իգ., 29 փ., ամուսնացած):*

Կանայք, հատկապես տան հարսները, շատ քիչ են մասնակցում գյուղատնտեսական ապրանքների վաճառքի հարցերին. *«Եթե ծախելու բան լինի, իրենք պիտի որոշեն: Եթե ես ասեմ ծախենք, ինձ կասեն (նկարի ունի հարկապես սկեսրայրին)՝ դու իրավունք չունես, դրա համար ես չեմ խառնվում ծախելուն» (Կամո, իգ., 36 փ., ամուսնացած):* Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական մեծ ապրանքների վաճառքով, օրինակ՝ անասուն, հող և այլն, զբաղվում են հիմնականում տղամարդիկ: Կանայք իրականացնում են ֆինանսական առումով ավելի ցածր արժեք ունեցող ապրանքների վաճառքը՝ կաթ, ձու, մածոն և այլն:

Շատ դեպքերում մեր զրուցակից կանայք կարծում են, որ եթե տվյալ մշակաբույսն աճեցնելու որոշումն իրենք են կայացրել, ապա դրա մշակությամբ պետք է միայն իրենք զբաղվեն. *«Հողամասում բաներ կա, որ պիտի կինը որոշի՝ ինչ ցանի, կանաչեղեն ա, լոբի, կաղամբ: Տղամարդը ինչ գիտի՝ ինչ կանաչիներ ա պետք, որ ցանի» (Շենավան, իգ., 33 փ., ամուսնացած):* Այսինքն՝ կինը չի կարող որոշել, իսկ տղամարդը՝ մշակել:

Ինչ վերաբերում է անասնապահությանն ու դրան առնչվող որոշումներին և գործողություններին, ապա այստեղ ևս կա աշխատանքի

բաժանում կանանց և տղամարդկանց միջև: Տղամարդկանց գործն է անասունին խոտ տալը, գոմը մաքրելը, կնոջ գործ՝ կթելը և կաթի վերամշակման աշխատանքները: Սակայն, ինչպես հողագործական աշխատանքների դեպքում, այստեղ ևս կանայք իրականացնում են նաև տղամարդկանց համար նախատեսված աշխատանքները, իսկ տղամարդիկ երբեք կիթ չեն անում (գոնե մեր հետազոտության շրջանակներում): Օրինակ՝ սասունցի տատիկի ընկալմամբ՝ «*Կնոջ գործ կթելնը, դղամարդը բղի անասունին իղը, դակն ալվը, աղբ թափը*» (Դավթաշեն, իգ., 79 տ., այրի): «*Դե էլի էդ անասունների հարցում ասեմ, տղամարդը խոտը բերա, ապահովա, կնիկն էլ թող հելնի մաքրա, քցա կերը, կթա, բերա էդ կաթը տնօրինա. այ էտի արդեն կնոջ գործա: Բայց նաև ասեմ, աղջիկ ջան, ես իրան օգնել եմ*» (Սարուխան, իգ., 63 տ., ամուսնացած):

Կթի իրականցման դեպքի ականատես ենք եղել նաև ներգրավված դիտարկման ժամանակ: Ապարանում ընտանիքի տղամարդը, հարգելով հյուրի ներկայությունը, իրականացրել էր անասունին վերաբերող բոլոր աշխատանքները, որը, սովորաբար, անում է նաև տան կինը: Սակայն կովին կթելու համար նա ընդհատեց հյուրի և իր կնոջ խոսակցությունը, որպեսզի վերջինս գնա և կթի: Չնայած ՏՏ-ն ուներ ընդամենը 1 կով, այնուամենայնիվ, տղամարդը չարեց այդ աշխատանքը (Ապարան):

Որոշ դեպքերում կանայք են ստանձնում իրենց սահմանմամբ «տղամարդկանց համար նախատեսված գործերը»՝ դա համարելով հպարտանալու առիթ. «*Ամենօրյա գործերը կանայք պտի անեն, այ, Վեռայի ամուսինը անում ա, բայց ես թույլ չեմ տվել, որ իմ ամուսինը անի, նա դպրոց ա աշխատել, ես թույլ չեի տա, որ նրանից հետո հոտ գար: Իրա ամուսինը տունն ա, ըտենց էլի, դասավորելու հարց ա: Հասկանում եք ինչումն ա խնդիրը: Իմ ամուսինն էլ կաներ, եթե էտա: Ինքը միշտ դպրոցում ա աշխատել, պտի իրանից հոտ չիգար, էլի: Ըտենց ասեմ: Ակուռատնի տնից դուր գար*» (Սարուխան, իգ., 63 տ., ամուսնացած): Մինչդեռ մեզանից յուրաքանչյուրը գիտի, որ գյուղական համայնքներում կին մանկավարժները միաժամանակ զբաղվում են

ն անասնապահությամբ, և՛ հողագործությամբ, ն մանկավարժությամբ:

**Ֆինանսական որոշումներ:** Քանի որ ֆինանսական որոշումների կայացման շրջանակը բավական ընդգրկուն է, բազմազան է նաև դրանում SS անդամների մասնակցությունը: Նկատելի են որոշակի տարբերություններ հատկապես ըստ բնակության վայրի՝ գյուղական և քաղաքային միջավայրեր, և ըստ ընտանիքի կառուցվածքի՝ երկսերունդ, եռասերունդ ընտանիքներ:

Մարզային բնակավայրերում կանայք հիմնականում մասնակցում են առօրյա որոշումների կայացմանը, այդ թվում՝ կենցաղային ապրանքների գնում, տվյալ օրվա սննդի ձեռքբերում, նաև՝ դպրոցում և մանկապարտեզում երեխաներին հատկացվող գումարների տրամադրում: Սակայն պատկերը տարբեր է այն ընտանիքներում, որտեղ ապրում են միայն ամուսիններով կամ իրենց երեխաների հետ միասին: Նման ընտանիքներում կանայք մասնակցում են ֆինանսական որոշումների մի փոքր ավելի մեծ շրջանակի, օրինակ՝ գույքի ձեռքբերում, տան վերանորոգում և այլն: Նշենք կարևոր մի փաստի մասին ևս. երևույթի վրա ազդեցություն ունի նաև անձի կրթական մակարդակը: Նման մի օրինակի հանդիպեցինք Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում, որտեղ միասերունդ ընտանիքում ամուսիններով գրեթե հավասար էին կայացնում իրենց ֆինանսական որոշումները: Մեր զրուցակցի ընկալմամբ՝ չկա այնպիսի մի որոշում, որը տղամարդը պետք է կայացնի միայնակ. անգամ մեքենայի վերանորոգման հետ կապված հարցերը քննարկում են կնոջ հետ միասին:

Ինչպես նշեցինք, գյուղական համայնքներում կանայք գրեթե չեն մասնակցում անասունի վաճառքին վերաբերող որոշումներին: Պարզվում է, որ նրանք չեն մասնակցում նաև դրա արդյունքում ձեռքբերված գումարի տնօրինմանը. *«Որ մենք ուզում ենք տրավար ծախսենք, իմ ամուսինը կծախի, գումարը կվերցնի, էլ գումարը կաշխատացնի մենակ ինքը, մենք չենք խառնվի: Կիսուրս կարող ա հարցեր տա, բայց մեկը ես՝ չեմ խառնվում: Հիմնականում փողը իրա ձեռքն ա»* (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):

Ներկայացնենք մի քանի դեպք, թե որոնք են համարվում տղամարդկանց կողմից կայացվող ֆինանսական որոշումներ, որոնք՝ կանանց. «Տան առօրյա ծախսերը պետք է որոշի կինը, հագուստը, փան համար անհրաժեշտ պարագաները՝ փնտեսական, սպասք» (Վարդենիս, իգ., 29 տ., ամուսնացած): «Ինչը վերաբերում է կուխնային» (Սարուխան, ար., 28 տ., ամուրի): Միայն տղամարդկանց կողմից կայացվող որոշումներ. «Ընդհանուր մեծ ծախսերը հոգան փղամարդիկ, գումար աշխատանք, ընդհանուր մեծ բիզնեսով զբաղվեն իրանք» (Վարդենիս, իգ., 29 տ., ամուսնացած): «Ընդհանրապես չվերաբերվող, ընդհանրապես դուրս հարցերը, ինչ-որ գործարք, առևտուր» (Սարուխան, ար., 28 տ., ամուրի): «Ավելի խոշոր բիզնեսի մեջ, եթե ուզում է ներդնի փող, ըստեղ արդեն փղամարդու խոսքը վերջնական է» (Դավթաշեն, ար., 28 տ., ամուրի): «Տղամարդու որոշելիքը, օրինակ, անասուն ծախելը, վարկ վերցնելը, ըստենց էլի: Օրինակ՝ ինչ-որ մեծ գործ անելը, էփի փղամարդն է անում, կինը ուզած-չուզած համաձայնության կգա» (Ապարան, իգ., 50 տ., ամուսնացած):

Դեռ չամուսնացած աղջիկների մոտ արդեն իսկ ձևավորված է այն ընկալումը, որ մանր, ոչ կարևոր հարցերով պետք է զբաղվեն կանայք, իսկ կարևոր հարցերով՝ տղամարդիկ. «Առօրյայի, փնտեսական, էփ մանր հարցերով կանայք, իսկ մեծ հարցերով՝ իհարկե փղամարդիկ: Մենք թույլ չենք փայլիս, որ էփ մանր հարցերով փղամարդիկ զբաղվեն, մենք ենք անում՝ ես, մայրիկս. օրինակ՝ օճառ առնեն: Տղամարդը կզբաղվի ավելի մեծ, կարևոր հարցերով» (Դավթաշեն, իգ., 26 տ., ամուրի): Այսինքն՝ այդ սովորույթը դարձել է առօրյայի սովորական մի մաս, կարծրատիպային ընկալում է գիտակցված դաստիարակության ու անգիտակից գործողությունների միջոցով փոխանցվում է հաջորդ սերունդներին:

Հետաքրքիր է նաև այն իրողությունը, որ հենց իգական սեռի ներկայացուցիչներն են մտածում, որ կնոջը գումար պետք չէ. «Դե գիտեք, գյուղի կանայք ամբողջ օրը փուն, փնային գործեր: Այսինքն՝ իրանց պետք չի լինում ծախս անել» (Դավթաշեն, իգ., 26 տ., ամուրի): Այս հարցում ևս տարբերվում են այն ընտանիքները, որտեղ տան բոլոր

անդամներն ունեն բարձրագույն կրթություն. «Ցանկացած ֆինանսական հարցում կանայք և տղամարդիկ պետք է հավասար որոշում կայացնեն, հավասար մասնակցություն ունենան: Մեր ընտանիքում էլ է այդպես: Ամեն առավոտ պապաս խանութ է գնում, իրեն սիգարետ առնելու, տան հաց, առաջնային բաներ՝ պետկ, կոֆե: Ես գործի եմ գալիս, մաման տան գործերով, պապան էլ առևտուրն է անում: Իսկ թե որ հացից առնեն կամ որ կոֆեից՝ միասին են որոշում մաման ու պապան: Չկան այնպիսի հարցեր, որոնց առումով մեր ընտանիքում միայն տղամարդիկ մասնակցեն կամ միայն կանայք, բացառությամբ անձնական հիգիենայի բաները, որ ամեն մարդ իր համար է առնում: Հագուստն էլ են միասին առնում» (Գյումրի, իգ., 26 տ., ամուրի):

Որոշ դեպքերում կանայք չեն գիտակցում, որ իրենք զրկված են ֆինանսական որոշումներ կայացնելու հնարավորությունից: Չնայած տան ողջ ֆինանսական որոշումները, ինչպես նաև տան ողջ բյուջեն տնօրինում է տղամարդը, սակայն կանայք այդ երևույթը մեկնաբանում են որպես հավասարություն. «Մեր տան փողը տղամարդու ձեռքն ա, պետք էղավ, կուզենք, կտա, կգնանք, կառնենք: Էս տան մեջ իմ ու քո չկա» (Շենավան, սկեսուրի հետ խոսելիս միջամտել է հարսը՝ հայտնելով իր կարծիքը):

Եռասերունդ, քառասերունդ ընտանիքներում ֆինանսական որոշումների կայացմանը հիմնականում մասնակցում են միջին տարիքի կանայք, ովքեր ունեն սկեսուրի կարգավիճակ: Համաձայն նրանց ընկալումների՝ իրենք համարվում են «լավ սկեսուրներ», եթե հարսի ձեռքին գումար չեն տալիս, սակայն նրա համար ձեռք են բերում անհրաժեշտ իրեր, այդ թվում՝ հիգիենայի պարագաներ. «Ամեն ինչ, ինչ-որ իրան պետքն ա: ...ոչ մի բանի կարիք չունի, էն քսվելիքից, մաշկից բռնած: Երանի իրա տրիմոն տենաս: Ես եմ առնում: Ինքը (նկատի ունի հարսը) ասում ա՝ մա, թանկ չի՞, 6000 դրամ դուխին, ասում եմ՝ ախչի, մի անգամ ես փչում, դուրս գալիս, 6000 դրամն ինչ ա, ջանդամին լինի» (Դրախտիկ, իգ., 56 տ., ամուսնացած):

Որոշ ընտանիքներում ընդունված է ունենալ «ընտանեկան բյուջե», որտեղ հավաքվում է SS բոլոր անդամների վաստակած գումարը:

Այն պահվում է տանը՝ ՏՏ անդամներից մեկի մոտ: Համաձայն մեր զրուցակիցների՝ «ընտանեկան բյուջեն» հիմնականում ՏՏ կնոջ ձեռքին է: Դրա մասին շեշտում են և կանայք, և տղամարդիկ: Սակայն կնոջ գործառույթը մեծամասամբ վերջանում է գումարը ֆիզիկապես պահելով. կինն իրավունք չունի դրա վերաբերյալ որոշումներ կայացնել և/կամ առանց տեղեկացնելու տնօրինել այն: Կանայք այդ բյուջեից օգտվելիս պետք է հաշվետու լինեն իրենց ամուսիններին՝ դա համարելով ճիշտ. «*Հա, գիտեք ոնց ա, այ, էփի, որ ավանդույթ ա, ես հաշվեգրու եմ ամուսնուս բյուջեի հետ կապված, ես չեմ կարա ինձ ավելորդ բաներ թողլ տամ*» (Դրախփոկ, իգ., 40 տ., ամուսնացած): «*Կարող ա ամուսինս բերի փողը, դնի, ասի էս թող մնա, որ ուզեմ, կտաք: Ըտենց էլ մնում ա, ես չեմ վերցնում-ծախսում: Եթե պետք ա լինում, հարցնում եմ: ...չի խոսա, եթե ես առանց հարցնելու վերցնեմ, բայց ճիշտը հարցնելն ա*» (Դրախփոկ, իգ., 33 տ., ամուսնացած): Նման մոտեցման պատճառներից մեկն այն է, որ ըստ կանանց, գումարը պետք է տնօրինի տղամարդը, քանի որ նրանք ավելի ճիշտ են կարողանում կազմակերպել և իրականացնել ֆինանսական որոշումներն ու ծախսերը. «*Իմ ընտանիքում ճիշտը էն է, որ ինքն է անում: Ես լավ գիտեմ իմ ամուսնու բնավորությունը, ավելի լավ ա՝ իրա ձեռքը լինի: Ես ծախսող չեմ, բայց ավելի լավ ա ինքը, որովհետև ինքը գիտի ինչ ձև փողը ղեկավարի: Ինչ-որ ժամանակ կիսուրի մոտ է եղել, 3-4 տարի կլինի, որ ամուսինս ա*» (Դրախփոկ, իգ., 33 տ., ամուսնացած): Մինչդեռ այս հարցի վերաբերյալ ընկալումները խիստ տարբեր են Կապան քաղաքում: Հատկապես կանայք կարծում են, որ իրենք պետք է մասնակցություն ունենան ընտանիքում կայացվող բոլոր որոշումներին: Նման ընկալումը բնորոշ է նաև չամուսնացած աղջիկներին, այսինքն՝ մինչև ընտանիք կազմելը իրենք արդեն պատկերացնում են իրենց ունենալիք դերը ընտանիքում. «*Ես կասեի՝ ամեն, բայց ամենը մի քիչ գլորբալ ա ստացվում: Բայց, օրինակ, եթե իմ ամուսինը ֆինանսական ինչ-որ մեծ ծախս անի, ինչպես կլինի, որ ես չիմանամ, չէ՞ որ բյուջեն ընդհանուր է: Պետք է համաձայնություն լինի՝ արժե այդ գումարը ծախսել դրա վրա, թե՛ չարժե: Ամեն դեպքում փոխհամաձայնությունն առաջնահերթ ա*» (Կապան, իգ., 32 տ., ամուրի):

Եթե SS բյուջեն կազմված է բացառապես նպաստից և/կամ թոշակից, դրա տնօրինումն իրականացվում է կնոջ (հարսի) կողմից: Դրա հիմնական պատճառները երկուսն են. նախ այդ գումարը լինում է շատ փոքր, և կինը կարող է այն տնօրինել: Երկրորդ՝ գումարը փոքր է, և պետք է ամբողջ ամսվա կտրվածքով բոլոր ծախսերն իրականացնել և «տեղավորվել» այդ գումարի մեջ: Եթե ընտանիքը թոշակ/նպաստից բացի ունի եկամտի այլ աղբյուրներ, ապա այդ դեպքում ևս կինը տնօրինում է միայն պետությունից ստացվող այդ ոչ մեծ գումարը. «*Կեսրարս թոշակը ստացել ա, ես գնացել եմ տուն, թոշակ չեմ տեսել: Իմ ձեռս չի տալիս իրա թոշակը: Խանութից արաղ ա, բան ա, վերայայ առնում ա, տարել էր, տվել էր: Ես չեմ տեսել: Իսկ ես նպաստը որ վերցնում եմ, լույսի, տնտեսական ապրանքներ եմ առնում: Ամուսինն էլ տարված ա ընկերներով, գումար որ լինում ա, գնում ա քաղաք ընկերների հետ: 10 տարի ա իմ կյանքը ըսենց ա» (Կամո, իգ., 36 տ., ամուսնացած):*

Որոշ ընտանիքներում առօրյա գնումները կատարելու նպատակով տղամարդը կնոջը չի տրամադրում անհրաժեշտ գումարը, այլ նրա հետ գնում է խանութ, կինն ընտրում է, թե ինչ է անհրաժեշտ գնել, իսկ ամուսինը՝ վճարում. «*Օրինակ՝ ես չեմ խառնվում ոչ մի հարցի: Ճաշերի համար, լվացքի համար ինչ ա պետք, ես եմ ընտրում, բայց գումարը ինքն ա տալիս: Եթե մեր խանութում էլ չի լինում, ամուսինս ուրիշ տեղից ա բերում: Մեր տանը ողջ ֆինանսական բյուջեն ամուսնուս ձեռքին ա, ինքն ա տնօրինում: Ըրենց դեպք դեռ չի եղել, որ ամսվա կտրվածքով ինձ գումար տրամադրի՝ ձեռքի ծախսի համար» (Շենավան, իգ., 33 տ., ամուսնացած):*

Այն դեպքերում, երբ տղամարդն է կայացնում ֆինանսական որոշումը և տնօրինում ողջ տնտեսության բյուջեն, նրա բացակայության ժամանակ (այս դեպքում խոսքը մի քանի ժամով տանից բացակայելուն է վերաբերում) կանայք դիմում են հատկապես գյուղական համայնքներում բավական արմատացած երևույթ դարձած մի միջոցի՝ համայնքի խանութներից պարտքով առևտուր անելուն. «*Պարտքով կբերենք, մինչև գա: Դավերյա ունենք խանութում. տալիս են, հետո կտանենք, կտանք» (Շենավան, իգ., 75 տ., այրի):*

Տղամարդկանց երկարատև բացակայության ժամանակ (և ոչ միայն բացակայության) ընտանիքի ֆինանսական որոշումները կայացվում է սկեստորի կարգավիճակ ունեցող կնոջ կողմից. «Գումարը ամուսնուս մոտ ատ. եթե ինչ-որ բան պիտի առնեմ, իրեն ասում եմ: Եթե ամուսինս պոստերում ատ, կիստորիս եմ ասում» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած): «Հարսին եթե գումար ատ պետք, եթե ամուսինը ստեղ ատ, ամուսինը հարսին բավարարում ատ ինչ-որ պետք ատ, իսկ եթե չէ, դե հատ, ինձ ատ ասում կամ կետարին» (Ապարան, իգ., 50 տ., ամուսնացած): Ինչպես տղամարդկանց դեպքում, սկեստորների կողմից ֆինանսական որոշումների կայացումը ևս տան հարսի կողմից համարվում է ճիշտ. «Մեր ընտանիքի գումարը տնօրինում ատ տրատիկը, քանի որ ինքն ավելի ճիշտ ատ ծախսում» (Վարդենիս, իգ., 29 տ., ամուսնացած):

SS-ում սկեստորի կարգավիճակ ունեցող կնոջ կողմից որոշումների կայացմանը ականատես եղանք ներգրավված դիտարկման ժամանակ: Երբ այնտեղ էինք, տղամարդիկ պետք է մեքենայով Գավառ գնային՝ ավտոմեքենայի համար ինչ-որ մաս գնելու: Սկեստորի կարգավիճակ ունեցող կինն էլ օգտվեց առիթից ու միացավ նրանց՝ հայտարարելով, որ պետք է միտ գնի և այլ ապրանքներ: Հարսն ընդհանրապես չմիջամտեց սկեստորի որոշմանը, չառաջարկեց որևէ բան գնել, սկեստորն էլ, իր հերթին, չհարցրեց հարսին, թե ինչ կցանկանա կամ ինչ կառաջարկի գնել: Ինչպես նաև SS անդամներից որևէ մեկը չառաջարկեց հարսին՝ միանալ իրենց (Սարուխան):

Նույն երևույթը նկատեցինք նաև Ապարանում: Ներգրավված դիտարկման ժամանակ տվյալ SS-ում անհրաժեշտություն առաջացավ հաց գնել. խանութ պետք է գնար տան անչափահաս աղջիկը: Հաց առնելու նպատակով աղջկան խանութ ուղարկեց տատիկը՝ նրան 1000 դրամ տալով: Երբ երեխան հարցրեց, թե ինչքան լավաշ պետք է գնի, մայրն ասաց, որ 1000 դրամը շատ է, և պետք է գնել 500 դրամի չափով: Վերջնական որոշումը կայացվեց սկեստորի կողմից՝ պետք է լավաշը հատով գնել՝ 10 հատ (Ապարան):



Դիտարկման ընթացքում ստեղծված իրավիճակները ցույց տվեցին, որ գնումներ կատարելու հարցում և, ընդհանրապես, որոշում կայացնելու հարցում հարսը լիարժեք ինքնուրույն չէ: Օրինակ՝ երբ ընտանիքում դիտարկողը բավական երկար ժամանակ էր մնացել, ոչ թե կինը, այլ տղամարդը սեղան զցելու առաջարկ արեց և միայնակ հյուրի համար մսեղեն գնելու և տուն բերելու որոշում կայացրեց: Երբ դիտարկողը հրաժարվեց ընթրելու առաջարկից, SS հարսը խոհանոցում երեխաներին էր կերակրում. ամուսինն ու սկեսուրը մի քանի անգամ գնացին խոհանոց, որից հետո հարսը ընթրիք պատրաստեց: Այսինքն՝ հյուրի համար ընթրիք պատրաստելու որոշումը կայացվեց ամուսնու ու սկեսուրի կողմից (*Գյումրի*):

Այս դեպքը ժխտում է խորին հարցազրույցների ժամանակ որոշ գրուցակիցների կողմից հնչեցրած այն կարծիքը, որ տան հարսի կարգավիճակ ունեցող կինն է կայացնում ամենօրյա սննդի պատրաստման որոշումը: Մինչդեռ իրականում (մեծամասամբ) նրանք իրականացնում են գործողության միայն ֆիզիկական կողմը:

Թե ինչպես են ընտանիքի անդամները տնօրինում գումարը՝ փորձեցինք դիտարկել երկու տարբեր մարզերի քաղաքային միջավայրերում: Այսինքն՝ ինչքանով է ճիշտ, որ SS բոլոր անդամների մոտ լինի որոշակի գումար, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանան ինքնուրույն որոշում կայացնել և տնօրինել այն: Քաղաքային համայնքներից ընտրել ենք ավանդական, պահպանողական միջավայրով Ապարան քաղաքը, և համեմատաբար ոչ կարծրատիպային ընկալումներով Կապան քաղաքը: «*Չէ, ըրենց տուն չի, ըրենց բան չկա, ըրենց չի մեր ընտանիքը*» (Ապարան, իգ., 50 տ., ամուսնացած)<sup>5</sup>: «*Գումարը և իմ մոտ ա լինում, և կիսուրիս, և ամուսնու: Ինչ-որ մի տեղ հավաքված չի լինում, չկա ըրենց տեղ, որ պիտի հարցնենք, վերցնենք*» (Կապան, իգ., 32 տ., ամուսնացած):

Նյութի վերջում անդրադառնանք կանանց մասնակցությանը ֆինանսական որոշումների կայացմանը Երևան քաղաքում: Պատկերն

5 Նշենք, որ պատասխանը հնչում է վիրավորված տոնով:

այստեղ այլ է. հարցի վերաբերյալ ընկալումները որոշ առումներով տարբերվում են մարզերի բնակիչների ընկալումներից: Նման տարբերություն նկատվում է և՛ կանաց, և՛ տղամարդկանց շրջանում: Եթե անգամ առօրյայում այն դեռ ամբողջությամբ չի կիրառվում, գոնե ընկալումների մակարդակում արդեն իսկ որոշակի փոփոխություն է նկատվում. «Բոլոր հարցերում էլ, ինձ թվում ա, որ կանայք պետք ա մասնակցեն: Սենց մի արտահայտություն կա, չէ՞, ցանկացած հաջողակ տղամարդու հետևում խելացի կին է: Իմ կարծիքով, կանայք ավելի լավ են տնօրինում գումարը, ամեն հարցում չգիտեմ, թեկուզ տուն գնելուց, մեքենա գնելուց, պետք ա հարցնեն կնոջը, բայց հայ հասարակությունում էդ էդքան էլ ընդունված չի» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 20 տ., ամուրի): «Ինձ թվում ա, որ Դուք էլ եք համաձայն, որ ֆինանսական հարցերը պետք է լուծվեն երկու ամուսինների մասնակցությամբ: Չկան հարցեր, որ մենակ կինը դա պետք ա լուծի, եթե, օրինակ, ինձ սա պետք ա, չեմ գնում-ասում՝ գիտես ամուսին, ինձ լվացքի փոշի ա պետք, գնամ առնեն, թույլ տալիս ես: Բայց յուրաքանչյուր գործողություն պետք ա երկու ամուսինների փոխհամաձայնությամբ լինեն» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 48 տ., այրի): Մեր ընտանիքում չի եղել տենց բան, որ ֆինանսական որևէ որոշում միայն տղամարդիկ կայացնեն, չեմ հիշում» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 48 տ., այրի):

Երևանի Կենտրոն համայնքում կանայք գիտակցում են, որ եթե տղամարդուն հավասար աշխատում և վաստակում են, ապա իրավունք ունեն նաև հավասար որոշումներ կայացնել. «Չէ, տենց բան չկա, որովհետև ես իրա հետք համարժեք փող աշխատող եմ» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված): Կենտրոն համայնքում բնակվող տղամարդկանց ընկալումներն այս հարցի վերաբերյալ նույնպես տարբերվում են. «Եթե հայրս, օրինակ, ինչ-որ մի հարս բան ասեց, որ սենց պետք ա լինի, չէ, մայրս հասկացավ, որ դա սխալ ա, քննարկեցին, պարզ ա, որ չի լինելու: Նենց չի, որ հայրս ասել ա, ուրեմն սենց էլ պետք ա անենք: Ո՛ր ընդհանրապես համարվում ա, որ տենց էլ պիտի լինի ճիշտը» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի):

Որոշ դեպքերում կանանց նկատմամբ կիրառվող վերահսկողական վերաբերմունքը և կնոջը որոշումների կայացման իրավունքից զրկելը հանգեցնում է ամուսնալուծությունների: Ուղղակի մեջբերենք զրուցակիցներից մեկի հետ ունեցած խորին հարցազրույցից մի հատված. «Իմ սկեսուրս բացարձակ թույլ չէր տալիս, որ մենք ինչ-որ մի հարց որոշեինք: Սկզբի տարիները, եթե ինչ-որ բան էր հարկավոր, կիսուրս պիտի առնեք, բերեք: Հետո էկավ մի պահ, երբ որ մենք առանձնացանք իրանցից, մեզ առանձնացրեցին, բայց էլի ոչ լիովին, որովհետև մուրաբերը մեր նույնն էր, ուղղակի առանձին սենյակ տվեցին մեզ, որպեսզի առանձին ապրենք, բայց իմ ամուսինը ոնց որ առանց իրա մամայի չկարողացավ: Ոչ թե չկարողացավ, այլ իրա մաման... Եթե մենք առանձնանայինք ու որպես նորմալ ընտանիք ապրեինք, իրա մաման թույլ չէր տա, որ ինքը գնար, իրանց հետ նստեր, մի բաժակ սուրճ խմեր: Եթե ասեր՝ մամ, մի բաժակ սուրճ էփի, կասեր՝ դու ունես քո ընտանիքը, գնա, կնոջդ դիմի, թող... Իսկ ամուսինս ոնց որ չէր ուզում էդ իրավիճակը ու ստիպված, ոնց որ, գնում էր անընդհատ իրանց հետ ու ես մնում էի անտեսված, ասենք՝ Նոր տարին անտեսված, մարտի 8-ը՝ անտեսված, ծնունդս՝ անտեսված: Էրեխեքի ծնունդին ինչ-որ առնում էր, տանում էր էստեղ, ես առանձին էստեղ մնում էի էլի անտեսված:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ինքը (նկատի ունի սկեսուրը) թույլ չէր տալիս ունեցածն օգտագործելի: Ասենք, էն ինչ-որ ինքը նվիրել էր ինձ, ես չէի կարողանում օգտագործել ընենց, ոնց որ ես ուզում էի: Ասենք, ես կարայի մտնել բաղնիք ափամներս լվանալու, ինքը մտնեք, ասեր՝ առավոտն են ափամները լվանում, իրիկունը չեն լվանում: Ինքը մտնում էր իմ հետևից, ասում էր՝ իրիկունը չեն լվացվում, առավոտն են լվացվում: Ինքն իրան նման բաներ էր թույլ տալիս, որ ես ուղղակի... Չգիտեմ:

Ասենք, ինքն իմ համար առնում էր մազերի մասկա, ես պետք ա օգտագործել էնքան, ինչքան որ ինքը սահմանել էր՝ մի ամիս էր սահմանել, դրանից շուտ չպիտի վերջանար էդ մասկան: Եթե վերջանար, ինքը չէր առնի: Ասենք, շաքարավազը հաշվում էր քանի սուրճի գդալ...

Իրանք ասենք, մի սուրճի բաժակին լցնում են կես գդալ, մի գդալը հաշվում էր 2 բաժակի համար ու լցնում էր քսան գդալ, ինքը գիտեր էր ինչքան սուրճի կգնա: Ու եթե վերջանում էր, վերջ, էլ ինքն էր ամանի մեջ շաքարավազ չէր լցնում: Իսկ ես իրավունք չունեի ման գայի, ասում էր՝ ինչ ես քրքրում ամանները:

Ինքն էր որոշում էր, թե ինչ ուրեհինք: Ինքը կարար ընենց բաներ թույլ փար իրան, որի մասին նույնիսկ ամոթ ա խոսալը: Ասենք, ինքը ուզում էր, որ փունը մաքուր լինի: Քանի որ հարս կա փանը, հարսը պետք ա մաքրությունը պահպանի, բայց ես պետք ա պահպանեի ընենց, ոնց որ ինքն էր ուզում: Ասենք, ժավելն առնում էր, չպիտի օգտագործեի փալասը սրբելուց կամ պղերը սրբելուց, որպեսզի ժավելը չվերջանար: Պետք ա առանց ժավել անեի: Նույնիսկ եթե ժավելով անեի, ինքն ուզում էր որ ես մաքրեի, բայց եթե իրանք մտնեին փուն, փեսնեին պղերը դեռ չի չորացել, իրանք մեկ ա, ըտենց ցեխոտ ոտքերով պետք ա անցնեին. հարս ես, սրբի: Ես էլ փեսնում էի, որ իրանց համար միևնույնն ա, մաքրում եմ, իրենք չեն ասում՝ ախր ցեխը ո՞ր ենք բերում թաց պղի վրա, հանենք կամ կչորանա, սեփական փուն ա, էլի գանք: Ես էլ մտածեցի, որ իրանց մաքրություն հարկավոր չի: Իսկ երբ որ ես չարեցի էր, մաքրությունը չպահպանեցի, ասեց՝ իմ հարսը անպիտանի մեկն ա:

Ես իրավունք ունեի քնելու մինչև ժամը 10-ը: Ես փանից դուրս եմ եկել, ինքը մտել ա, ամբողջ իմ սենյակով մեկ փակնուվրայա արել, որպեսզի փեսնի՝ որպեղ ինչ եմ պահում: Որպեսզի գտնի մի բան ու ասի, որ դու մաքրություն պահել չգիտես, որպեսզի քեզ ցածրացնի ցանկացած գնով» (Ապարան, իգ., 35 տ., ամուսնալուծված):

Այսպիսով՝ չնայած առկա որոշ բացառությունների, կանանց մասնակցությունն ընտանիքում կայացվող որոշումներին ունի հստակ պատկեր.

- **Ինչպես հետազոտության մասնակից կանանց, այնպես էլ տղամարդկանց կողմից SS-ում կայացվող որոշումներն ընկալվում են որպես ինքնըստինքյան կառուցվող, ինքնըստինքյան որոշվող:** Զրուցակիցները դժվարություն են ունենում

հստակ սահմանել, թե ինչպես է իրենց ընտանիքում կայացվում տվյալ որոշումը, օրինակ՝ արդյո՞ք երեխային պետք է տանել մանկապարտեզ, թե՛ ոչ, ի՞նչ պետք է պատրաստի ամենօրյա սնունդը, ի՞նչ պետք է իրականացնի տան մաքրությունը, ի՞նչ պետք է պայմանավորվածություն ձեռք բերի մասնագետի հետ և այլն: Այդ գործողությունները համարվում են հնուց ի վեր որոշված, և զրուցակիցները չեն տեսնում իրենց մասնակցային դերը դրանց ձևավորման և/կամ փոփոխման հարցում: Զրուցակիցների մեծ մասն անգամ իր առաջ երբևէ խնդիր չի դրել հասկանալ, թե ինչպես և երբ է ձևավորվել որոշումների և դրա հետևանքում իրականացվող գործողությունների նման բաժանումը:

- **SS-ում մի քանի սերնդի կանանց առկայության դեպքում հիմնական որոշումները կայացվում է սկեսուրի կարգավիճակ ունեցող կնոջ կողմից:** Որոշ դեպքերում սկեսուրների կողմից են կայացվում հարսի համար հիգիենայի պարագաներ գնելու և դրանք սահմանված ժամկետում օգտագործելու որոշումները:
- Այն բոլոր որոշումները, որոնք ընտանիքում կայացվում են տղամարդու կողմից, նրա բացակայության ժամանակ կայացվում են տան ավագ սերնդի կնոջ կողմից:
- Կանայք հիմնականում մասնակցում են միայն այն ֆինանսական որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են նեղ առօրեական խնդիրներին՝ այդ թվում ամենօրյա սննդի և տնտեսական ապրանքների ձեռքբերում կամ, զրուցակիցների բնորոշմամբ՝ «փոքր» որոշումների կայացում: Կանանց նման մասնակցությունն ընդունելի և ճիշտ է համարվում և՛ տղամարդկանց, և՛ կանանց կողմից:
- Զրուցակիցների ընկալմամբ՝ կանայք չպետք է մասնակցեն կամ չեն կարող մասնակցել «մեծ» կամ «կարևոր» որոշումների կայացմանը, օրինակ՝ մեքենայի կամ անշարժ գույքի ձեռքբերմանը: Առավել ևս, կանայք չեն կարող մասնակցել

բիզնես հիմնելու կամ որևէ ներդրում կատարելու վերաբերյալ որոշումների կայացմանը: Այն ընկալումը, որ կանայք չեն կարող մասնակցել ընտանիքում «մեծ» և «կարևոր» որոշումների կայացմանը, արդեն իսկ ձևավորված է նաև չամուսնացած կանանց մոտ: Այսինքն՝ այն արդեն փոխանցվել է նրանց ինչպես նպատակաուղղված դաստիարակության, այնպես էլ ոչ նպատակաուղղված գործողությունների արդյունքում: Վերջինիս դեպքում նկատի ունենք այն, որ երիտասարդ, դեռ չամուսնացած աղջիկներն իրենց ընտանիքում տեսնում են կնոջ դերը որոշումների կայացման հարցում, և դա նրանց կողմից «ճիշտ» է համարվում:

- Գյուղատնտեսական բնույթի որոշումների կայացման և գործողությունների իրականացման հարցում ևս կա հստակ բաժանում. տեխնիկային առնչվող բոլոր որոշումները կայացվում են միայն տղամարդկանց կողմից: Անընդունելի և ամոթալի է կանանց կողմից տեխնիկայի մասնագետի հետ խոսելը և պայմանավորվածություն ձեռ բերելը: Տվյալ ՏՏ-ում տղամարդկանց մշտական կամ ժամանակավոր բացակայության ժամանակ այդ հարցվող զբաղվում են կամ տղամարդ ազգականները, կամ համայնքի այլ տղամարդ բնակիչներ: Միայն կնոջ կողմից իրականացվող աշխատանք է կով կթելը:
- Երեխաների կրթությանը վերաբերող որոշումները հիմնականում կայացվում են կանանց կողմից: Զրուցակիցների ընկալմամբ՝ տղամարդիկ պետք է ներգրավվեն երեխաների կրթությանը վերաբերող որոշումներին այն ժամանակ, երբ պետք է սաստել երեխաներին՝ մորը չլսելու համար: Կրթությանը վերաբերող որոշումներին տղամարդիկ մասնակցում են հիմնականում երեխաների՝ բուհում ուսումը շարունակելու դեպքում, երբ անհրաժեշտ են լինում ֆինանսական միջոցներ:
- Նշված ընկալումները որոշ առումներով տարբեր են Երևանի, հատկապես Կենտրոն համայնքի զրուցակիցների մոտ: Վերջիններիս շրջանում տարածված է այն տեսակետը, որ կանայք պետք է մասնակցեն ՏՏ-ում կայացվող բոլոր

որոշումներին: Կենտրոն համայնքում բնակվող որոշ կին զրուցակիցներ գտնում են, որ եթե իրենք աշխատում և գումար են վաստակում, ապա իրավունք ունեն մասնակցել որոշումների կայացմանը: Կենտրոն համայնքում կանայք ընդունում են այնպիսի որոշումներ, որոնք գյուղական համայնքներում անընդունելի են, օրինակ՝ տեխնիկայի մասնագետի հետ պայմանավորվածություն ձեռք բերելը: Տղամարդիկ էլ մասնակցում են այնպիսի որոշումների կայացմանը, որոնք գյուղական համայնքներում միայն կանայք են անում, օրինակ՝ լվացքի փոշի գնելու կամ տունը փոշեկուլով մաքրելու որոշումների կայացումը:

- Փաստորեն, ընտանեկան որոշումների կայացման հարցում **կանանց ունեցած անհավասար մասնակցությունը** պայմանավորված է գործող **ավանդույթներով**: Ընդ որում, ըստ հետազոտության մասնակիցների, պետք է շարունակել պահպանել ավանդույթներն այն բոլոր հարցերում, որոնք վերաբերում են ընտանիքում կին-տղամարդ հարաբերություններին, ընտանեկան հարցերում կանանց և տղամարդկանց ունեցած դերին, ինչպես նաև երեխաներին վերաբերող հարցերին:

### 2.1.2 Կանանց մասնակցությունը համայնքային որոշումների կայացմանը

Անձի առօրյայի ձևավորման և կազմակերպման վրա մեծ ազդեցություն ունի նաև դրացիական, ազգակցա-արյունակցական համայնքը: Հաշվի առնելով դրանց լայն շրջանակը՝ մենք փորձեցինք դիտարկել կանանց՝ համայնքային որոշումների կայացմանը մասնակցության հնարավորություններն ու աստիճանը՝ հետևյալ հարցերի շուրջ.

1. Մասնակցում են արդյոք կանայք համայնքային որոշումների կայացմանը, թե՛ այն տեղի է ունենում միայն տղամարդկանց մասնակցությամբ:
2. Եթե կանայք մասնակցում են հանրային քննարկումների, ապա ճիշտ/ինչպիսի՞ հարցերի ժամանակ: Ինչո՞ւ հենց այդ հարցերի քննարկմանը:

3. Որ/ինչպիսի՞ն հարցերի քննարկմանը կանայք ընդհանրապես չեն մասնակցում: Ինչո՞ւ:
4. Եթե համայնքի կանայք մասնակցում են քննարկումներին, արդյո՞ք նրանց կարծիքը հաշվի է առնվում/կարևորվում քննարկումների ժամանակ:
5. Եթե կանանց մասնակցությունը քննարկումների ժամանակ սահմանափակվում է միայն ներկայությամբ, և նրանց կարծիքը հաշվի չի առնվում, ապա ինչո՞ւ են մասնակցում:
6. Ըստ գրուցակիցների՝ համայնքային ո՞ր որոշումներին, քննարկումներին պետք է մասնակցեն կանայք, որ այս պահին չեն մասնակցում: Ինչո՞ւ:
7. Ըստ գրուցակիցների՝ համայնքային ո՞ր որոշումներին, քննարկումներին պետք է մասնակցեն միայն տղամարդիկ: Ինչո՞ւ:
8. Ըստ գրուցակիցների՝ ովքեր են իրենց համայնքում հեղինակավոր/որոշումներ կայացնող երեք մարդիկ: Հարցադրման նպատակն է պարզել՝արդյո՞ք կան այդ մարդկանց թվում կանայք:

Համայնքային որոշումների կայացմանը կանանց մասնակցության վերաբերյալ ընկալումները և առկա իրավիճակը շատ տարբեր են: Գյուղական համայնքներում կանայք գրեթե չեն մասնակցում համայնքային կյանքին, որի պատճառները մի քանիսն են.

1. Հասարակական կարծիքը. *«Մեկը ես՝ կյանքում չեմ իջնի փղամարդկանց մեջ, ես ասեմ, չէ, չեմ անի: Համ էլ կասեն՝ Վարդուշի հարսը եկել ա, ելույթա ունենում: Որ նստում ես մի հատ ավտո, որ Սևան էթաս, ասում են՝ ըիրը, Լիաննան նստավ էս ավտոն, գնաց: Երեկ ես գնացել եմ, որ դեղերս բերեմ, աղջիկս ոտքը ջարդել ա, փարել եմ, որ գցեն փեղը, մեզի հեռու բարեկամ ա փարել: Երեկ եկել եմ փուն եմ մտել, գնացի հարևանի փուն, սաղ գիտեին, որ ես Կամոյի հետ գնացել եմ: Բախտս բերել ա, որ աղջիկս հետս ա եղել: Չնայած փարիքով մարդ ա, բայց դե ինչ ուզում ա ընի»* (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):



2. Տղամարդկանց արգելքը. «Տղամարդիկ թույլ չեն փախիս, որ կանայք խառնվեն էր գործերին» (Շենավան, իգ., 33 փ., ամուսնացած):
3. Տղամարդկանց կողմից անընդունելի լինելը. «Ես որ փենում եմ կանայք արդեն մտել են իրենց դերի մեջ, ես աշխատում եմ հեռու մնալ ըփտեղից: Կինը որ արդեն ինչ-որ լուրջ հարցի շուրջ պետք ա որոշում կայացնի, էդ մի քիչ էնքան էլ խելքին մոտիկ չի, որովհետքս փղամարդու մտածելը ասենք էդ հարցին իմեննը որ ինչ-որ բան կա, փղամարդիկ ավելի փեսած են, ավելի կողմնորոշվելու ունակությունը ավելի մեծ ա, քան կանանց» (Սարուխան, ար., 28 փ., ամուրի):
4. Երևույթի՝ ամոթալի դիտվելը. «Գյուղում կարող ա խայտառակ լինեն, ամոթ ա» (Շենավան, իգ., 33 փ., ամուսնացած):
5. Վախի մթնոլորտը. մարզային միջավայրերում, համաձայն հետազոտության տվյալների, եթե կանայք որոշում են բարձրաձայնել անարդարությունների մասին, կամ հենց իրենք վախ ունեն, կամ նրանց վախեցնում են համայնքի այլ անդամներ: Վախենալ ասելով՝ նկատի ունենք, որ տվյալ մարդուն հնարավոր է՝ վնասեն բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք: Մի քանի նման դեպքերի հանդիպեցինք. մեջբերենք դրանցից մեկը. «Մեր հայերի մեջ մի բարդ սովորություն կա. մի քանի փարի առաջ, որ քամին կփուրը փարել էր (նկատի ունի իրենց կփուրը), մի քանի կանայք էկան հրապարակ, ես էլ էրեխուս հեփ գնացի, փոքր էր: Ասին՝ դու էրեխուն գրկի, արի, ցույց փուր, ասա, որ իմ էրեխեն փոքր ա, փունը ցուրտ ա: Ըփտեղ էդ պահին ղեկավարներին շափ փիս եմ կպել: Գնացի-նք, շենքի կանայք լրջացան, չխոսեցին, ես արդեն ընկա մեջ: Վերջում ասեցի, որ գլխավորը վերևում չի թողնում ապարանցիներին օգնեն: ...Ավարողը ասեց՝ ախչի, հեսա կեթասս, կրոնեն, կփանեն քեզ» (Ապարան, իգ., 50 փ., ամուսնացած):

Սակայն պետք է նշել, որ զրուցակիցները կտրուկ չեն արտահայտվում այն հարցի մասին, թե արդյոք կանայք ևս պետք է մասնակցեն

համայնքային քննարկումներին կամ զբաղեցնեն պաշտոններ. «Ընչի պետք ա մենակ տղամարդիկ անեն: Ամեն հարցն էլ կարա կնիկն անի» (Դրախտիկ, իգ., 56 տ., ամուսնացած): «Որ կին թեկնածու լինի գյուղում, չեմ նայի, որ կին ա, կընտրեմ: Ավելի լավ» (Շենավան, իգ., 75 տ., արի): «Եթե կին էլ լիներ, լավ կլիներ: Օրինակ՝ դպրոցներում կանայք շատ են: Եթե գյուղապետի կին թեկնածու լիներ՝ կընտրեի: Կինը կարող ա ավելի լավ ղեկավար լինի: Իմ հորքույրը Լուսակերտի գյուղտնտեսի նախագահ ա եղել, 20 տարի ղեկավարել ա, ուրեմն լավ ա ղեկավարել» (Շենավան, իգ., 55 տ., ամուսնացած):

Հետաքրքիր են այս հարցի վերաբերյալ տղամարդկանց ընկալումները: Այն տղամարդիկ, ովքեր դրական են արտահայտվում համայնքային, հասարակական կյանքում կանանց մասնակցության հարցին, չեն տեսնում այդպիսի կնոջը իրենց ընտանիքներում և համայնքում: Այդպիսի կնոջը բնորոշող մեկնաբանություններում հիմնականում նշվում է կնոջ խելացի և «նորմալ» լինելու հատկանիշները. «Իհարկե եթե նոռմալ կին ըլնի, հասկացող կին ըլնի, գրագետ կին ըլնի, էն էլ կարա անի» (Ապարան, ար., 50 տ., ամուսնացած): «Դուք կաջակցեք կին թեկնածուին» հարցին զրուցակիցը պատասխանում է, «Եթե զգամ՝ նորմալ ա, հաստատ» (Շենավան, ար., 54 տ., ամուսնացած): Այսինքն՝ տղամարդիկ կարող են կոտրել իրենց մեջ եղած այդ կարծրատիպը, եթե հարցն առավել գլոբալ է և դուրս է իրենց նեղ ընտանեկան միջավայրից:

Երևույթի վերաբերյալ առանձնահատուկ մոտեցում նկատեցինք Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում: Համայնքը 1988 թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնազաղթված և Արծվաշեն գյուղից տեղահանված հայերով: Համայնքում կանայք չեն մասնակցում համայնքային քննարկումներին, սակայն իրենց կարծիքը հայտնում են իրենց տան տղամարդկանց, ովքեր էլ դրա մասին բարձրաձայնում են համայնքում. «Իրանց միտքը արտահայտում են իրանց մտերիմ տղամարդկանց, դա, ասենք, կըլնի տղեն, ամուսինը, իրանք էլ գնում, ընտրել են ասում» (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած): «Եթե քննարկումը գյուղի կոնկրետ կենտրոնում ա, հաստատ չեն մասնակցում:

Իսկ եթե էլ պահին ինչ-որ փան մեջ ա, սաղ էլ մասնակցում են: Օրինակ՝ նստած ենք, ասենք, որոշենք՝ վաղը էս ծրագիրը անենք, ոնց անենք, որ լավ լինի, ում ասած, որտեղ արած: Քննարկվում ա: Կարաքո կինն էլ մասնակցի, ինքն էլ ասի, որ էս մարդուն ասենք: Բայց եթե համայնքի մեջ ա, ինքը հաստատ չի գալու մասնակցի» (Դրախտիկ, ար., 31 փ., ամուսնացած):

Կանանց մասնակցությունը համայնքային հարցերին զրուցակիցները տեսնում են հիմնականում կրթության ոլորտում: Դրա պատճառներից մեկն այն է, որ հայ իրականությունում մանկավարժները մեծամասամբ կանայք են. «Մանկապարտեզներում, օրինակ, հաճելի ա, որ փնտրենք կին ա, աշխատողները սաղ կին են: ..դե կինը, ասենք, եսիմ, էրեխեքի հետ պվելի լավ կլնի, ավելի լավ կվերաբերվի, ավելի լավ կհասկանա» (Ապարան, զրույցին միջամտում է զրուցակցի կինը): «Ինձ թվում ա էդ մանկապարտեզային, բոլոր էն դեպքերում, երբ հարցը վերաբերում է երեխաներին, կանանց կազմակերպվածությունը մի քիչ ուրիշ ա՝ որպես մամայական փեսակետով, էլի: Ինձ թվում ա, կանաց միջամտությունը ավելի ճիշտ կլինի» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 48 փ., այրի): Կենտրոն համայնքում այդ նույն երևույթի վերաբերյալ ընկալումներն այլ են: Սխալ է համարվում այն միտքը, որ ուսումնական հաստատությունները միայն կանանց տեղն են. «Չէ, մեր մոտ դա էդպես ա ավելի (նկատի ունի, որ դպրոցում հիմնականում կանայք են աշխատում), բայց երևի ցանկալի ա՝ էդպես չլինի, բայց մեր մոտ էդպես ա, համարում են, որ հա, դե լավ ա, կանացի գործ ա, հանգիստ գործ ա: Հետո մեր ռաբիզ փոխարդկանց մտածելակերպն էլ էնա, որ ընդեղ քիչ փոխարդ կա, ընդեղ կինը կարող ա գնա աշխատի: Հա, որ իրանք խանդելու իբր բան չկա, ասենք՝ ընդեղ մի հատ փնտրեվար ունեն, որ 80 փարեկան մի հատ պապիկ ա կամ պարտեզում վերերան ա, շափ-շափ ֆիզկուլտի դասատուն ա, որը չի հասցնի ամբողջ կանանց կոլեկտիվին ուշադիր լինի, դրա համար փոխարդիկ համարում են, որ իրա կինը լավ տեղ ա աշխատում, եթե ինքը դասատու ա, բայց ասեմ, որ դա կատարատրոֆայի սկիզբն ա» (Կենտրոն, իգ., 58 փ., ամուսնավուծված):

Կան համայնքային որոշումներ, որոնք պետք է կայացվեն միայն տղամարդկանց կողմից. «Օրինակ՝ այսօրեղ կա կոյուղու վերանորոգում, կոյուղու մաքրում, բազմաբնակարան շենքերի փանհիքները փոխելու հարցեր. դրանք որոշում են տղամարդիկ: Նենց չի, որ կանանց մի հատի խումբ կա, որ վեր կկենան, կգնան, կորոշեն, որ պետք ա փոխվեն մեր փանհիքները: Հիմնականում տղամարդիկ են որոշում այդ հարցերը» (Վարդենիս, իգ., 29 տ., ամուսնացած): «Ենթադրենք՝ գյուղապետարանը որոշում ա էս ինչ տեղը գնալ, ինչ-որ բան կառուցել կամ չգիտես ինչ, կամ դուրս գան մի տեղ շրջագայություն ա, բան ա, երևակայի՝ տենց հարցերում կանայք մեջ չեն ընկնում» (Սարուխան, իգ., 38 տ., ամուսնացած): «Օրինակ՝ բիզնեսի բնագավառում իրանք (նկատի ունի կանայք) ընդհանրապես չեն մասնակցում, համ էլ առևտրի ոլորտում: Դա համարվում ա տղամարդու գործ և վերջ» (Շենավան, կնոջ հետ անցկացվող զրույցին միջամտում է ամուսինը): «Գյուղի մաքրության, ասֆալտապատման, լուսավորման, բարեկարգման հարցերում տղամարդիկ մեծ դեր ունեն, տղամարդկանց գործն ա» (Դավթաշեն, իգ., 54 տ., ամուսնացած):

Հետաքրքիր մոտեցում է այն, որ ժամանցի վայրերի տեղի և ձևի ընտրությունը նույնպես համարվում է տղամարդկանց կողմից կայացվող որոշում: Ինչպես կտեսնենք այս աշխատանքի հաջորդ մասում, դրա պատճառներից մեկն այն է, որ եթե գյուղական համայնքներում առկա են ժամանցի վայրեր, ապա այնտեղ հաճախում են միայն տղամարդիկ: «Թե ինչ ժամանցի վայր կառուցեն, էտի պտի տղամարդիկ զբաղվեն» (Շենավան, իգ., 33 տ., ամուսնացած):

Այս դեպքում ևս մարզային քաղաքներում հարցի վերաբերյալ ընկալումները փոքր-ինչ տարբեր են բարձր կրթական ցենզ ունեցողների շրջանում: Թե ինչքանով են դրանք կիրառական դառնում, դժվար է գնահատել, սակայն դա նրանց մտածելակերպն է. «Կինն էլ, տղամարդն էլ նույն մտածելակերպն ունեն: Կարա կինը ընենց մի բան ասի, որ կյանքում տղամարդը չի կարա նման խելացի բան ասի: Կախված ա մարդու մտածելակերպից, ուղեղից, կրթությունից, շփումից: Ոնց կարաս իրա կարծիքը հաշվի չառնես, կապ չունի քո

կինն ա, թե ուղղակի կին ա» (Դրախտիկ, ար., 31 տ., բարձրագույն, հաշվառում-աուդիտ, ամուսնացած): «Դե, կան բաներ, որտեղ պեպք ա հաշվի առնել նաև կանանց խոսքը, կարող ա փղամարդը էդքան չկարողանա մտածել էն ձևով, ինչ-որ կինն ա մտածում: Ինձ թվում ա՝ կանայք ավելի հեռուն են մտածում, քան տղամարդիկ, որովհետև կանանց մեջ ավելի... չգիտեմ, նրանց մեջի նստվածքը, մտածելակերպը, վարվելաձևը, հոգեբանությունը կարելի ա նաև հաշվի առնել: Տղամարդիկ այլ կերպ են մտածում, կանայք՝ այլ: Եվ կան հարցեր, նույնիսկ ընդհանրում էլ, որ երբ կինն ա խոսում, կարող ա երկմտանքի փոփոխ փա, և իրականում կնոջ դերն ավելի շար լինի, կնոջ խոսքն ավելի պարզ ու հստակ լինի, քան տղամարդունը, որոշիչ լինի» (Սարուխան, իգ., 38 տ., բարձրագույն, բանասեր, ամուսնացած):

Հասարակական կյանքում կանանց մասնակցությունը համեմատաբար ակտիվ է Գյումրիում և Կապանում: Սակայն տարբերությունն այն է, որ Գյումրիում հիմնականում ակտիվություն են ցուցաբերում երիտասարդները և պատանիները, իսկ Կապանում տարիքային խումբն առավել լայն շրջանակներ ունի, ինչը վկայում է, որ Գյումրիում նոր-նոր է հաղթահարվում կարծրատիպային մոտեցումն այդ խնդրի վերաբերյալ: Մինչդեռ Կապանում ընկալումներն ու մոտեցումները նույն երևույթի վերաբերյալ շատ ավելի վաղ են հաղթարահվել: «Վերջին շրջանում փողոցներում արձաններ դնելու հետ կապված քննարկումներ եղան, ու դուրս շար եկավ, որ ջահել աղջիկները ուղղակի դեմ կանգնեցին իրենց փարիքի երիտասարդների հետ, թույլ չտվեցին դա անել, որովհետև ասեցին, որ դուք ձեր կյանքն արդեն ապրել եք, սա մեր քաղաքն է, ուրեմն պիտի այսպես լինի: Թույլ չենք փա, որ քաղաքը լցնեն արհեստական արձաններով: Ու հասան հաջողության: Ու իրենք տղերքի հետ հավասարապես ելան, պայքարեցին» (Գյումրի, իգ., 40 տ., ամուսնացած): «Հիմա պապաներն էլ ավելի ազատ են մտածում, թույլ են տալիս իրենց աղջիկներին պայքարել: Եթե ես իմ ժամանակի հետ համեմատեմ, չեմ պարկերացնում, որ ինձ պապա թույլ տար՝ ես գնալի ցույց: Ինձ անգամ Երևան չթողեցին սովորելու: Բայց էն ժամանակվա մտածողությունից անցել է արդեն 25 տարի» (Գյումրի, իգ., 40 տ., ամուսնացած): «Ես նախընտրում եմ, որ և՛

տղամարդիկ մասնակցեն, Ա՛ կանայք» (Կապան, իգ., 32 տ., ամուրի): «Ինձ թվում ա՛ հաշվի առնվում ա, 50/50՝ տղամարդ-կանայք: Չեմ կարծում, որ մեր համայնքում ըստենց շատ ավանդապաշտ տղամարդկային բաներ են: Երևի բոլորին էլ հարգում են: Ես, կին լինելով, ոչ մի անգամ չեմ նկատել, որ խտրականություն լինի կնոջ-տղամարդու մեջ: Ասենք, որ կին ես ասեն՝ գնա, սա քո գործը չի» (Կապան, իգ., 32 տ., ամուսնացած): «Օրինակ՝ ելույթներ ենք տեսնում, որ քաղաքապետարանի կանայք շատ ռիսկով, հաճույքով իրենց կարծիքն ասում են, կաշկանդվածություն չենք տեսնում, մարզպետարանում կրթության բաժնի ղեկավարը կին է, ազատ մտնում-խոսում» (Կապան, իգ., 32 տ., ամուրի):

Մայրաքաղաքում քննվող երևույթի վերաբերյալ ընկալումները և դիրքորոշումները տարբերվում են մարզային բնակավայրերից: Ի տարբերություն մարզային բնակավայրերի, որտեղ կնոջ մասնակցությունը հանրային, համայնքային կյանքում տեսնում են գլխավորապես կրթության ոլորտում, Երևանում այդ շրջանակը բավական լայն է և ընդգրկում է առավել մեծ ոլորտներ. «Օրինակ՝ Հայաստանում կանանց գաղութում բանտապանները բոլորը տղամարդիկ են, լավ կլինի, որ կանայք էլ լինեն: ...անգամ կին վարորդներ եմ տեսել Յանդեքսում և Ջիջի-ում: ...դեմ չեմ, եթե կինը ֆինանս ա բերում, թող աշխատի» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 20 տ., ամուրի): «Հիմա ցույցերին կանայք շատ են գնում, տղամարդկանց հետ հավասար պայքարում են. էդ իմ կարծիքով լավ ա: Կանայք հիմա քաղաքական (նկատի ունի քաղաքականություն) շատ են գնում. էն ժամանակ ընդունված էր, որ իրավաբանները տղամարդիկ պետք ա լինեն: Եթե համալսարաններում ենք նայում, հիմա էդ բաժիններում, թեկուզ միջազգային հարաբերություններում, աղջիկ ուսանողներն ավելի շատ են: Իմ կարծիքով՝ էդ նրանից ա, որ հիմա իրենք էլ են դրան ձգտում, ղեկավար պաշտոնների են ձգտում, ինձ թվում ա՛ կլինեն հետագայում» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 20 տ., ամուրի):

Կենտրոն համայնքում ոչ թե քննարկում են՝ արդյոք կանայք պետք է մասնակցություն ունենան համայնքային որոշումներին, թե՛ ոչ, այլ

քննարկում են, թե որքանով են հասարակական, քաղաքական կյանքի մեջ ներգրավված կանայք իրենց ճիշտ դրսևորում: Կարծես թե Կենտրոն համայնքում երևույթը խնդրահարույց չէ, և մասնակցությունը որոշումներին բնորոշվում է ոչ թե սեռով, այլ արժեքային հատկանիշներով: Կենտրոն համայնքի գրուցակիցները ոչ միայն խոսում են խնդրի մասին, այլև տալիս են դրա վերաբերյալ իրենց մեկնաբանությունը, օրինակ այն, որ որոշումների կայացմանը մասնակցելու նման բաժանումը կանանց և տղամարդկանց միջև պայմանավորված է սերնդային տարբերությամբ. «Ճիշտն ասած՝ մի քիչ ավելի մեծ սերնդի մոտ, իմ կարծիքով, օրինակ, համացանցով տեսնում եմ, մեծամասնությունը տղամարդիկ են որոշումներ կայացնողների մեջ: Բայց չեմ կարա նույնը ասեմ իմ տարիքի մասին» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի): «Օրինակի համար կարամ ասեմ էն, ինչ-որ ես եմ տեսնում հիմնկվա ֆինանսական ոլորտում շատ են կանայք ու 30-40 անց, ու իրանք շատ մեծ դերակատարում ունեն այնպեղ ու բարձր պաշտոններ են զբաղեցնում ու շատ խելացի են: Այսպեղ անհավասարաչափ եմ տեսնում, իսկ ՀԿ-ներում ավելի շատ կանանց եմ տեսել ես, ավելի բարձր պաշտոններ զբաղեցրած: ...օրինակ՝ մեր մոտ, որտեղ ես եմ աշխատում, ընդեղ տնօրենը տղամարդ ա, տնօրենի տեղակալը կին ա, բայց իրանց խոսքը հավասարաչափ լավում ա: ...չէ, տենց չեմ կարա ասեմ, որ կա ոլորտներ, որ հենց տղամարդկանցն են, անհատապես եմ ես մի քիչ դատում, եթե ավելի լավ մասնագետ ա կինը սպեղ կապ չունի, ինքը կարող ա լավ ինժեներ լինի, որովհետև սովորել ենք մենք, որ պիտի տղամարդը ինժեներ լինի, բայց այս կինը ավելի լավ ա էղ գործը անում, ինքը պետք ա անի էղ: ...պետք ա սառը նայենք, ոչ թե ռադիկալ խորանանք, որ պետք ա հավասարություն լինի, հավասարություն պետք ա լինի անձանց միջև, այսինքն՝ ես տենց եմ նայում էղ հարցին: Եթե դու ավելի լավ մասնագետ ես, պետք ա ստանաս քո որակավորմանը հավասարաչափ աշխատանք» (Կենտրոն, ար., 21 տ, ամուրի):

Համայնքին վերաբերող հարցադրումների վերջում անդրադառնաք, թե, ըստ գրուցակիցների ընկալումների, ովքեր են իրենց համայնքում հեղինակավոր/որոշումներ կայացնող երեք մարդիկ: Հարցադրումն

ունեցել է երկու հիմնական նպատակ. Նախ՝ տեսնել, թե արդյոք այդ մարդկանց շարքում կան կանայք, և ինչ կարգավիճակ ունեն նրանք, և երկրորդ՝ ինչ բնութագրիչներ են կիրառվում տղամարդկանց և կանանց նկարագրելիս: Այսպես, թվարկվածների շարքում նշվել է 9 կնոջ անուն: Ըստ ունեցած կարգավիճակի՝ նրանցից 5-ը մանկավարժներ են, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ հասարակությունը կնոջը գլխավորապես տեսնում է կրթական համակարգում:

Հետաքրքիր է արձանագրել այն փաստը, որ, որպես հեղինակավոր տղամարդիկ, գրուցակիցների կողմից ամենից հաճախակի նշվել են համայնքի ղեկավարները: Տղամարդկանց բնորոշող հիմնական բնութագրիչներն են՝ առաջնորդ, մեծահոգի, կազմակերպիչ, խստապահանջ, ժողովրդական, հարգալից: Այդ տղամարդիկ համարվում են հեղինակավոր, քանի որ իրականացրել են հետևյալ գործողությունները. գումարով օգնում են մարդկանց, ոստիկաններին չեն թողնում մտնել գյուղ, իրականացրել են համայնքի ճանապարհների բարեկարգում և այլն: Կանանց հարգում են, քանի որ նրանք խելացի են, հաճելի, աշխատասեր, հարգալից և լավ մասնագետ են:

Այս հարցում ևս ընկալումները տարբեր են Երևանում: Նախ Երևանում դժվարանում էին նշել նման մարդկանց, քանի որ «համայնք» հասկացությունն այստեղ ավելի լայն է: Մարդկանց նշելիս կարևորվում են ոչ թե անձնային հատկանիշները կամ շահադիտական մոտեցումները, այլ հայ ժողովրդի համար իրականացրած գործունեությունը: Որպես իրենց կողմից հարգված մարդիկ՝ գրուցակիցները նշում են Ռուբեն Վարդանյանին, քանի որ նա բարձրացնում է մեր երկրի հեղինակությունը, վարչապետին<sup>6</sup> ճիշտ վարած քաղաքականության համար, Շառլ Ազնավուրին՝ որպես հայ ժողովրդի ամենավառ ներկայացուցիչ, և այլն:

### Այսպիսով՝

- Կանանց մասնակցության աստիճանը համայնքային հարցերի քննարկմանն այնքան ցածր է, որ, կարելի է ասել,

<sup>6</sup> Սույն հետազոտությունն իրականացվել է 2018 թ. փետրվար-մարտ ամիսներին՝ մինչև Կառավարության կազմի փոփոխությունը:



ընդհանրապես բացակայում է: Համայնքային քննարկումները հիմնականում տեղի են ունենում տղամարդկանց մասնակցությամբ և նրանց որոշումներով: Հասարակական այն կարծիքը, որ քաղաքական և/կամ հասարակական գործունեությունը գերազանցապես տղամարդկանց տիրույթում է, մարզային համայնքներում դեռ արդիական է: Չնայած փոխվել են երևույթի վերաբերյալ դիրքորոշումները, սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտության տվյալները, դեռ վաղ է խոսել գործնականում դրանց կիրառության մասին:

- Հարցի վերաբերյալ նկատվում է որոշակի տարբերություն ըստ մարզային համայնքների և Երևանի: Մարզերում կանանց հիմնականում տեսնում են կրթության ոլորտում՝ մանկավարժ, դպրոցի տնօրեն, փոխտնօրեն: Երևանաբնակ զրուցակիցների մոտ այդ շրջանակը համեմատաբար լայն է. նրանք խոսում են նաև համայնքային որոշումներին կանանց մասնակցության աստիճանի, որակի և փոփոխությունների մասին:
- **Կանայք դուրս են մնում հասարակական կյանքում տեղի ունեցող հաղորդակցությունից, որի ժամանակ ձևավորվում կամ վերափոխվում են հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքներ, իրավիճակներ:**
- **Փաստորեն, հետազոտության մասնակիցների շրջանում երևույթի վերաբերյալ տարածված է այն կարծիքը, որ հասարակական կյանքը կառուցում են տղամարդիկ. նրանք են տիրապետում այն ձևավորելու և փոփոխելու կանոններին, իսկ կանայք՝ ոչ: Կարող ենք նշել, որ տղամարդկանց կողմից հանրային կյանքում կանանց ունեցած մասնակցությունն արգելելը կամ դրան դեմ լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ չեն ցանկանում իրենց «իշխանությունը» հանձնել կանանց:**

## 2.2 ԱՌՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

### 2.2.1 Կանանց կողմից առօրյայում իրականացված աշխատանքների կարևորությունը և դասակարգումը

Ինչպես որոշումների կայացումը, այնպես էլ առօրյա աշխատանքների իրականացումը հստակ բաժանված է կանանց և տղամարդկանց միջև: Սակայն կանանց կողմից իրականացվող աշխատանքներին տղամարդիկ հիմնականում չեն մասնակցում, մինչդեռ տղամարդկանց համար նախատեսված որոշ աշխատանքների ժամանակ կանայք կամ հավասարապես օգնում են, կամ ամբողջությամբ իրենք են կատարում: Խոսքը վերաբերում է այն աշխատանքներին, որոնք սահմանված չեն որպես զուտ տղամարդկային և արգելված չեն կանանց համար:

Աշխատանքների բաժանման հիմքում ևս ընկած է «ներսի» և «դրսի» գաղափարը: Սակայն եթե ներսի բոլոր աշխատանքներն իրականացվում են կանանց կողմից, ապա դրսինը՝ և՛ կանանց, և՛ տղամարդկանց: Այս դեպքում, կարծես թե, ներսի աշխատանքներ են համարվում նաև անասնազոմին վերաբերող գործերը: Միայն կանանց կողմից իրականացվող «ներսի» աշխատանքներն են՝ կերակրի պատրաստում, լվացք, արդուկ, մաքրություն, երեխաների խնամք և դասապատրաստում, գյուղական համայնքներում՝ վառարան վառել, կաթի վերամշակում և այլն:

Հետազոտության շրջանակներում փորձել ենք դիտարկել, թե «կանանց համար նախատեսված» որ աշխատանքների ժամանակ են օգնում տղամարդիկ: Հիշյալ հարցադրումը հնարավորություն է տալիս խնդիրը քննարկել միաժամանակ երկու տեսանկյուններից՝ որոնք են, ըստ զրուցակիցների պատկերացումների, համարվում կնոջ գործեր և որ դեպքերում են տղամարդիկ մասնակցում դրանց իրականացմանը:

Շատ դեպքերում կին զրուցակիցները կնոջ համար նախատեսված աշխատանքներ են համարում ջուր, վառելափայտ բերելը, վառարանը

վառելը, անասունների խնամքը, վառարանի խողովակները մաքրելը: Մեծ ոգևորությամբ է նշվում այն, որ տղամարդիկ իրենց օգնում են այդ հարցերում. «*Կան, իհարկե, օրինակի համար, մեզ ջուր չունենք, ընում ա դեպքեր, որ ջուր բերելուց ամուսինը օգնում ա, կարող ա դեպքեր ընեն՝ փեջի հետ կապված, ասենք, վառելափայտը բերի, փրուբա թափ փալը կլնի»* (Դրախտիկ, իգ., 40 փ., ամուսնացած):

Որոշ դեպքերում այնքան խորն է աշխատանքների կին-տղամարդ բաժանումը, որ հենց կանայք են դեմ լինում, որպեսզի տղամարդիկ մասնակցեն կանանց համար նախատեսված աշխատանքներին. «*Ճիշտն ասած, փան գործը չգիտեմ ինչ ծանրություն չի ներկայացնում, որ մենք չկարողանանք դա անել, ու մեզ օգնեն մեր տղամարդիկ: Տան մաքրությամբ հիմնականում զբաղվում եմ ես, խոհանոցում՝ փայտիկը, որ գան փուն՝ ամեն ինչ պատրաստ, նորմալ: Այնպես չի, որ մենք չենք հասցնում, որ մեզ աջակցեն փան գործերում»* (Վարդենիս, իգ., 29 փ., ամուսնացած): «*Ես կարծում եմ, որ սահմաններ կան, որ պեպք չէ անցնել: Ես, որպես կին, դրան դեմ եմ: Օրինակ՝ ես չեմ ընդունի, որ գնամ մեկի փուն հյուր, ես ու ընկերուհիս նստած լինենք, ամուսինը վեր կենա, ամանները լվանա կամ պոլը սրբի: Հիմա ասում են, դրսում այսպես, Ռուսաստանում այնպես, բայց մենք ունենք մեր կոլորիտը, մեր գեները: Չեմ ընդունում, որ պեպք ա էսօր ես աման լվամ, վաղը ամուսինս»* (Ամասիա, իգ., 29 փ., ամուսնացած):

Ներգրավված դիտարկումների ժամանակ մենք ակնատես չեղանք այնպիսի մի դեպքի, որ հյուրի համար սուրճ եփեին տան տղամարդիկ կամ մասնակցեին ընթրիքի պատրաստմանը: Հյուրի հետ կապված բոլոր գործերն անում էին տան կանայք՝ սուրճ և ընթրիք պատրաստել, մատուցել, ամանները լվանալ և այլն: Չնայած այն հանգամանքին, որ հյուրն այդ ընտանիքներում մեծարման արժանի մարդ էր, այնուամենայնիվ, վերջինիս մենակ թողնելով՝ տան կինը գնում էր խոհանոց՝ սուրճ պատրաստելու. անգամ այս դեպքում ամուսինը սուրճ եփելու աշխատանքը չէր իրականացնում: Երեխաներին վերաբերող գործառույթներից տղամարդիկ մասնակցում էին միայն նրանց զբաղեցնելուն կամ, քիչ դեպքերում, ջուր տալուն: Երբ տան կանայք զբաղված

Էին դիտարկողին հյուրասիրելու աշխատանքներով, և տան փոքր երեխաների տակաշորերը փոխելու կարիք էր լինում, որևէ տղամարդ չէր անում դա՝ չնայած երեխաների ուժեղ լացին: Ինչպես արդեն նշել ենք, գյուղատնտեսական աշխատանքներից զուտ կնոջ գործառույթ է կովերին կթելը: Գյուղական համայնքներում դիտարկումների ժամանակ տղամարդիկ կատարում էին գոմի բոլոր աշխատանքները՝ բացի կթից: Կանայք նշում էին, որ հյուրի ներկայությունն է պատճառը, որ տղամարդիկ այդ չափով ներգրավվում են գոմի աշխատանքներում: Սակայն հյուրի ներկայությունը չէր ստիպում նրանց բացառություն անել և կովին կթել: Անգամ Ամասիայում կատարված դիտարկման ժամանակ տան պապիկը նշեց, որ իրենց ընտանիքում «հարգարժան» տղամարդիկ են, ովքեր կով չեն կթում:

Եթե կանայք դեմ են, որպեսզի տղամարդիկ իրականացնեն «կնոջ համար նախատեսված» գործերը, ապա ինչպե՞ս են վերաբերում այն հավասարապես իրականացնելու գաղափարին: Տղամարդիկ ո՞ր գործերն են պատրաստ իրականացնել կանանց հետ:

Աշխատանքները հավասար իրականացնելու դեպքում ևս կին զրուցակիցները բացասաբար են վերաբերում այդ երևույթին՝ որոշ դեպքերում դա համարելով «անօրինական» և «հայ կնոջը ոչ հարիր»։ *«Եթե կինը նստած հարևանի հեղբայրսանք ա անում, փռածը ամուսինն ա հավաքում, էդի անտանելի բան ա հայ կնոջ համար, էդի անօրինական բան ա»* (Շենավան, իգ., 55 ր., ամուսնացած): *«Կինը պիտի չափը ճանաչի, իրա ընտանիքի մեջ, ինչը որ վերաբերում ա կնոջը»* (Դրախտիկ, իգ., 40 ր., ամուսնացած): *«Իմ բնույթն այնպիսին է, որ ես չեմ սիրի այնպիսի մի տղամարդ, որն ինձ հեղբայրսանք ա վի»* (Վարդենիս, զրուցակցի հարսն է պատասխանում):

Տղամարդ զրուցակիցները բացառում են ինչպես իրենց մասնակցությունը կանանց վերաբերող աշխատանքների հավասար իրականացմանը, այնպես էլ «տղամարդկային որոշումների» կայացման մեջ կանանց դերը, քանի որ կանայք չեն կարող բավականաչափ խելացի գտնվել և ճիշտ կողմնորոշվել։ *«Եթե մտածելու, խորը գցել-բռնելու*

*հարց ա, էփ պահին կարող ա կինն ավելի քիչ ըմբռնի» (Սարուխան, ար., 28 փ., ամուրի):*

Ընտանիքում տղամարդկանց առօրյա աշխատանքների մեջ ընդգրկելուն խոչընդոտում են մեծահասակները, հատկապես սկեսուրները: Միգուցե դրա հիմքում ընկած է սոցիալական վրեժը. եթե ժամանակին այդ գործերն իրենք են արել, ապա հիմա էլ պետք է տան հարսն անի. «Օրինակ՝ իմ փղեն փոշին որ հանում ա, փափին (գրուցակցի սկեսուրը) ասում ա՝ էփի կնգա գործ ա, մի արա» (Շենավան, իգ., 55 փ., ամուսնացած):

Այժմ անդրադառնանք այն դեպքերին, որտեղ SS-ում աշխատանքի խիստ բաժանում չկա, և տղամարդիկ նույնպես մասնակցում են տան ներսի աշխատանքներին. «Օրինակ՝ խալի լվանալը, մեծ խալի ա, ոնց կարաս ջօզնես, հանես դուրս, իրանք լվանան, պեփք ա գցես պարանին կամ ինչ-որ փեղ, որ չորանա: Վարագույր կախելը կնոջ համար ա, բայց վրանգավոր գործ ա: Բացի էփ՝ ես սիրում եմ, որ ուղիղ լինի, շափը դրա համար» (Դրախփիկ, ար., 31 փ., ամուսնացած): «Այնքան ա պափահել, որ իմ փղան ճաշ ա եփել՝ ինձանից լավ, այդ գործում նա վարպետ ա, սիրում ա զբաղվել, ասում ա՝ մամ, թող ես եփեմ, մսով բորշ, ձուկը, խաշլաման լավ ա եփում: Շափ կանացի գործեր կան, որ նա լավ անում ա: Երբ դեռ չէին ամուսնացել, իմ փղաներն ինձ հեփ հավասար ուբորկա են արել, հափակի փալասն են չոփկել, հափակն են չոփկել, կանացի գործեր են, բայց ինձ հեփ հավասար արել են իմ 3 փղաները (Վարդենիս, իգ., 62 փ., այրի): «Պիլասոսը պապան է անում փանը: Տորթ թխելուց կրեմը պապան է խփում, իր մոփ լավ է սփացվում: Նոր փարվան, որ մաման խմորեղեն է սարքում, պապան էլ սաղ գիշեր, եթե ջօզնի էլ, նստում է վառարանի կողքը, որ փեսնի, թե երբ է բարձրանում գաթեն» (Գյումրի, իգ., 26 փ., ամուրի): «Կարող ա սփեղ չհասցնեմ էսքան փեղը մաքրեմ, ինքը կարող ա վերցնի ավելը, ավի՛ առանց որևէ խնդրի առաջացման: Կարող ա սուրճի բաժակները մնան, ենթադրենք՝ չհասցնեմ, ինքը կարող ա լվացնի, դնի էնփեղ» (Սարուխան, իգ., 38 փ., ամուսնացած):

Վերը թվարկված դեպքերը, երբ տղամարդիկ մասնակցում են կանանց համար նախատեսված աշխատանքներին, գյուղական համայնքներում հիմնականում երկսերունդ կամ միասերունդ ընտանիքների անդամներին են վերաբերում, ովքեր ապրում են կամ երիտասարդ ամուսիններով, կամ իրենց երեխաների հետ:

Հետաքրքիր է, որ եթե տղամարդիկ մասնակցում են ներսի աշխատանքներին, ապա միայն այն աշխատանքներին, որոնք նկատելի չեն ուրիշների համար: Օրինակ՝ լվացք չեն փռում, պատուհան չեն սրբում: Դրա մեկնաբանությունը մեկն է՝ հասարակական կարծիքը. «Մեր ուբորկեն էլ տղամարդիկ մեզ հետ հավասար անում են: Իմ տղեն բաղնիքի պատերը սաղ լվանալով դուրս կգա: Փոքրուց ըտենց են եղել: Մեծ ուբորկա ենք անում, իրենք էլ մեզ են օգնում: Չեմ ասում, թե պատուհաններն են լվանում, բայց օգնում են: Լվացք հո չե՞ս տա, որ տղամարդը անի, բայց ինքը կարող է կանգնել և ամանները լվա: ...դե պատուհանը ամոթ է, սա Գյումրի է, ազիզ ջան: 10 մատ ունեմ, 10-ի բերանը կփակեմ, մնացածինը ղնց փակեմ» (Գյումրի, իգ., 51 տ., ամուսնացած): «Ես որ ծանր հղիություն էի փանում, ես էտ օրը լվացք արեցի ու շատ վատ էի, հետո իմ ամուսինս հելավ կախեց վարագույրը: Մեր տները ընենց ա, որ դրսից երևում ա, ինքը առավոտ շուտ կախեց, որ հանկարծ ոչ մեկ չտեսա» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):

Հաջորդն անդրադարձել ենք այն հարցին, թե, ըստ գրուցակիցների, տղամարդու գործ համարվող որ աշխատանքներին են մասնակցում կանայք: Ի տարբերության նախորդ դեպքի՝ այս դեպքում չկա որևէ մի գործ, որը համարվում է ամոթալի կամ հասարակության կողմից չընդունվող: Կանանց կողմից իրականացվում են տղամարդու համար նախատեսված գործերից՝ անասունին կերակրելը, թրիքը թափելը, այգին փորելը, խոտհունձ անելը, խոտի հակերը (կապոցները) տեղափոխելը, մշակելը, վառարանը թափ տալը, վառելը, բակը ձյունից մաքրելը, ծանր իրեր, պարկեր տեղափոխելը, որոշ դեպքերում՝ հոսանքին վերաբերող գործերը և այլն. «Օր ավտոն կոռտոլ ա բարձում գալի, մե մեշոկ, հիցուն մեշոկ, վացուն մեշոկ, տղամարդների խետ գնում, լցնում են ներս: Մե քսան օր առավոտից միջև իրկուն

Ժամը մեկ- երկուս նստում, ջուրը՝ ջուջ, պսպրիկը՝ պսպրիկ, մեծը՝ մեծ» (Սարուխան, իգ., 90 տ ., այրի): «Կոնկրետ, կոանթը ջարդվել ա, ես պիտի գնամ, բերեմ, ես էլ տեղադրեմ» (Ապարան, իգ., 50 տ., ամուսնացած): «Վառելիքի՛ փայտ, աթար բերելը, ես եմ անում, մեշոկներ, տեղափոխել՝ ալյուր, կարտոֆիլ: Շատ հաճախակի լույսի միացման տեղերը ես եմ սարքում (Կամո, իգ., 33 տ., ամուսնացած):

Շատ դեպքերում կանայք տղամարդկանց համար նախատեսված աշխատանքներն իրականացնում են ընտանիքի անդորրը պահպանելու և հարևանների կողմից չքննարկվելու համար. «Օրինակ՝ ես էնքան իմ ամուսնուց վիրավորվում եմ. մեշոգը շալակում եմ կամ բիտոնները, իրա ուղեղը չի աբառուտ անում, ասի՝ էս իմ կնիկը վիրահատված տրոմբ ունի, էսքան ծանր, մի բան վերցնեմ: Չի ֆայմում: Համ ջղայնանում եմ, մեկ էլ ասում եմ՝ ուր եմ գլուխ դնում, զահլա չունեմ, մեկ էլ ձենը դուրս գա, հարևանները լսեն, գլուխս կախ՝ անում եմ: էս պահին ամեն ինչ ես եմ անում՝ կովերը ջրում եմ, կովի թրիքը դուրս եմ տալիս, խոտը տալիս եմ: Ձմռանը դուռ քերելը: Ձյուն ա գալիս, քերում եմ, մաքրում եմ մեր ոտի տակը, քյուպա էրեխեք են, դուրս են գալիս, ընկնում են: Ամբողջ օրը էդ ա էլի՛ աթարը բեր, փեպը բեր, ամեն ինչը դրսից ներս ես բերում տան մեջ» (Դրախտիկ, իգ., 56 տ., ամուսնացած):

Ինչպես նկատեցինք, կանայք ներգրավված են առօրյայում իրականացվող ամենատարբեր աշխատանքներում: Իսկ որո՞նք են, ըստ գրուցակիցների, առօրյայում իրականացվող ամենաբարդ և ամենակարևոր աշխատանքները: Առօրյա աշխատանքների բարդության ընկալումը տարբեր է գյուղական և քաղաքային միջավայրերում ապրող գրուցակիցների շրջանում: Գյուղական միջավայրում առօրյայում իրականացվող ամենադժվար աշխատանքներն են գյուղատնտեսությանը, հատկապես անասնապահությանը վերաբերող աշխատանքները. «Դե գոմի գործն ա ամենադժվարը: Դե թրքի էդ կաչկեքը ծանր, լցնում ես, թրիքը բարձրացնում բոստանի գլուխը» (Դրախտիկ, իգ., 56տ., ամուսնացած): «Գյուղացների կյանքը դժվար ա անասնապահության հարցում: Առավոտը շուտ արթնանում են,

*տակը մաքրում են, կթում են, դուրս են հանում: Դա շապր դժվար ա: Էն որ ժամը 5-ին զարթնում ես, էտ ինքն իրանով դժվարություն ա» (Դրախտիկ, ար., 31 տ., ամուսնացած): «Կաթի հեպ, համ մշակման հեպ, համ խոտը: Պիտի շուտ հելնենք, կովին ուղարկենք դաշտ, կթենք, հանձնենք, դրա հեպ միասին մեկտեղ էլ քո փան գործերը» (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած): Հողագործական աշխատանքների դժվարությունների մասին ևս ամենից շատ բարձրաձայնում են կին գրուցակիցները, ինչը ևս մեկ անգամ վկայում է դրանցում կանանց ունեցած մեծ մասնակցության մասին: Գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը կանանց մասնակցությունն այնքան մեծ է, որ գրուցակիցները նշում են, որ տան ներսում իրականացվող գործերն իրենց համար ընդհանրապես դժվար չեն:*

Առօրյա աշխատանքների դժվարությունն այլ կերպ է սահմանվում և ընկալվում Կապանում և Երևանում: Այս տարածաշրջանների գրուցակիցները խոսում են ոչ թե ֆիզիկական, այլ հոգեբանական (կյանքի որակը և ներդաշնակությունը ապահովելու) դժվարությունների մասին. «Առօրյան կազմակերպելը, ընդհանուր փան մթնոլորտի ներդաշնակություն ապահովելը, ընտանիքի որակ ապահովելը» (Կապան, իգ., 32 տ., ամուրի): «Խանութ գնալը, բան, դժվար չի, ձանձրանում ես, ոչ թե դա դժվար գործ ա, այլ արդեն անհետաքրքիր ա, հոգեբանորեն դժվար ա» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):

Կենտրոն համայնքում հանդիպեցինք մի երևույթի, որը չարձանագրվեց ոչ մի մարզային համայնքում: Տղամարդիկ բարձրաձայնում են առօրյայում իրականացվող այնպիսի աշխատանքների դժվարության մասին, որոնք, այլ դեպքերում գտնվում են կնոջ տիրույթում: Խոսքը լվացք անելու մասին է. «Իմ համար, երևի, օրինակ, լվացքը, ես շապր դժվարությամբ եմ անում, էդել ա, որ անեմ, շապր դժվարությամբ եմ անում: ...հեպո հանել բաշխելը, ամբողջ պրոցեսն ա դժվար, ոչ թե մենակ բանի մեջ գցելը» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի): Այս փաստը ևս վկայում է, որ Կենտրոն համայնքում աշխատանքների բաժանումն այնքան սուր չէ, որքան մարզային համայնքներում:



Ինչ վերաբերում է այն հարցին, թե որոնք են առօրյայում իրականացվող աշխատանքներից ամենակարևորները՝ զրուցակիցների մոտ ընկալումների տարբերություններ՝ պայմանավորված բնակության վայրով, տարիքով կամ կրթական աստիճանով, գրեթե չկան: Հատկապես կին զրուցակիցների շրջանում կենցաղում իրականացվող ամենից կարևոր աշխատանքը տան մաքրությունն է, որից հետո՝ սննդի պատրաստումը. «*Մաքրությունը, մարդու տուն պիտի մաքուր լինի*» (Շենավան, իգ., 55 տ., ամուսնացած): «*Տունը մաքրած լինի, լվացքը արած, ճաշը եփած լինի*», (Շենավան, իգ., 33 տ., ամուսնացած): «*Տունը մաքուր պահելը, ամենակարևորը դա, մաքուր, հավաք, կոկիկ լինի, փանից հոտ չգա, որ դուռը բացես, մեջքի վրա չընկնես հոտից, փուլվեպը մաքուր պահելը, փանից մաքուր պեպք է լինի փուլվեպը: Մեկ էլ շքամուտքը՝ հենց ոտքիդ փակ, նենց չլինի փունդ մաքրես՝ ոտքիդ փակը աղբի մեջ կորած լինի: Ամանեղենդ մաքուր լինի, ոչ թե մի գդալ ճաշ լինի ամանիդ մեջ, տենց սառնարանում դրված լինի, մի կտոր չորացած մի բան լինի, էնպեղ մի տեղ գցած, կերած ամանները կիտած լինի, էդ էլ է հոտ, էդ էլ բլոճի բուն է» (Քանաքեռ-Զեյթուն, իգ., 48 տ., այրի):*

Իսկ ինչպե՞ս է ՏՏ-ում որոշվում, թե առօրյայում իրականացվող որ աշխատանքները պետք է իրականացնեն կանայք, որոնք՝ տղամարդիկ: Արդյո՞ք զրուցակիցները տեսնում են իրենց մասնակցային դերը դրանում, թե՛ ոչ: Եթե տեսնում են, ապա տան անդամներից ո՞վ է որոշողի դերում: Կարծում ենք, որ ցանկացած երևույթ հասարակությունում վերակառուցելու, փոփոխելու համար նախ պետք է ուսումնասիրել և հասկանալ դրա վերաբերյալ առկա ընկալումները: Որքանով է հասարակությունը տեսնում իր դերը երևույթի ձևավորման և փոփոխման հարցում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ զրուցակիցները գրեթե պատկերացում չունեն՝ ինչպես է իրենց ընտանիքներում որոշվում, թե ով պետք է իրականացնի տվյալ աշխատանքը: Աշխատանքի բաժանումը դիտվում է ինքնըստինքյան իրականացվող կամ ի սկզբանե որոշված: Զրուցակիցները երբևէ իրենք իրենց հարցադրում

չեն արել, թե երբվանից և ինչպես է կատարվել աշխատանքի այս բաժանումը, և որքանով է այն համապատասխանում մերօրյա իրականությանը: Ավելին, չեն կարողանում գնահատել՝արդյոք իրենք կարող են փոխել այն, թե՛ ոչ. «Ամեն մարդ գիտի իրա անելիքը: Պետք չի ինչ-որ մեկին ինչ-որ բան ասելը: Առավոտյան հելնում ենք, սրճում ենք, ինքը գնում ա գոմ գործով, ես էլ իմ փան գործերով, էդքան բան» (Դրախտիկ, իգ., 40 փ., ամուսնացած): «Դա արդեն ի վերուստ գրված ա եղել իմ եկած օրվանից» (Վարդենիս, իգ., 29 փ., ամուսնացած): «Արդեն գիտենք, որ փղամարդու գործը փղամարդը պիտի անի, փան գործերն էլ ես եմ անում: Չենք էլ որոշում, ինքնըստիներքյան ստացվում ա ըտե՞նց» (Շենավան, իգ., 33 փ., ամուսնացած): «Դե, դրված ա արդեն այդ հիմքը: Բնականաբար, խոհանոցը կնոջ ոլորտն ա՛ երեխաների դաստիարակության հետ համապետը» (Կապան, իգ., 32 փ., ամուրի):

Իսկ երբ փորձեցինք պարզել, թե փան անդամներից ովքեր են որոշում, թե ով ինչ աշխատանք պետք է իրականացնի, զրուցակիցները հիմնականում նշում էին փան փղամարդուն և սկեսուրի կարգավիճակ ունեցող կնոջը. «Ես ասում եմ էսի, էսի արա ու էթում եմ, ֆայո» (Շենավան, ար., 54 փ., ամուսնացած): Եթե ամուսինների կողմից որոշումների կայացումը ընտանիքներում տարածայնություններ չի առաջացնում, ապա նույնը չէ դրանք սկեսուրների կողմից կայացնելու դեպքում: Սկեսուրների կողմից որոշումների կայացումը, թե տանն ով ինչ աշխատանք պետք է անի, և հատկապես հարսներին այդ աշխատանքներում ներգրավվելը հանգեցնում է բախումների և անհաշտությունների. «Կիսուրիս մնա, փղուն կասի դու նստի, թող սաղ հարսն անի: Ասում ա՛ էս ինչ բանն անենք, կամ ասում ա՛ արի էթանք անենք: Կամ ասում ա՛ գնա արա, էտի ավելի լավ ա իրա մոտ ստացվում: Հրաման ա փալիս ինքը հիմնականում, մանավանդ ծմեռը, նստում, հրաման ա փալիս» (Դրախտիկ, իգ., 33 փ., ամուսնացած): «Ինքը ասում ա, որ ամեն ինչում դուք պետք ա ինձ ենթարկվեք՝ լիովին, ամեն ձևով: Մենք էլ փարիքով. ես 50 փարեկան եմ, էս (նկատի ունի ամուսնուն) 60 փարեկան ա: Կարմիր կովը կաշին չի փոխում (նկատի ունի սկեսուրին): Ես իրա փղի երրորդ կինն եմ: Նախորդները բաժանվել

*են էս հարցերով, էս պայմաններով: ...մյուս տղեն էլ 6 կին ա առել: Էլի իրա պատճառով: Խառնում ա իրար» (Ապարան, իգ., 50 տ., ամուսնացած): «Էն տանը ինքը թույլ չէր տալիս, որպեսզի իրա ավտոմայր լվացքի մեքենան օգտագործեն, ես էլ էնքան անխելք ասեմ, ինչ ասեմ, իջացնում էի, ձեռքով էի լվանում, որպեսզի կեղտոտ չմնա, որպեսզի մտնողը չասի: ...ասում էր՝ ըտե՛նց եմ ուզում: Ինքը նույնիսկ վերցնում, տանում պահում էր մեքենան միացնելու էր հարմարանքը: Ինքը լվացք էր անում, կանգնում էր մեքենան, ինքը անջատում էր, էդ վրայի գլուխը հանում էր, տանում, պահում էր, որ հանկարծ ընենց չլինի՝ ինքը տանը չլինի, ես մեքենան օգտագործեմ» (Ապարան, իգ., 35 տ., ամուսնավուծված):*

Աշխատանքի բաժանումը կնոջ և տղամարդու միջև, ըստ սեռերի, սկսվում է դեռ վաղ տարիքից, երբ երեխաները դեռ անչափահաս են: Աղջիկ երեխաները հիմնականում իրականացնում են կանանց համար նախատեսված գործերը, տղա երեխաները՝ տղամարդկանց: Պետք է նշել, որ հատկապես գյուղական համայնքներում շատ վաղ տարիքից (8-9 տարեկան) են երեխաները սկսում ներգրավվել առօրյա աշխատանքների իրականացման մեջ: Անչափահաս տղա երեխաները հիմնականում իրականացնում են հետևյալ աշխատանքները՝ փայտ կտրել, դասավորել, անասունին ջուր և խոտ տալ, վառարանում փայտ դնել, ձյուն մաքրել: Տղամարդիկ տղա երեխաներին ներգրավում են նաև զուտ տղամարդկային աշխատանքներում՝ ավտոմեքենա լվանալ, տրակտորի շարժիչը միացնել, նաև խանութ գնալ՝ ծխախոտ գնելու:

Առավել լայն է անչափահաս աղջիկ երեխաների կողմից իրականացվող աշխատանքների շրջանակը՝ ճաշ եփել, տան մաքրությունն իրականացնել, խանութ գնալ, կով կթել, սուրճ եփել, ամանները լվանալ, անկողինները հավաքել, թխվածք թխել, զբաղվել տարիքով փոքր երեխաների խնամքով և այլն: «Մեծ աղջիկս (6-րդ դասարան) ամեն ինչ ա անում, դաժե որ ես հիվանդանոցում եմ եղել, կով ա կթել» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած): «Փոշիներն ա հավաքում, սուրճ ա եփում, երեխայի (5 ամսական) հարցում ա շատ օգնում,

*խաղացնում ամ, զբաղեցնում ամ, փոխում ամ, եթե անհրաժեշտ ար լինում (6-րդ դասարան)» (Վարդենիս, իգ., 62 տ., այրի): «Հարդուկ ամ անում, ամաններն ամ լվանում, անհրաժեշտության դեպքում կարող ամ ճաշ պատրաստել, սուրճ ամ դնում» (Սարուխան, իգ., 38 տ., ամուսնացած): «Թխվածք ամ անում, փուն ամ մաքրում, գողինքն ամ հավաքում: Ժամանակ ամ լինում ճաշել ամ եփում, բերում մեզի կերակրում (14 տարեկան)» (Դավթաշեն, իգ., 79 տ., այրի): «Ամեն ինչ էլ անում ամ, ավել, լվանալ, փունը մաքրել (10 տարեկան)» (Քանաքեռ-Զեյթուն, ար., 40 տ., ամուսնացած):*

Անչափահաս աղջիկ երեխաների մասնակցությունը տնային գործերի իրականացմանը միշտ ներկայացվում է դրականորեն: Ծնողները հպարտանում են աղջիկ երեխաների՝ այդքան փոքր տարիքից «տնարար աղջիկ» լինելու փաստով. «Հարևանների ասածով ոնց որ մի հատ փան կին ըլնի» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած): Աղջիկ երեխաներին հիմնականում գործ անել հանձնարարում են մայրերը և տատիկները: Հայրերը դիմում են ջուր բերելու և սուրճ պատրաստելու հարցերով:

Ներգրավված դիտարկումների ընթացքում այն բոլոր ՏՏ-ներում, որտեղ կային անչափահաս աղջիկ երեխաներ, ակտիվորեն մասնակցում էին հյուրին հյուրասիրելու գործընթացներում՝ սուրճ պատրաստել, սեղան զգել: Մենք չհանդիպեցինք որևէ դեպքի, երբ նույն այդ աշխատանքներին մասնակից լինեին տղա երեխաները: Չնայած մայրերը նշում էին, որ տղա երեխաները նույնպես օգնում են իրենց, սակայն, ինչպես հասկացանք, նրանք տղա երեխաներին ներգրավում են այն ժամանակ, երբ տանը, ՏՏ անդամներից բացի, այլ մարդ չի լինում: Դիտարկվող այն ընտանիքներում, որտեղ կային երկու սեռի երեխաներ, հյուրի ներկայության ժամանակ տղա երեխաները հիմնականում դրսում էին լինում՝ խաղալու, իսկ աղջիկ երեխաները մնում էին տանը՝ կենցաղային գործերում օգնելու համար:

Ներգրավված դիտարկումների ժամանակ աղջիկ երեխաներին որևէ բան անելու հանձնարարություն տալիս էին հիմնականում մայրերը,

ավելի քիչ՝ տատիկները: Չհանդիպեցինք որևէ մի դեպքի, երբ աղջիկ երեխաներին տանն ինչ-որ բան անելու գործում մասնակցություն ունենան տան տղամարդիկ:

### Այսպիսով.

- **Աշխատանքի բաժանումը կնոջ և տղամարդու միջև, համաձայն զրուցակիցների ընկալումների, սահմանվել է ի սկզբանե և ինքնըստինքյան: Զրուցակիցները չեն տեսնում իրենց մասնակցությունն այդ որոշումների կայացման, հետևաբար նաև փոփոխման հարցում:** Զրուցակիցները երբևէ չեն մտածել այն հարցի շուրջ, թե ինչու, երբ և ինչ սկզբունքով է իրականացվել նման բաժանումը: Ավելին, վերջիններս դժվարանում էին պատասխանել նաև մեր հարցադրմանը:
- Ընդհանուր առմամբ՝ աշխատանքները բաժանված են երկու խմբի՝ «ներսի» և «դրսի»: Ներսի աշխատանքները գտնվում են կնոջ տիրույթում, դրսինը՝ տղամարդու: Ներսի աշխատանքներն են՝ տան մաքրությունը, սննդի պատրաստումը, կաթի վերամշակման աշխատանքները և այլն: Դրսի աշխատանքներն են, հիմնականում, գյուղատնտեսությանը (հողագործություն, անասնապահություն) վերաբերող աշխատանքները: Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, **կանայք մասնակցում են և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար նախատեսված աշխատանքների իրականացմանը:** Դա ընդունելի է բոլորի կողմից: Մինչդեռ հակառակ դեպքը, երբ տղամարդն է մասնակցում կանանց համար նախատեսված աշխատանքներին, համարվում է ամոթալի: Եթե անգամ տղամարդիկ մասնակցում են նման աշխատանքների իրականացմանը, ապա այնպես, որ այն նկատելի չլինի հարևանների կողմից: Այսինքն, եթե անգամ տղամարդիկ պատրաստ են և ուզում են իրականացնել կանանց համար նախատեսված գործերը, ապա դրան խանգարում է մշակութային միջավայրը: Մենք հանդիպեցինք տղամարդ զրուցակիցների, ովքեր նշում

էին, որ արտագնա աշխատանքի գտնվելիս իրենք են իրականացնում տան մաքրության, սննդի պատրաստման հետ կապված բոլոր աշխատանքները, սակայն վերադառնալով համայնք՝ նույնն այլևս չեն անում: Դրացիական և ազգակցաարյունակցական համայնքի կողմից նման երևույթի անընդունելի լինելու հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ կանայք ևս դեմ են, որպեսզի տղամարդիկ ներգրավվեն իրենց աշխատանքներում, օրինակ՝ պատուհանները լվանան, լվացք կամ արդուկ անեն:

- Հասարակությունը որոշում է, որ աշխատանքների բաժանումը կանանց և տղամարդկանց միջև պետք է կատարվի դեռ այն ժամանակվանից, երբ երեխաներն անչափահաս են, որպեսզի նրանք հետագայում պատրաստ լինեն դրանց: Այսինքն՝ աղջիկ երեխաներին 8-9 տարեկանից պետք է ներգրավվել սեղան դնելու, տան մաքրության, ջուր բերելու աշխատանքներում, իսկ տղա երեխաներին՝ մեքենայի շարժիչը միացնելու, պարկեր տեղափոխելու, անասուններին ջուր և խոտ տալու աշխատանքներին:
- **Ակնհայտ է աղջիկ երեխաների նկատմամբ կիրառվող խտրական վերաբերմունքը:** Չանդրադառնալով նրանց հանդեպ կիրառվող վերահսկողական մեխանիզմներին՝ նշենք միայն, որ դեռ փոքր հասակից աղջիկ երեխաների նկատմամբ ավելի հաճախ է կիրառվում սահմանափակումների համակարգը: Մյուս կողմից, ի տարբերություն տղաների, նրանք ավելի շատ են ներգրավվում տան կենցաղային գործերի իրականացմանը՝ ճաշ եփել, տան մաքրությունն իրականացնել, խանութ գնալ, կով կթել, սուրճ եփել, ամանները լվանալ, անկողինները հավաքել, թխվածք թխել, զբաղվել իրենցից տարիքով փոքր երեխաների խնամքով և այլն:
- Գյուղական համայնքներում, եթե անգամ ուզում են՝ առօրյայում աշխատանքների բաժանման կամ իրականացման մեջ փոփոխություն լինի, ապա դրա իրականացումը տեսնում են քաղաքներում: Պատճառն այն է, որ գյուղական

համայնքներում բոլորն իրար ճանաչում են, ու առաջինն, ով կկոտրի այդ կարծրատիպը, կքարկոծվի բնակիչների կողմից: Մինչդեռ քաղաքներում մարդիկ իրար չեն ճանաչում ու ավելի ազատ կարող են փոփոխություններ մտցնել իրենց կյանքում: Ինչպես Դավթաշեն գյուղում բնակվող տատիկն է պատասխանում տղամարդկանց՝ աման լվանալուն վերաբերող հարցին՝ «Գյուղ դեղ ինք: Ըդի քաղաք չէ, օր իրար չջանաչեն» (Դավթաշեն, իգ., 79 տ., այրի):

- **Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարող ենք նշել, որ մեր հասարակությունը դեռ պատրաստ չէ առօրյայում իրականացվող աշխատանքների բաժանումը կատարել՝ դրանք չպայմանավորելով սեռով:** Ինչպես զրուցակիցներն են նշում, այդ ամենը գալիս է դեռ «Աղամի ու Եվայի ժամանակներից» և այդպես էլ կմնա: Հասարակությունը դեռ պատրաստ չէ փոփոխությունների, հատկապես՝ արմատական ու կտրուկ: Եթե անգամ կարծիքի մակարդակում ուզում են ինչ-որ բան փոխել առօրյայում, ապա դա տեսնում են իրենց անձից և ընտանիքից հեռու:
- **Եթե անգամ տղամարդը կնոջը ներգրավում է որոշ որոշումների կայացման մեջ կամ ինքն է ներգրավվում կնոջ համար նախատեսված աշխատանքների իրականացմանը, այնուամենայնիվ, տղամարդուն է «պատկանում» վերջնական որոշում կայացնողի իրավունքը:**
- Այսպիսով՝ առօրյա աշխատանքների իրականացման գործում հստակ նկատելի է **անհավասար բաշխում և խտրական վերաբերմունք կանանց նկատմամբ:** Անկախ այն հանգամանքից՝ կանայք ունեն զբաղվածություն (վարձատրվող աշխատանք), թե՛ ոչ, նրանք ներգրավված են առօրյայում իրականացվող գրեթե բոլոր աշխատանքներում: Եթե ժամանակին այդ ամենը բացատրվում էր այն հանգամանքով, որ տղամարդիկ հիմնականում ներգրավված են վարձատրվող աշխատանքներում, և կանայք պետք է իրականացնեն տանը վերաբերող աշխատանքները, ապա **մեր օրերում փոխվել**

**է հասարակության նման բաշխվածությունը, սակայն պահպանվել է ավանդույթը:** Կինը, ով տղամարդուն հավասար իրականացնում է վարձու աշխատանք, պետք է միայնակ իրականացնի տան բոլոր աշխատանքները:

### 2.2.2 Առօրեականության փոփոխություն

Ինչպես պարզ դարձավ, որոշումների կայացման և աշխատանքների իրականացման հարցում գրուցակիցների առօրյան կազմակերպված է հստակ սկզբունքներով և գրեթե փոփոխությունների չի ենթարկվում: Հատկապես գյուղական միջավայրերում առօրեական միակ փոփոխությունը գլխավորապես պայմանավորված է եղանակով՝ առավել պասիվ և առավել ակտիվ գյուղատնտեսական աշխատանքների իրականացմամբ: Մենք փորձեցինք դիտարկել՝ արդյոք գրուցակիցներն ուզում են փոփոխություններ իրականացնել իրենց առօրյայում, և ինչ բնույթի փոփոխություններ են դրանք: Նման հարցադրումը հնարավորություն կտա այս ոլորտում հետազայում որևէ նախաձեռնություն իրականացնելիս հստակ պատկերացում կազմել, թե ինչ ակնկալիքներ ունի հասարակությունը, և ինչ մեխանիզմներ պետք է մշակել դրանք իրականացնելիս:

Նախքան նշված փոփոխությունների մասին անդրադառնալը նշենք, որ գրուցակիցները<sup>7</sup> շատ դեպքերում չունեն հստակ ձևավորված նպատակ կամ ցանկություն, թե ինչը կուզենային, որ փոխվեր իրենց առօրյայում. «Ավելի անկեղծ որ ասեմ, այդ ուղղությամբ չեմ մտածել» (Կամո, ար., 33 տ., ամուսնացած): Դրա պատճառներից մեկն այն է, որ ինչպես արդեն նշել ենք, նրանք իրենց առօրյայի կազմակերպումը դիտարկում են որպես իրենցից դուրս իրականացվող մի բան, որի ձևավորման մեջ իրենք որևէ մասնակցություն չունեն: Այդ պատճառով իրենք չեն տեսնում նաև իրենց մասնակցային դերը այդ ամենի փոփոխման հարցում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ակնկալվող փոփոխությունները հիմնականում նյութական են. դրանք վերաբերում

<sup>7</sup> Այս բաժնում հիմնականում կանդրադառնանք կին գրուցակիցների ընկալումներին:



են տան վերանորոգման աշխատանքներին, անշարժ և շարժական գույքի ձեռքբերմանը. «*Ես կուզեի, որ էրեխեն կարողանար պատրաստել խփեր, էդ ա իմ երազը (նկատի ունի երազանքը), մեկ էլ, որ մեր պոլերը կրասկա քսեր*» (Դրախտիկ, իգ., 56 տ., ամուսնացած): «*Տունս իմ ուզած ձևով ռեմոնտ անեմ*» (Դրախտիկ, ար., 31 տ., ամուսնացած): «*Կուզենայի՛ մի հասր փուն ունենայի*» (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած):

Ակնկալվող փոփոխությունների տեսանկյունից մոտեցումները փոքր-ինչ այլ են քաղաքային միջավայրերում, հատկապես Կապան քաղաքում և Երևանում: Այստեղ նշվում է նաև հոգևոր արժեքների ձեռքբերման կամ փոփոխման, աշխատանքում կայանալու, ոչ թե եռասերունդ, այլ երկսերունդ և/կամ միասերունդ ընտանիքներով ապրելու մասին և այլն. «*Որ ընտանիքի կայացման հարցում ամուսիններով կայանան, ոչ կողքից լինի մամա, ոչ՝ պապա: Իրենք ունենան իրենց սեփական խելքը, միտքը ու կազմեն իրենց ընտանիքը*» (Կապան, իգ., 32 տ., ամուսին): «*Ունենայի անձնական գրադարան*» (Կապան, իգ., 32 տ., ամուսնացած): «*Ես կուզենայի մի սենյականոց բնակարան, թեկուզ էս նույն մուտքի մեջ ունենայի: Որ ես ինչ-որ մոմենտ կարողանայի ուղեղս անջատելի ու գնայի ընդեղ*» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):

Չնայած գյուղական համայնքներում ևս, որպես առօրեական փոփոխություն, նշվում է աշխատանք ձեռք բերելը, սակայն դրա արդյունքում ակնկալվում է միայն ֆինանսական միջոցների առկայություն: Երևանում նույնպես նշվում է այս փոփոխության մասին, սակայն այլ տեսանկյունից. աշխատանք ունենալը դիտարկվում է ինքնահաստատման, ընկալումների փոփոխման, միջավայրում ինքնադրուկորման և, որ ամենակարևորն է, կնոջ անկախացման միջոց. «*Կուզեի ես էլ աշխատելի հիմա: Որ աշխատում ես, ինչքան անկախ ես լինում, ինձ թվում ա, էնքան ավելի լավ ա: Իմ մամայի մոտ էլ եմ էդ փոփոխությունը նկատում: Հիմա իմ մոտ նենց չի, որ փենց խնդիր կա, ուղղակի ուզում եմ աշխատել: Բայց հեղափոխության համար, լավ ասեմ, եթե ես ամուսնանամ, ես կուզեմ աշխատեմ, որովհետև մաման, որ սկսեց*

աշխատել, ես իր մոտ դրական փոփոխություններ նկատեցի: Նախ՝ իր մտածելակերպում. երբ որ ինքն ամբողջ օրը տանն էր, ինքն այդ ժամանակ լրիվ ուրիշ ձև էր մտածում: Գիտե՞ք, մի քիչ կոպիտ կհնչի, բայց ոնց որ ինքն ավելի հեղափոխեց էր, սահմանափակ, ոնց որ ինքը շրջապատի հետ կապ չուներ, գիտեր էն, ինչ ասում էին մեր բարեկամները, հարևանները, չգիտեր, թե ընդհանրապես աշխարհում մարդիկ ոնց են մտածում: Չգիտեմ՝ իր մոտ եմ ես զգացել է՞ր փոփոխությունը: Դա նաև ավելի անկախացնում ա կնոջը: Գիտե՞ք, որ ինքը զգում ա, որ ինքն էլ կարող ա անել ավելին, քան տան գործն ա, հասկանում ես, որ է՞ր չի քոնը, որ ամբողջ կյանքում դու տան գործ անես, գիտես, որ կարող ես ուրիշ բաներ անել, հարգվես ու սիրվես ուրիշ մարդկանց կողմից» (Քանաբեռ-Ջեյթուն, իգ., 20 տ., ամուրի):

Փոփոխությունների մասին խոսելիս երևանաբնակ զրուցակիցները չեն սահմանափակվում միայն նեղ անձնական թեմաներով, անդրադառնում են նաև ավելի համապարփակ խնդիրների. «Քաղաքի բանով ասեմ, որ ընդհանուր ճարտարապետությունը չաղավաղեն, մեկ էլ մի քիչ ավելի շատ հետևեն, թե ընդհանուր խանութները կենտրոնում ու կենտրոնից մի քիչ դուրս, վիտրինները մի քիչ ավելի համակարգված լինեն ու քաղաքի դեմքին համապատասխան լինեն» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի):

Վերջին 10 տարիների ընթացքում զրուցակիցների SS-ներում կամ որևէ փոփոխություն չի եղել, կամ դա, ինչպես ակնկալվող փոփոխությունների դեպքում, վերաբերել է միայն գույքային ձեռքբերումների. «Ընի դա տասը տարի առաջ, թե հիմի, նույնը անում ենք: Ոչ մի փոփոխություն էլ չկա» (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած): «Օրինակ՝ լվացքի մեքենա: Այն ժամանակ գազ կար, բայց կալոնկա չունեինք, տաք ջուր չունեինք» (Վարդենիս, իգ., 28 տ., ամուսնացած): «Լվացքի մեքենա ենք առել, սառնարան, խոլ, պիսամենի սեղան» (Դավթաշեն, իգ., 79 տ., այրի):

Այս հարցում ևս մայրաքաղաքում իրավիճակն այլ է: SS-ներում տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորած են կյանքի ուղիներ

համապատասխան իրավիճակներով, ինչպես, օրինակ՝ այս դեպքում. «էն ժամանակ դեմ էին, որ կինը մեքենա քշել իմանա, հիմա իմ եղբայրը ուզում ա ինձ քշել սովորեցնի: Արդեն ինքն ա առաջարկում, ասում ա՝ չես ուզում սովորել: Կարող եմ ասել, որ իր մոտ էլ մտածելակերպի փոփոխություն կա, բայց կարամ հաստատել ասեմ, որ ինքն էն ժամանակ հաստատել կողմ չէր լինի: Երևի էս վերջին 10 տարիներին ա, որ կին վարորդները շատացել են, պապան էլ, ախպերս էլ սկզբում ասում էին՝ վատ ա, բայց հիմա էլ տենց չեն մտածում, որ ուզում են, որ ես էլ սովորեմ» (Քանաքեռ-Ձեյթուն, իգ., 20 տ., ամուրի):

Զրուցակիցները դժվարանում են տարանջատել ընտանիքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց անձնական կյանքում կատարված փոփոխություններից: Այդ երկուսն այնքան փոխկապակցված են իրար, որ կարծես թե զրուցակիցները չունեն անձնական կյանք: Որպես անձնական փոփոխություն՝ շարունակում են նշել լվացքի մեքենա, տաք ջուր ունենալու հարմարությունը. «Փայտի/աթարի վառարանը փոխարինել ենք գազի վառարանով» (Ամասիա, իգ., 33 տ., ամուսնացած), «Առաջ ձեռքով լվացք էի անում, հիմա չեմ անում» (Գյումրի, իգ., 51 տ., ամուսնացած): Այս պատկերը հանդիպում է հիմնականում գյուղական համայնքներում: Այս հարցում ևս, եթե համեմատենք Կապանի և Երևանի զրուցակիցների ընկալումները, նկատելի են որոշակի տարբերություններ. «Աշխատանքային բնույթի, տարբեր համագործակցություններ, աշխատանքային բարձունքներ» (Կապան, իգ., 32 տ., ամուրի): «էս վերջին հինգ տարիները գնում եմ ամռանը հանգստանալու» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):

Իսկ որքանով է հասարակությունը պատրաստ իր առօրյայում իրականացվող ցանկացած փոփոխության մեջ ունենալ մասնակցային, անմիջական դեր: Խնդիրն այս տեսանկյունից դիտարկելիս, ըստ բնակության վայրի և ըստ տարիքային խմբերի, հստակ տարբերություններ են նկատվում: Գյուղական համայնքներում փոփոխության իրականացման մեջ զրուցակիցները գրեթե չեն տեսնում իրենց մասնակցային դերը: Այս հարցում որոշիչ դեր ունեն պետությունն ու կրոնը. «Հույսս կապում եմ Աստծո հետ, որպես հայ ավանդական

*ընտանիքի մայր, Աստված ինչպես առաջնորդի, այնպես էլ թող լինի» (Ամասիա, իգ., 29 տ., ամուսնացած): «Պետությունը պտի անի, ո՞վ պիտի անի» (Շենավան, իգ., 75 տ., այրի):*

Տարիքային բաժանումներով՝ փոփոխությունների իրականացման մեջ պետության/ղեկավարության առաջնայնությունն ու կարևորությունը մատնանշում են հատկապես միջին և միջինից բարձր տարիքային խմբերի գրուցակիցները, եթե անգամ հարցը վերաբերում է իրենց նեղ անձնական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին, այդ թվում՝ ընտանեկան խաղաղ մթնոլորտ ունենալուն: Այս տարիքային խմբի գրուցակիցները իրենց առօրյայում տեղի ունեցող բոլոր փոփոխությունների հիմքում տեսնում են միայն ֆինանսական միջոցների առկայությունը:

**Փաստորեն, միջին և բարձր տարիքի սերնդի հարցվողների պատկերացումներում պահպանվել են խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված ընկալումները՝ խնդիրների և պետության միջև գոյություն ունեցող ուղիղ և անմիջական կապի վերաբերյալ:** Նրանք բոլոր խնդիրների լուծումն ու փոփոխությունների իրականացումն ուղղակի և անուղղակիորեն կապում են աշխատանքի բացակայության հետ, ինչը համապատասխանում է խորհրդային շրջանի այն պատկերացումներին, որ պետությունը պետք է ստեղծի աշխատատեղեր:

Երիտասարդ գրուցակիցների շրջանում՝ հատկապես քաղաքային միջավայրերում, առավել թույլ է արտահայտված կամ բացակայում է նման ընկալումը: Վերջիններս արդեն տեսնում են առօրեական փոփոխությունների մեջ իրենց գործուն դերը. «Որ ուզում ես կողքդ ամեն ինչ փոխվի, սկզբից քեզ փոխիր» (Կենտրոն, ար., 21 տ., ամուրի):

Այսպիսով, ելնելով հետազոտության արդյունքներից, կարող են փաստել.

- Մեր հետազոտության կին գրուցակիցների մեծ մասը չի ցանկանում իր առօրյայում փոփոխություններ իրականացնել:

Չնայած առօրյա աշխատանքների մեջ նրանց մեծ ներգրավվածությանը և որոշումների կայացմանը սահմանափակ մասնակցությանը՝ վերջիններս չեն բարձրաձայնում դրանք փոփոխելու ցանկության մասին:

- Զրուցակիցների մի մասն անգամ չի էլ մտածել որևէ փոփոխություն իրականացնելու մասին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք իրենց առօրյայի ձևավորումը համարում են ինքնստիճյան կազմակերպվող, և, դրանից ելնելով, չեն պատկերացնում, որ կարող են այն փոխել, կամ հնարավոր է այն փոխել:
- Զրուցակիցների կողմից նշված փոփոխությունները հիմնականում ունեն նեղ կենցաղային բնույթ՝ գույքի ձեռքբերման և/կամ տան վերանորոգման հարցերի ընդգրկմամբ:
- Առօրյայում իրենց ցանկալի փոփոխությունները չիրականացնելը պայմանավորում են միայն սոցիալ-տնտեսական գործոններով: Այս հարցում, ըստ տարիքի, զրուցակիցների մեջ գերակշռողը խորհրդային շրջանի սերունդն է՝ խորհրդային գաղափարախոսությամբ, որի հիմքում բազիսն էր՝ տնտեսությունը, և դրանից ածանցվող մյուս ոլորտները: Այսինքն՝ կարող ենք ասել, որ այս տարիքային խմբում դեռևս խորհրդային գաղափարախոսությամբ պայմանավորված ընկալումն է գործում:
- Մշակութային միջավայրը և լուսավորության միջոցների բազմազանությունը նպաստում են աշխարհայացքի ձևավորմանը և ընկալումների փոփոխությանը, ինչը մեր հետազոտության շրջանակներում երևում էր Կապան քաղաքում և Երևանում բնակվող զրուցակիցների դեպքում: Եթե գյուղական միջավայրում բնակվող կինը, որպես իր անձնական կյանքում տեղի ունեցող կամ ակնկալվող փոփոխություն, նշում է տանիքի վերանորոգումը և/կամ լվացքի մեքենայի ձեռքբերումը, ապա վերը նշված քաղաքների զրուցակիցները նշում են աշխատանքային բարձունքների հասնելը, կայանալը,

հոգևոր խաղաղություն ունենալը, ընտանիքի մոդելը փոխելը:

- **Փաստորեն, մշակութային առումով այնքան ուժեղ է դրված առօրյայի կազմակերպման հարցն ըստ սեռերի, որ կանայք չեն մտածում այն փոխելու մասին:**

### 2.3 ԺԱՄԱՆՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Այս թեմայում ընդգրկել ենք ընտանիքում, համայնքում և համայնքից դուրս կանանց ժամանցի կազմակերպման դիտարկումը: Մեր գրեթե բոլոր թիրախային գյուղական համայնքներում, եթե կան ժամանցի վայրեր, ապա դրանք նախատեսված են միայն տղամարդկանց համար, որտեղ կանանց մուտքն արգելված է՝ հատկապես միջինից ցածր սերնդի համար: Այսինքն՝ համայնքի ներսում սահմանված է տեղաշարժվելու և համայնքային տարածքներից օգտվելու հստակ բաժանում երկու սեռերի միջև. «Երիտասարդների համար հա, սրճարանի, կաֆեի նմանեցնող մի տեղ, որ ասենք, նստում են՝ ուտել-խմելու, խոսալու, տենց տեղեր էլ կան: Աղջիկները չեն գնում տենց տեղ: Աղջկա հետ գնալու տեղ չի, տղու հետ գնալու տեղ ա: Խաղեր են խաղում, նենց մթնոլորտ ա, որ ասենք աղջկա տեղ չի էլի» (Սարուխան, ար., 28 տ., ամուրի): «Բիլիարդ կա, սեղանի թենիս, շաշկի, շախմատ: Մենակ տղամարդիկ են գնում: Ավանդույթի համաձայն՝ կանանց չի կարելի գյուղում ժամանցի վայրեր գնալ: Օրինակ այգի կա, կանայք գնում են, բայց երեխաների հետ, եթե երկուսով գնան, այգում նստեն՝ բամբասանք կստացվի» (Ամասիա, ար., 23 տ., ամուրի):

Հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ ժամանցի կազմակերպման առումով կանայք ունեն երկու սահմանափակում կամ երկու կախվածություն տղամարդկանցից. նախ՝ տարածքն է բաժանված կնոջ և տղամարդու միջև, մյուս կողմից՝ առանց տղամարդու թույլտվության՝ կինը չի կարող կազմակերպել իր առօրյայի այն մասը, որը վերաբերում է ժամանցին: Գյուղական համայնքներում միակ վայրը, որտեղ կինը կարող է գնալ, հարևանի տունն է՝ սուրճ խմելու, այն էլ ոչ բոլոր դեպքերում. «Մենակով միայն գնում եմ հարևանի տուն՝ սուրճ

խմելու» (Ամասիա, իգ., 33 տ., ամուսնացած): «Մենակով հարևանների տուն կարող ա պահի տակ մտքովս անցնի, կամ ինքը զանգի, գնամ, կոֆե խմեմ, գամ» (Դավթաշեն, իգ., 54 տ., ամուսնացած):

Կանանց մասնակցությունը ժամանցի կազմակերպմանը մեծանում է այն դեպքերում, երբ ընտանիքով հյուր են գնում որևէ ազգականի տուն: Սակայն սա չի վերաբերում ամուսնու ընկերոջ տուն գնալուն, մանավանդ, եթե այնտեղ հիմնականում տղամարդիկ են. «Եթե սաղ տղամարդիկ են ու պետք ա մենակ իմ կինը ըլնի, չէ, հաստատ մենակ եմ գնում»: (Դրախտիկ, ար., 31 տ., ամուսնացած):

Եթե կնոջ ժամանցի կազմակերպումը տեղի առումով վերահսկվում է տղամարդու կողմից, ապա հյուր գնալիս ինչ տանելը՝ սկեսուրի. «Էն բանը, որ ինքը ուզում էր վերահսկեր, էդ էն էր, որ ես հյուր գնալուց պետք ա իմ հետ ինչ-որ մի տուփ կանֆետի վերցնեի կամ սուրճ, որպեսզի ես չտանեի դա: Գնում ես՝ դատարկ գնա, կամ էլ՝ իմ տղեն էդքան չի աշխատում, որ դու վնաս ես հասցնում» (Ապարան, իգ., 35 տ., ամուսնալուծված):

Ոչ շատ, սակայն հանդիպեցինք նաև այնպիսի դեպքերի, երբ սկեսուրները հյուր գնալիս չեն ուզում, որ տան հարսներն էլ իրենց հետ գնան, ինչի համար ունեն իրենց բացատրությունը. «Օրինակ, էս անգամ իմ եղբոր էրեխու տրնդեզն էր, հարսանիքն էր, մենակ ես եմ գնացել, իմ տղեն պոստի էր, իմ հարսն էլ... դե կվարտիրա, քուր ու ախպեր ենք հավաքվել, մի սենյակում, որ 40 մարդ ա նստում» (Դրախտիկ, իգ., 56 տ., ամուսնացած):

Գյուղական համայնքների կին բնակիչները կարողանում են ժամանցի վայր գնալ, երբ ելնելով առողջական խնդիրներից՝ գնում են քաղաք՝ բժշկի: Այս տարբերակը գործում է հատկապես այն դեպքում, երբ հիվանդանոցը գտնվում է Երևանում. «Ես ժամանցի վայրեր գնում եմ էն ժամանակ, երբ գնում եմ բժշկի: Երևան ես մենակ բժշկի եմ գնում» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած): Երևանում ժամանցի վայր գնալն ավելի հեշտ է, քանի որ կին-տղամարդ բաժանումն այստեղ կամ շատ թույլ է ձևավորված, կամ իսպառ բացակայում է:

Մարգային համայնքներում այնքան է կարծրացած ժամանցի վայրերի բաժանումը կնոջ և տղամարդու միջև, որ անգամ չեն պատկերացնում այդպիսի հնարավորության մասին. «Գյուղում դժվար ա պատկերացնել կանանց համար ժամանցի վայր» (Դավթաշեն, ար., 28 տ., ամուրի): Այդ երևույթի ընկալումներն այնքան խորն են, որ այդ հարցի մասին նույն կերպ են մտածում նաև կանայք: Չեն կարողանում պատասխանել, թե իրենց համայնքում ինչ ժամանցի վայր կուզենային լինել, որտեղ կկարողանային այցելել նաև իրենք: Ավելին, դա այնքան չեն կարևորում, որ հիշյալ հարցին կին զրուցակիցը այլ պատասխան է տալիս. «Գիտեք ինչ եմ ուզում լինի, որ աշխատանքի տեղ բացեն, մենք աշխատենք» (Ապարան, իգ., 50 տ., ամուսնացած):

Ինչպես արդեն նշեցինք, գյուղական համայնքներում միակ տեղը, որտեղ կինը կարող է միայնակ գնալ՝ հարևանի տուն գնալն է՝ սուրճ խմելու: Մինչդեռ մարգային, քաղաքային համայնքներում ու հատկապես Կապան քաղաքում ընդունված է աշխատանքային գործընկերների, ընկերուհիների տուն կամ նրանց հետ որևէ տեղ գնալը. «Հիմնականում իմ կողեգաների, ընկերների տուն եմ մենակ հյուր գնում» (Կապան, իգ., 32 տ., ամուրի): Հետաքրքիր է, որ գյուղական համայնքներում ընկերուհի ունենալ, ընկերուհու տուն գնալ իրավիճակների չհասնդիպեցինք:

Կենտրոն համայնքում ժամանցի կազմակերպման պատկերն այլ է: Այստեղ մի կողմից բազմազան են ժամանցի կազմակերպման վայրերը և ձևերը, մյուս կողմից՝ հստակ ընդգծված չէ դրանց բաժանումն ըստ սեռերի: Այս ամենը նպաստում է, որ հաճախակի փոփոխվեն նաև ժամանցի կազմակերպման նախասիրությունները. «Հա, մենակ եմ գնում, որովհետև էդքան հետաքրքիր տեղ չի՝ ինչ-որ մեկին հետո տանելու: Ես շփվում եմ ավելի շատ իմ ընկերներիս հետ, մինչև էդ՝ ավելի դասարանի աղջիկների հետ էինք, հիմա, ճիշտն ասած, փոխվել ա նախասիրություններս, հիմա մեր նկարչական շրջապատի ժողովուրդն ա ինձ ավելի գրավում, թեկուզ դաժե ինչ որ տեղ գնալ, Փարիզ-մարիզներ գնում եմ, էլի էդ նույն շրջապատն ունեմ» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):



Տարբեր են նաև ժամանցի կազմակերպման վայրերն՝ ըստ բնակավայրերի տիպի: Մարզային համայնքներում ժամանցի կազմակերպման վայրերը հիմնականում ազգակցա-արյունակցական և դրացիական համայնքի տներն են, այսինքն՝ ազգականների և հարևանների տուն այցելությունները: Կենտրոն համայնքում նախընտրությունն այլ է. ժամանցը կազմակերպվում է սրճարաններում, փաբերում, ակումբներում, խաղատներում, առանձնատներում. «Տներ շապրիչ ենք գնում, գիտեք րներ ոնց ենք գնում, ասենք եթե, օրինակ, մեր րնօրենը, ինձանից չորս րարով ա րոքր, ինքը հիմա իրան մի հապ պուճուրիկ րունիկ ա առել Ձորաղբյուրում, շապր պուճուրիկ էլի, մի մարդու հագով, էսպես ասած, իսկականից ու մենակ ա: Ասենք, ըրեղ լինում ա, մենք աղջիկներով հավաքվում ենք՝ առանց րդամարդկանց: Բայց շապր հաճախ նաև ռեսրորան, կաֆե և այլն, րենց» (Կենրոն, իգ., 58 ր., ամուսնալուծված): «Կամ քլաք կամ բուլիինգ, չգիտեմ, րենց րեղեր» (Կենրոն, ար., 21 ր., ամուրի):

Իսկ ինչպե՞ս է հայ ընտանիքներում կազմակերպվում հյուրին ընդունելը, հյուրասիրելը և ճանապարհելը: Ինչ մասնակցություն և սահմանափակումներ ունեն դրանց ՏՏ կանայք: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այս հարցում խնդիրը պայմանավորված է ոչ միայն տվյալ տան անդամների սեռային բաժանմամբ, այլև հյուրի սեռային պատկանելությամբ: Երբ տան հյուրը կին է, տան կանայք ներգրավվում են վերջինիս և դիմավորելու, և հյուրասիրելու, և ճանապարհելու հարցերում: Նման իրավիճակներում ՏՏ տղամարդիկ աշխատում են հնարավորինս մոտ չգտնվել հյուրին, որպեսզի վերջինս իրեն ավելի անկաշկանդ զգա: Ավելին, որոշ դեպքերում նրանց հյուրից մեկուսացնում են տան կանայք, ինչպես, օրինակ, Վարդենիսում ներգրավված դիտարկման ժամանակ: Երբ տանտիրուհին դիմավորեց մեզ ու հյուրասենյակ ուղեկցեց, որդին այնտեղ էր, բայց մեր մտնելուն պես գնաց րոքր հյուրանոց. ընդ որում՝ դա անելը մայրն առաջարկեց որդուն, որովհետև մտածեց, որ չարժե կանանց հետ նստել: Նույնիսկ այն դեպքում, երբ տանտիրուհին խոհանոցում սուրճ էր պատրաստում ու միրգ կտրում, իսկ հյուրը մենակ էր հյուրասենյակում, որդին չմիացավ նրան, ոչ էլ մայրն առաջարկեց որդուն

միանալ, այլ թռռներին ասաց, որ հյուրի հետ զրուցեն, մինչև ինքը գա: Երբ ճաշի ժամին վերադարձան նաև տան հարսն ու նրա սկեսրայրը, վերջինս բարևեց հյուրին և միացավ որդուն: Հարսը սկեսուրի հետ սկսեց ճաշի պատրաստություն տեսնել: Այդ ընթացքում նույնպես հյուրը մենակ էր, սակայն ո՛չ տանտերը, ո՛չ էլ նրա որդին չմիացան հյուրին, ավելին՝ սեղանը զցելու ընթացքում նրանք տանից դուրս եկան, որպեսզի ճաշելիս կանանց մենակ թողնեն:

Դավթաշեն գյուղում ևս ներգրավված դիտարկման ժամանակ ականատես եղանք նման իրավիճակի: Ընթրելուց հետո տան տղամարդիկ մի կողմ քաշվեցին՝ հյուրին թողնելով տան կանանց հետ: Սակայն երբ նրանց տուն եկավ ևս մեկ հյուր՝ տանտիրոջ եղբոր որդին, տղամարդիկ նորից մոտեցան սեղանին և սկսեցին սեղանից օգտվել, որպեսզի նա էլ օգտվի:

Երբ տան հյուրը տղամարդ է, ընդունված է, որ նրան դիմավորեն տղամարդիկ, հյուրասիրեն կանայք, ճանապարհեն տղամարդիկ: Հատկապես երիտասարդ հարսները չեն խառնվում տղամարդ հյուրին դիմավորելու և ճանապարհելու հարցերում. *«Որ մարդ ա գալիս, ես եմ, տան կնիկն եմ, դուրս եմ գալիս, ասում եմ՝ էկեք տուն: Կուզեմ՝ ասեմ, որ մեր հարսը զուսպ ա, ինքը բան չի անի՝ մամ, մարդ ա էկել: Օրինակ, իմ տղու ընկերները, որ գալիս են, գալիս ա՝ մամ, կանչում են, տես՝ ով ա: Ինքը դուրս չի գալիս, չի շփվում»* (Դրախտիկ, իգ., 56 տ., ամուսնացած): *«Պարզ ա, դիմավորելը ես եմ դիմավորում, բայց մատուցելը կինս ա անում»* (Դրախտիկ, ար., 31 տ., ամուսնացած):

Այնուհետև կցանկանայինք անդրադառնալ համացանցին և հեռուստատեսությանը, միաժամանակ և՛ որպես ժամանցի միջոց, և՛ գիտելիքի ձեռքբերման աղբյուր: Հատկապես կարևորել ենք երկրորդին անդրադառնալը՝ հասկանալու համար՝ անհրաժեշտության դեպքում ինչքանով է հնարավոր այդ միջոցները դիտարկել որպես ընկալումների փոփոխության ուղիներ:

Ժամանցի կազմակերպման տարբերակ է դիտարկվում համացանցից՝ հատկապես սոցիալական կայքերից օգտվելը: Առաջին հայացքից

այստեղ թվում է՝ խնդիրներ չկան, քանի որ համացանցի հասանելիությունը մեծացել է: Սակայն խնդիրը դրանից օգտվելու հնարավորությունների մեջ է: Կին գրուցակիցները կամ ժամանակ չունեն համացանցից օգտվելու, կամ տան անդամների կողմից դա առանձնապես չի ողջունվում: Ինչպես նշեց կին գրուցակիցներից մեկը, ինքը հիմնականում համացանցից օգտվում է հեռախոսով, քանի որ սկեսուրին դուր չի գալիս, երբ իրեն տեսնում է համակարգչի դիմաց նստած. *«Ինքը չի սիրում, որ ես համակարգչի դեմը նստեմ, խոսում աս: Ինչքան էլ մաքուր լինեք կողքերս, որ ինքը տեսնում աս նստած՝ սիրտը կանգնում աս»* (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած): Մեջքերենք նաև մի կին գրուցակցի նկարագրած իրավիճակ, ով հարազատների հետ վիրտուալ տարբերակով շփվում է ամուսնու միջոցով. *«Ասենք, եթե պետք աս ըլնում ինչ-որ մեկի հետ գրվելը, ես արտահայտվում եմ, ինքը (նկատի ունի ամուսնուն) գրում աս, մենք տենց խոսում ենք ու վերջ»* (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած): Սակայն նշենք, որ այս կնոջ կողմից այս իրավիճակը չի նշվել որպես բացասական երևույթ կամ դժգոհություն:

Չնայած այն հանգամանքին, որ այսօր բազմիցս խոսվում է համացանցի միջոցով գիտելիք ստանալու մեծ հնարավորության և մատչելիության մասին՝ այն այդ առումով իրագործելի չէ գյուղական համայնքներում: Նման միջավայրերում համացանցը չի օգտագործվում որպես գիտելիքի ձեռքբերման աղբյուր կամ միջոց: Այն հիմնականում ծառայում է որպես սոցիալական կայքերից օգտվելու և սերիալների կրկնությունը դիտելու միջոց: Հետևաբար համացանցը դիտարկել որպես տեղեկատվական և գիտելիքի ձեռքբերման միջոց գյուղական համայնքներում այնքան էլ ճիշտ չէ: Ի տարբերություն գյուղական համայնքների՝ քաղաքային միջավայրերում համացանցի կիրառելիությունն այլ է: Որպես ժամանցի միջոց օգտագործելուց զատ՝ այն օգտագործվում է որպես գիտելիքի ձեռքբերման միջոց, այդ թվում՝ մասնագիտական գրականություն կարդալու, լուրեր լսելու և այլն: *«Մասնագիտական գրականության, ընկերներին հետ եմ շփվում ֆեյսբուքով, բնականաբար լուրեր, աֆորիզմներ և այլն. (Կապան, իգ., 32 տ., ամուրի): «Նյութեր եմ կարդում մասնագիտության վերաբերյալ»* (Քանաքեռ-Չեյրուն, իգ., 20 տ., ամուրի):

Նույնը կարող ենք ասել նաև հեռուստատեսության մասին: Գյուղական համայնքներում առավել տարածված հեռուստահաղորդումներից են՝ սերիալները, «Մայրիկի եփածո ուրիշ է», «Ինչ եփել այսօր» հաղորդումները և այլն: Մինչդեռ Կենտրոն համայնքում բնակվող գրուցակիցների նախընտրություններն այլ են. «*Ես սիրում եմ նայել լավ ֆիլմեր, սիրում եմ քաղաքական թոք-շոուներ, ռուսական, որովհետև հայկականի քառակուսիությունը ինձ վաբշե նեռվերս քայքայում ա, և ես երբեք չեմ ուզեցել վեր կենամ ստեղծից գնամ, միշտ պատրիոտ եմ էղել, բայց մեկ-մեկ իսկապես հիասթափվում եմ՝ տեսնելով անգամ մեր ընտրվածների ուղեղը, մակարդակը և այլն: Ես շատ մեծ հաճույքով նայում եմ իրանց նախընտրական դեբատները, որովհետև, որ մեկն էլ խոսում ա, դու զգում ես, որ ինքը կիրթ մարդ ա, ինքը ունի մակարդակ, ինքը ունի ասելիք» (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված): «Օրինակ, շատ սիրում ենք *Следствие вела с Леонидом Каневским*, այդ հաղորդումը նայել» (Կենտրոն, իգ., 27 տ., ամուսնացած):*

### Այսպիսով.

- **Թիրախային համայնքներում՝ հատկապես գյուղական միջավայրերում, ժամանցի կազմակերպման վայրերը բաժանված են ըստ սեռերի, ընդ որում՝ դրանք հիմնականում համարվում են տղամարդկային:** Գյուղական համայնքներում դրանք այն տարածքներն են, որտեղ հավաքվում են տղամարդիկ՝ գրուցելու կամ որևէ խաղ՝ շախմատ, նարդի, թղթախաղ, խաղալու նպատակով: **Գյուղական համայնքներում կանանց համար նախատեսված ժամանցի վայրեր չկան, դրանք միայն տան տարածքներն են, որտեղ հավաքվում են սուրճ խմելու:** Ընդ որում՝ կանայք ևս քայլեր չեն նախաձեռնում՝ համայնքային տարածքները զուտ տղամարդկային դիտարկելու կարծրատիպը փոխելու ուղղությամբ:

Քաղաքային միջավայրերում պատկերը փոքր-ինչ այլ է: Այս տարածքներում կան ժամանցի վայրեր, որտեղ կանանց մուտքն ազատ է՝ ինչպես տղամարդկանց հետ, այնպես էլ՝ առանձին: Դրանք հիմնականում սրճարաններն են և զբոսայգիները: Ինչպես նշում էին մեր

կին գրուցակիցները, իրենք ևս այցելում են այդ ժամանցի վայրերը, երբ որևէ գործով գնում են Երևան:

- Փաստորեն, ինչպես աշխատանքների իրականացման և որոշումների կայացման դեպքում, ժամանցի կազմակերպման ժամանակ ևս գործում է «ներսի» և «դրսի» սկզբունքը: Դրսի հանրային տարածքներն ազատորեն օգտագործվում են տղամարդկանց կողմից, այսինքն՝ տղամարդկային են, մինչդեռ միակ տարածքը, որտեղ կանայք կարող են ազատորեն կազմակերպել իրենց ժամանցը՝ տան ներսի տարածքն է:
- Ինչպես նշել ենք, համայնքային որոշումների կայացման և հանրային քննարկումներին մասնակցելու հարցերում կանայք ունեն սահմանափակ դերակատարություն: Հատկապես մարզային համայնքներում քաղաքականությանը, համայնքին վերաբերող քննարկումները հիմնականում տեղի են ունենում հենց ժամանցի նպատակով (և ոչ միայն) կազմակերպվող հավաքների ժամանակ: Փաստորեն կանայք, չկարողանալով կազմակերպել իրենց ժամանցը հանրային վայրերում, չկարողանալով մուտք ունենալ տղամարդկային համարվող տարածքներում, չեն կարողանում մասնակցել նաև հանրային որոշումների կայացմանը և քննարկմանը:

## 2.4 ԵՐԵՎԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Դաստիարակություն» տերմինի ընկալումը հետազոտության մասնակիցների շրջանում բավական հարաբերական է: Դաստիարակություն ասելով՝ գրուցակիցները հիմնականում հասկանում են երեխաների կրթությանը վերաբերող հարցերը, նկատողություն անելը և ֆիզիկական գործողություններ սովորեցնելը: Զրուցակիցների պատասխաններից երևում է, որ դաստիարակության ընթացքում կամ քիչ են կարևորվում, կամ գրեթե չեն կարևորվում համամարդկային արժեքները, երեխաներին դաստիարակելը՝ անկախ սեռային պատկանելությունից: Այն հարցին, թե ինչքանով են ծնողները ներգրավված երեխաների դաստիարակության հարցում կամ որ ծնողն

ինչքանով է զբաղվում երեխաների դաստիարակությամբ, զրուցակիցներն անմիջապես արձագանքում են, թե այն իրականացնում են հավասար կերպով: Սակայն առավել մանրամասն դիտարկումները ցույց են տալիս, որ պատկերն իրականում այլ է:

Ինչպես կրթության վերաբերյալ որոշումների կայացման հարցում, այնպես էլ դաստիարակության մեջ հայրերը ներգրավվում են այն դեպքում, երբ կարիք է լինում երեխաներին նկատողություն անել կամ սաստել: Նման դեպքերում հայրերին ներգրավում են մայրերը. *«Երբ մի քիչ չարություն են անում, այդ ժամանակ նոր խառնվում են»* (Վարդենիս, իգ., 62 տ., այրի): *«Երբ հարցը կապված ա փղու վերաբերյալ, դա լինի անկարգություն գյուղում, դա կլինի պապասխանել ծնողին, ինչը, որ փղուն ա պեպք, դրանով զբաղվում ա իհարկե հայրը: Ինչը ինձ դուր չի գալի իրանց մեջ, ես բողոքում եմ հորը, ինքն էլ իրանց դաստիարակում ա»* (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած):

Նախորդ բաժիններում ներկայացված բոլոր խնդիրների հիմքը կարելի է տեսնել երեխաների դաստիարակության մեջ: Դեռ փոքր տարիքից սկսած՝ աղջիկ երեխաների մեջ դրվում են «կնոջը բնորոշ» և «կնոջ համար կարևոր» հատկանիշներ, իսկ տղա երեխաների մեջ՝ «տղամարդուն բնորոշ»: Ընդունված է այն մոտեցումը, որ աղջիկ երեխաների դաստիարակությամբ ավելի շատ պետք է մայրերը զբաղվեն, տղա երեխաների դաստիարակությամբ՝ հայրերը. *«Իհարկե, իմ կարծիքով ըրտենց ա, հոր դաստիարակությունն ուրիշ ա: Ինչքան էլ ես դաստիարակեմ, հոր կարիքն ավելի շատ ա զգացվում՝ որպես փղա երեխաներ»* (Վարդենիս, իգ., 28 տ., ամուսնացած): *«Օրինակ էս վերջերս ուզեցել էին, ծխել փային էս թաղի երեխեքից, հերը իմացել էր, վրեն խոսացել էր: Ասում ա՝ մի ծխի, լավ բան չի: Ըրտենց հանգիստ խոսացել ա, ինքն էլ հասկացել ա»* (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):

Երեխայի սեռով պայմանավորված դաստիարակության տարբերությունը ծնողները բացատրում են ավանդույթի ուժով. *«Դե, ըստ երևույթի, աղջկա սխալների համար միշտ կմեղադրեն մորը, էր*

*ա ճիշտը, ավանդույթն ա տենց տալիս ու տենց էլ կա: Իմ կարծիքը: Քայց տղերքը մնում են տղերք, որը պիտի հայրը դաստիարակի» (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած):*

Այնքան ցայտուն են արտահայտված ծնողների ներգրավվածության տարբերությունները երեխաների դաստիարակության հարցում, որ արդեն սեռահասուն տարիքում աղջիկ երեխաները ամաչում կամ վախենում են իրենց խնդիրների մասին խոսել հայրերի հետ. «Որ տղաները մոտիկանում են, ինքը իրա հորից վախենում ա ասի, ամաչում ա: Վերջերս էլ իրեն ասեցի, մի ամաչի, աղջիկ էս, էտի բնական բան ա, հերդ էլ գել ու գազան չի: Ասում եմ՝ պապային ասա, որ ուզողներ ունես: Թող պապան խոսի էտ տղեքի հետ, որ քեզի բան չանեն» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):

Չնայած աղջիկ երեխաների դաստիարակությամբ զբաղվում են հիմնականում մայրերը, սակայն հայրերը ևս սկսում են ներգրավվել հատկապես այն հարցերում, ինչը կարող է վնասել իրենց հեղինակությանը, այդ թվում՝ մասնագիտության որոշման դեպքում. «Ինքը ուզում ա վայենի գծով, հերը չի թողնում, ասում ա՛ էտի քո տեղը չի» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):

Երեխաների դաստիարակության ձևերը փոխվում են՝ կախված ընտանիքի կառուցվածքից: Եռասերունդ և քառասերունդ ընտանիքներում այդ հարցին մասնակցում են՝ երեխայի ծնողները, տատիկները, պապիկները, վերջիններիս ծնողները, հորեղբայրներն ու նրանց կանայք և այլն: Նման ընտանիքներում մայրերի դաստիարակությունը երկրորդական բնույթ ունի, քանի որ առավել ավագ սերունդն իր ձեռքն է վերցնում երեխայի դաստիարակությունը: Կամո գյուղում իրականացված ներգրավված դիտարկման ժամանակ զրուցակիցը պատմեց, որ սկեսրայրի եղբոր ընտանիքի հետ ապրելիս, երբ իրենց հետ ապրել է նաև սկեսրայրի մայրը, երեխաների դաստիարակության հարցերով նրանց հետ անընդհատ բախումներ/կոնֆլիկտներ է ունեցել. ավագ սերունդը սխալ է համարել երեխայի մոր դաստիարակությունը, քանի որ վերջինս բարձրագույն կրթություն է ունեցել և

երեխաներին փորձել է դաստիարակել այնպիսի մեթոդներով, որոնք ընդունված չեն գյուղական միջավայրում: Խնդիրն այնքան լուրջ է եղել, և ամուսիններն այնքան են վիճաբանել, որ պատահել է՝ ամուսինը հարվածել է կնոջը:

Քանի որ մայրաքաղաքում իրադարձություններն ու զարգացումներն ավելի արագ են տեղի ունենում, և դրանց պետք է հարմարվել ոչ թե ըստ սեռի, այլ ըստ առաջացած իրավիճակի, տարբեր են նաև երեխաների դաստիարակության մոտեցումները: Երևանի Կենտրոն համայնքում ավելի թույլ են արտահայտված սեռով պայմանավորված դաստիարակության տարբերությունները. *«Եթե որպես մամա աղջկան պետք ա սովորեցնես, որ ինքը ավելի փնտրեցվար լինի, խազայստվենի ինչ-որ բաներ, ես կարող եմ իմ աղջկան սովորացնել՝ ոնց կարելի ա փողը փնտրեսել: Դե գիտեք ինչ, եթե մտածես, պապան պետք ա տղային տա ինչ-որ տղամարդկային սկզբունքներ, հա, մաման պտի աղջկան տա, բայց հիմա, էսօրվա կյանքում ես արդեն չեմ կարող, դա ինչ-որ թեորիա է ստացվում: Դա պռոստը տեսություն ա, որ եթե տղան պտի կարողանա մեխ խփի, էդ պապան ա իրան սովորացնում, բայց մեր տանը հիմա մեխերը խփումա Աննան (իր աղջիկն է): Եվ ես գիտեմ, որ էսօրվա ժամանակակից տղաների մեջ լիքը տղաներ կան, որոնք չեն կարողանում փնտրեսական ինչ-որ գործեր անեն: Աննան, որ պուճուր էրեխա էր, անգամ մի մոմենտ, որ փակվեցին կոշկակարանոցները, բան, ինքը մեր կոշիկները սարքում էր, ռեզին էր կտրում խփում կրունկի վրա»* (Կենտրոն, իգ., 58 տ., ամուսնալուծված):

Աղջիկ երեխաների դերը ընտանիքի լավ մայր լինելու և երեխաներ ունենալու կարևորությունից դուրս գրեթե չի ընկալվում: Աղջիկ երեխան ապագայում պետք է լինի խելոք, լավ մայր, լավ հարս, պահի իր հայրական ընտանիքի պատիվը, լավ երեխաներ դաստիարակի. *«Լավ հարս ըլներ, ապագայում լավ մայր ըլներ, և սիրված կին»* (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած): *«Լավ ընտանիքի կին դառնա, լավ ընտանիքի, էրեխու մայր դառնա»* (Վարդենիս, ար., 52 տ., ամուսնացած): *«խելոք ընտանիք ընկնեն, խելոք լինեն»* (Վարդենիս, իգ., 62 տ., այրի):



Ի տարբերություն աղջիկ երեխաների՝ տղաների դերն առավել է կարևորվում. նրանք դիտվում են որպես ընտանիքի սյուն, ծուխ, ժառանգորդ, խելացի, մարդ, ում ներկայությամբ պետք է հպարտանալ. «Տղա էրեխեն դե սյուն ա քո օջախում, որին որ հենվում ես, ավանդույթով քո ծուխը ծխողն ա, մեծերի ասած: Դրանով հպարտանում ես, հայրերը իրանց լավ են զգում» (Դրախտիկ, իգ., 40 տ., ամուսնացած): «Որպես ընտանիքի ժառանգորդ: Կարևորը, որ կա օջախի ծուխը (նկատի ունի ծուխը վառ պահող), ամենակարևորը իմ համար էր նշանակություն ունի» (Վարդենիս, ար., 52 տ., ամուսնացած): «Որպես լավ համբավ ունեցող, ամենակարևորը խելոք» (Վարդենիս, իգ., 62 տ., այրի):

Կամո գյուղում ներգրավված դիտարկման ժամանակ ևս նկատեցինք երեխաների սեռով պայմանավորված դաստիարակության և կարծիքի արտահայտման տարբերություններ: Տղա երեխայի մասին խոսելիս պապը պարծենում էր, թե հայրենասիրական, զինվորական երգեր է լսում, ասում էր, որ երեխան ուժեղ տղամարդ է մեծանալու, իսկ աղջիկ թոռանն այդ ընթացքում նկատողություն էր անում՝ վերարկուն բազմոցին զգելու համար:

Պետք է նշել, որ երեխաների դաստիարակության հարցում զրուցակիցների ընկալումների և իրականացված գործողությունների միջև առկա է հակասություն: Եթե խորին հարցազրույցների ժամանակ զրուցակիցները նշում էին, որ ընտանիքի անդամները կամ ծնողները հավասար չափով են ներգրավված երեխաների դաստիարակության հարցում, ներգրավված դիտարկումների ժամանակ ականատես եղանք այլ իրավիճակի: Վարդենիս քաղաքում ներգրավված դիտարկման օրը, երբ երեխայի մայրը տանը չէր, տատիկն էր նրանց սովորեցնում, թե ինչն է կարելի, ինչը՝ ոչ: Իրավիճակը փոխվեց, երբ մայրը վերադարձավ տուն. տատիկն այդ հարցն անմիջապես թողեց մոր վրա:

Նույն իրավիճակին ականատես եղանք նաև Ապարանում: Դիտարկման ժամանակ հայրը ողջ օրը տան վերանորոգման աշխատանքներով էր զբաղված, իսկ երեխաներին մայրն էր հետևում. օրինակ՝

հայրը բարկացավ որդու վրա, որպեսզի «դրսի» շորերով իր հետ շինարարություն չանի, հետո զգուշացրեց, որ փոշոտված շորերով դասի չգնա: Աղջկան նկատողություն արեց, որ դաշնամուրի պարապմունքին գնա համապատասխան շորերով, դպրոցից գալուց հետո երեխաներից հետաքրքրվեց, թե ինչպես են անցկացրել իրենց դասերը, իսկ պարապմունքից հետո ճշտեց, թե աղջիկն ինչպես է այս անգամ նվագել: Սակայն այս ամենով հանդերձ՝ երեխաների մայրն ասաց, որ ընտանիքի բոլոր անդամներն էլ զբաղվում են նրանց դաստիարակությամբ:

Հաջորդ հակասական իրավիճակը, որին հանդիպեցինք, երեխաների դաստիարակության մեջ տարբերություն դնելն էր՝ պայմանավորաձեռ երեխայի սեռով: Ներգրավված դիտարկումներից մեկի ժամանակ տան անդամները նշեցին, որ իրենց ընտանիքում երեխաների դաստիարակության հարցում ոչ մի տարբերություն չեն դնում: Սակայն որոշ ժամանակ անց, երբ թիրախային ընտանիքը հյուրի համար ընթրիք պետք է պատրաստեր և մատուցեր, աղջիկ երեխային մայրն ու տատն ուղղորդեցին ներգրավվել այդ աշխատանքներում, մինչդեռ տղա երեխային ուղարկեցին հոր մոտ՝ ասելով, թե նա տղամարդ է և իրենց հետ գործ չունի: Այսինքն՝ «տարբերություն չդնել» ասելով՝ նրանք նկատի ունեին երեխաների խնամքի, ոչ թե դաստիարակության հետ կապված հարցերը (*Վարդենիս*):

### Այսպիսով.

6. Երեխաների դաստիարակության հարցում առկա է նկատելի տարբերություն՝ պայմանավորված նրանց սեռով: **Աղջիկ երեխաների դաստիարակությամբ հիմնականում զբաղվում է մայրը, ընդ որում՝ մայրը պետք է այնպես դաստիարակի աղջիկ երեխային, որպեսզի վերջինս և՛ մոր պատիվը բարձր պահի, և՛ ընտանիքի/գերդաստանի, հատկապես՝ տղամարդկանց: Դեռ փոքր տարիքից աղջիկ երեխայի մեջ պետք է սերմանել կնոջը բնորոշ վարքային դրսևորումներ և պարտականություններ:** Հայրերը գրեթե մասնակցություն չեն ունենում այդ հարցում՝ բացառությամբ կրթությանը վերաբերող որոշ հարցերի:

Տղա երեխաների դաստիարակության հարցում արդեն մասնակցում են նաև հայրերը, բայց որոշակի վերապահումներով: Նրանք ներգրավվում են հատկապես այն ժամանակ, երբ տղա երեխաները չեն ենթարկվում մորը, նաև՝ երբ խոսքը վերաբերում է տղամարդկային արժեքներին: Ինչ վերաբերում է կրթությանը, ապա հայրերի մասնակցությունը հիմնականում դրսևորվում է այն ժամանակ, երբ երեխան հաճախում է որևէ սպորտային խմբակի:

- Երեխաների դաստիարակությունը բարդ է հատկապես եռասերունդ և քառասերունդ ընտանիքներում, երբ դրան միաժամանակ մասնակցում են մի քանի սերնդի ներկայացուցիչներ: Այդ դեպքում նրանցից յուրաքանչյուրն առաջնորդվում է դաստիարակության վերաբերյալ ունեցած իր «ճշտով» ու պատկերացումներով, և երեխային դաստիարակելու մոդելը դառնում է անհասկանալի: Նման իրավիճակները խնդրահարույց են հատկապես այն դեպքում, երբ առավել երիտասարդ սերունդն (երեխաների մայրը, հայրը) ունի բարձրագույն կրթություն և խիստ տարբերվում է դաստիարակության վերաբերյալ ունեցած իր ընկալումներով և մեթոդներով:
- Կին-տղամարդ բաժանումը աշխատանքների, որոշումների կայացման մեջ սկսվում է փոքր հասակից: Տղա երեխաներին չներգրավվելով կանացի համարվող աշխատանքներում՝ խրախուսվում է նրանց մասնակցությունը միայն այն աշխատանքներին, որոնք տղամարդկային են:

### **3. ԱՄՓՈՓՈՒՄ.**

#### **Եզրակացություններ և առաջարկություններ**

Ինչպես արդեն նշեցինք, կին-տղամարդ անհավասարության կամ տարբերության վերաբերյալ խնդիրները կամ հարցադրումները տարբեր հետազոտությունների թիրախային առարկաներ են, ինչից կարելի է ենթադրել, որ այն խնդրահարույց թեմա է արդի հասարակությունում:

Կնոջ հանդեպ սահմանափակումները հայ հասարակությունում կիրառվել են դեռևս դարեր առաջ: Իստությունը կնոջ նկատմամբ դրսևորվել է փոքր, անչափահաս տարիքից և առավել խիստ է արտահայտվել ամուսնության տարիքում: Տարիների ընթացքում շարունակաբար ձևավորվել են սովորույթներ, որոնց միջոցով կնոջ նկատմամբ վերահսկողություն է իրականացվել ինչպես տան անդամների, այնպես էլ՝ հասարակության կողմից: Ինչպես պարզվեց մեր հետազոտության արդյունքում, դրանք շարունակվում են կիրառվել նաև մեր օրերում՝ դրսևորվելով մի շարք ոլորտներում և հարաբերություններում, առաջացնելով խոսքի և որոշումների կայացման սահմանափակում, տանից դուրս՝ համայնքային հարցերին մասնակցելու արգելքներ, փողոցում հայտնվելու հնարավորությունների սահմանափակում, ժամանակի միանձնյա կառավարման անհնարինություն և այլն:

Կնոջ կարգավիճակի ձևավորմանը մեր հասարակությունում նպաստել են մի շարք իրադարձություններ և հանգամանքներ. պատմաքաղաքական իրադարձություններ, բնակավայրերով (լեռնային և դաշտային շրջաններ) պայմանավորված հանգամանքներ, հարևան ժողովուրդների հետ տարբեր փոխառնչություններ, տարբեր շրջաններում ձևավորված ավանդույթներ, սովորույթներ և այլն:

Կնոջ և տղամարդու միջև առկա գենդերային անհավասար կարգավիճակի արդյունքում այսօր ունենք լուրջ խնդիրներ, ինչպես, օրինակ՝ սեռով պայմանավորված բռնությունները և երեխայի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները:

Ինչպես գիտենք, սեռով պայմանավորված հարաբերությունների նման կառուցվածքը բնորոշ է գրեթե բոլոր հայրիշխանական հասարակություններին: Իսկ երբվանից կամ ինչ հանգամանքներում սկիզբ դրվեց նման հարաբերությունների ձևավորումը: Հարցին իր պատասխանմեկնաբանությունն է տալիս մեր փորձագետներից Ն. Մարգարյանը. «Իրերի դրվածքը ստացվել է հեղուկ կերպ, որը շատ լավ ուսումնասիրված է հրեական կիրուցների օրինակով: Իսրայել պետությունը, որ նորից հավաքվեց, ջահելներ եկան հիմնականում քարոզչության շնորհիվ: Որ եկան, մեծամասնությունը սաղ ջահելներ էին և էր տղաներն ու աղջիկները նույն գործերը անում էին, աշխատանքի բաժանում չկար, աղջիկները տրակտոր էլ էին քշում, տղաներն էլ՝ հանրակացարաններում մաքրություն, ճաշ եփել: Հեղու երբ որ սկսեցին ամուսնանալ, երեխա պիտի ունենային, կինը էլ չէր կարող դրսի աշխատանքներ անել, առանձնացավ սկսեց տանը զբաղվել որոշակի աշխատանքներով: Տղան էլ ասեց, ոչինչ, դրսի սաղ աշխատանքը ես կանեմ: Մեր աչքի առաջ, 60-ականներից էր պրոցեսը երևաց (իրենք եկան էր տարածքում ապրելու 46-48 թթ.): Էն մյուս սերունդը արդեն փաստի հետ գործ ուներ, որ կանայք ավելի լավ է զբաղվեն էս աշխատանքով, իսկ տղամարդիկ՝ էս: Հենց էդպես, առանց որևէ մեկի դիտավորության, այլ իրար հետ համաձայնեցնելով՝ տեղի ունեցավ աշխատանքի բաժանումը: Դրսի աշխատանքները հարմար է, որ տղամարդն անի, իսկ ներսինը՝ կինը: Բացի դրանից՝ տղան կարող է 30 օր աշխատել դրսում, իսկ կինը չի կարող, քանի որ ինքն ունի ամսականներ» (Կրթության ոլորտի փորձագետ, Ն. Մարգարյան, Երևանի պետական համալսարան):

Հայրիշխանական բոլոր հասարակություններում եղել է տղամարդու գերակայություն կնոջ նկատմամբ: Սակայն Արևմուտքում տեղի են ունեցել իրադարձություններ, որոնց արդյունքում իրավիճակը փոխվել է: Ձևավորվել են նոր արժեքներ, և տեղի է ունեցել երևույթների վերաբժանում: Այդ ամենին նպաստել են հատկապես կրթական համակարգում իրականացվող փոփոխությունները: Իսկ մեր՝ հետխորհրդային միջավայրերը դեռևս մնացել են խորհրդային մոդելի պատկերացումների մեջ:

## Այսպիսով.

- Այն որ հասարակությունն ունի իր հստակ դերային պատկերացումները կին-տղամարդ հարաբերությունների վերաբերյալ, ակնհայտ է: Դրանից ելնելով՝ հասարակությունը որոշում է նաև կնոջ ներգրավվածության աստիճանը քաղաքական-հասարակական հարցերի քննարկումներում: **Այսպիսով՝ կանայք դուրս են մնում հասարակական կյանքում տեղի ունեցող հաղորդակցությունից, որի ժամանակ ձևավորվում կամ վերափոխվում են հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքներ, գաղափարներ, իրավիճակներ:** Հետազոտության մասնակիցների շրջանում նույնպես, ինչպես նկատեցինք, երևույթի վերաբերյալ տարածված է այն կարծիքը, որ **հասարակական կյանքը կառուցում են տղամարդիկ. նրանք են տիրապետում այն ձևավորելու և փոփոխելու կանոններին, իսկ կանայք չեն տիրապետում դրանց:** Կարող ենք նշել, որ տղամարդկանց կողմից հանրային կյանքին կանանց ունեցած մասնակցությունն արգելելը կամ դրան դեմ լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ չեն ցանկանում իրենց «իշխանությունը» հանձնել կանանց: Սակայն խնդիրը միայն դրանում չէ: Ինչպես ցույց տվեցին մեր հետազոտության նյութերը, կանայք, լինելով այն նույն մշակույթի կրողները, որտեղ կնոջը տրվում է սահմանափակ դերակատարություն, նույնպես չեն ձգտում այդ հարցում առաջընթաց ունենալ: **Փաստորեն տղամարդիկ մասնակցում են հանրային քննարկումներին, կայացնում որոշումներ, իսկ կանայք ենթարկվում են դրանց:**
- Տղամարդու կարծիքին առավելություն տալը բնական երևույթ է, որովհետև **մեր հասարակությունը հայրիշխանական է և ապրում է տղամարդկային փոխհարաբերությունների օրենքներով:** Եթե անգամ կանայք մասնակցում են որոշումների կայացմանը, ապա դրանք «փոքր» որոշումներ են: Բիզնեսի, մեծամասշտաբ առևտրի ոլորտները զուտ

տղամարդկային են, որոնցում կինը չի կարող մասնակցություն ունենալ: Անգամ տղամարդու բացակայության ժամանակ կինը չի կարող մասնակցել տղամարդկային որոշումների կայացմանը. նման իրավիճակներում այդ գործառույթն իրականացնում է համայնքի մեկ այլ տղամարդ կամ ազգական:

Կնոջ՝ որոշումների կայացման աստիճանը չի մեծանում և չի հավասարվում տղամարդուն անգամ այն դեպքերում, երբ նա գումար է վաստակում: Եթե անգամ կինն աշխատում է և տղամարդու հետ հավասար հոգում է ընտանիքի ապրուստի հարցը, այնուամենայնիվ, որոշումներ կայացնողի գործառույթը պատկանում է գլխավորապես տղամարդուն:

- **Առօրյայում իրականացվող աշխատանքները հստակ բաժանված են կնոջ և տղամարդու միջև:** Տղամարդկանց աշխատանք է համարվում այն ամենը, ինչը կապված է տանից դուրս իրականացվող աշխատանքների՝ բիզնեսի, գյուղատնտեսական մեծամասշտաբ աշխատանքների հետ և այլն: Կանացի գործեր են համարվում սննդի պատրաստումը, սեղան գցելը, հավաքելը, տան մաքրությանը վերաբերվող աշխատանքները՝ արդուկը, լվացքը և այլն, այսինքն՝ այսպես ասած՝ «ներսի» գործերը: Առօրյայում տղամարդու կողմից կնոջ համար նախատեսված գործերն իրականացնելը չի ողջունվում, ավելին՝ համարվում է ամոթալի: Որոշ դեպքերում բացառություն են կազմում քաղաքային միջավայրում բնակվող, միասերունդ/երկսերունդ ընտանիքի կազմ ունեցող և բարձրագույն կրթություն ունեցող ընտանիքները:

**Կնոջ մտքով անգամ չի անցնում, որ կարելի է ամուսնուն ներգրավել իր կողմից իրականացվող աշխատանքների մեջ,** ինչպես, օրինակ՝ լվացք կամ արդուկ անել: Շատ դեպքերում կանայք չեն ընկալում կամ չեն գիտակցում, որ այն, ինչ կատարվում է իրենց հետ կամ իրենց միջավայրում, անհավասարության դրսևորում է: Ավելին, քանի որ նման իրավիճակների մենք հաճախ ենք հանդիպում, դրանց կարևորություն չենք տալիս. դրանք արդեն իսկ սովորական երևույթ են մեզ համար:

Աշխատանքների իրականացման հարցում կա նաև կարգավիճակային տարբերություն: **Տնային աշխատանքներ իրականացնող կինը (տնային տնտեսուհի) ավելի քիչ հեղինակություն (ստատուս) ունի, քան տղամարդը, ով գումար է վաստակում և համարվում է ընտանիք պահող:** Այսինքն՝ կանացի աշխատանքները համարվում են պակաս կարևոր, քան՝ տղամարդկայինը: Որոշակի բացառություններով հանդերձ՝ դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ կինը միաժամանակ գումար է վաստակում:

- Խնդրի դիտարկումը, ըստ զրուցակիցների կրթական մակարդակի, միևնույնը չէ: Չենք կարող չարձանագրել, որ բարձրագույն կրթություն ունեցող որոշ զրուցակիցների ընկալումները տարբերվում են ընդհանուր պատկերից, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ բարձրագույն կրթական համակարգը (մշակութային կապիտալը) հնարավորություն է տալիս երևույթների մասին ավելի լայն պատկերացում ունենալ, քան ոչ գիտակցաբար ձեռք բերված գիտելիքի մակարդակում: Սակայն երևույթի ավանդույթային արմատներն այնքան խորն են և կարծրացած, որ մշակութային կապիտալի ձեռքբերումը միշտ չէ, որ կարող է փոխել իրավիճակը:
- Մեր հետազոտության շրջանակներում հանդիպեցինք իրավիճակների, որոնց հիմքում հարս-սկեսուր բախումն էր: Առաջին հայացքից թվում է, թե դրա հիմքում սերունդների բախումն է: Սակայն պատճառը միայն դա չէ: Դեռ մի քանի դար առաջ, ինչպես վկայում են ազգագրական նյութերը, կնոջ կարգավիճակը փոխվում է արդեն միջինից բարձր տարիքային խմբերում, երբ կինը սկսում է մասնակցել ընտանիքում որոշումների կայացմանը: Այսինքն՝ այդ տարիքից սկսած՝ կինն անցնում է տղամարդկային բևեռ և կարող է մասնակցել տղամարդկային որոշումների կայացմանը:

**Սկեսուրի կարգավիճակ ունեցող կինը սկսում է պաշտպանել տղամարդու իշխանությունը և հարսին թույլ չտալ, որ վերջինս խախտի ընտանիքում առկա այդ աստիճանակարգությունը:** Երևույթի վերաբերյալ իր մեկնաբանությունն է տալիս նաև



ազգագրագետ Ա. Թադևոսյանը. «Էստեղ շատ հստակ տղամարդ-կին բնեռների մեջ պայքար աս, անկախ նրանից, թե ֆիզիոլոգիապես էս պահին էս բնեռում գտնվողը կին աս, թե՛ տղամարդ: Այսինքն՝ էս խոսում աս նրա մասին, որ մենք գործ ունենք ինդիվիդուալիզմի ու խմբակայնության խնդրի հետ: Որովհետև, եթե մարդը անհատականություն աս, ինքը ունի սեփական դիրքը երևույթները գնահատելու: Բայց երբ որ մարդը անհատականություն չի, ինքը միաձուլ աս արված ճշմարտություններով: Երբ որ ինքը ստատուսը փոխում աս, սկեսուրի ստատուսին արված ճշմարտությունը տարբերվում աս հարսին արված ճշմարտությունից, ու ինքը շատ հոսուն ձևով, ինքն էլ հաշիվ չարտվ, թե ինչ եղավ իր հետ, ինքը վերցնում է այ էս ճշմարտությունները»: **Այսինքն՝ սկեսուրի կարգավիճակ ունեցող կինը սկսում է պահել իրենց ընտանիքի այն մոդելը, որը տղամարդակենտրոն է, և որտեղ պետք է իշխի տղամարդը:**

- **8-9 տարեկանից սկսած՝ երեխաների մեջ դրվում է սեռային-դերային բաժանում.** աղջիկ երեխաները ներգրավվում են կանանց համար նախատեսված աշխատանքների իրականացմանը, տղա երեխաները՝ տղամարդկանց: Այսինքն՝ այդ տարիքից երեխաները սկսում են յուրացնել հասարակության կողմից ձևավորված և թելադրվող նորմերը, թե ինչն է տղամարդկային, ինչը՝ կանացի: Ծնողի և հասարակության կողմից երեխաներին տրվում է գիտելիք իրենց սեռային պարտականությունների, առավելությունների և սահմանափակումների վերաբերյալ: Դաստիարակության փուլից սկսած՝ **աղջիկ երեխաների սահմանափակումներն ավելի շատ են, իսկ դաստիարակության ձևերն՝ ավելի խիստ:** Ինչպես, օրինակ՝ հազուստի նախընտրությունը, նստելաձևը, խոսելաձևը, վարքի կանոնները, տան պարտականություններին մասնակցելը և այլն: Նման մոտեցմամբ հասարակությունն աղջիկ երեխաներին նախապատրաստում է ապագայում իր սոցիալական դերին:

Ինչ վերաբերում է դաստիարակությանը, ապա դրանով զբաղվում են միայն մայրերը, քանի որ տղամարդը հիմնականում համարվում

է աշխատող և ապրուստի միջոց հայթայթող, իսկ կինը՝ տնային տնտեսուհու պարտականություններն իրականացնող: Որոշ դեպքերում հոր մասնակցությունը երեխայի դաստիարակության հարցում դառնում է անհնարին՝ տարիներ շարունակ արտագնա աշխատանքի մեջ գտնվելու պատճառով:

Ապագայում երեխաների վերաբերյալ դերային պատկերացումների հիմքում ևս սեռային բաժանումն է: **Աղջիկ երեխաներին ապագայում հիմնականում տեսնում են լավ մոր, լավ հարսի, լավ կնոջ, հայրական ընտանիքի պատիվը բարձր պահողի դերում: Այսինքն՝ չի դիտարկվում կնոջ դերը՝ որպես սուբյեկտ: Մինչդեռ տղա երեխաների դեպքում նրանք ներկայացվում են որպես անհատական որակների կրողներ, ինչպես նաև ընտանիքի շարունակությունն ապահովողներ:**

- **SS-ում ընդունվող որոշումներն ընկալվում են որպես իրենք իրենց կայացվող, այդ թվում՝ աշխատանքների բաժանումը կնոջ և տղամարդու միջև: Այդ ամենը համարվում են ի սկզբանե որոշված, և այն իրականացնողները չեն տեսնում իրենց մասնակցային դերը դրանց ձևավորման և/կամ փոփոխման հարցում:**
- Քննվող երևույթի վերաբերյալ ընկալումները փոխելու նպատակով կարևորագույն միջոց կարող է հանդիսանալ կրթական համակարգը: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, արդի կրթական համակարգը ոչ թե փոխում, այլ ամրացնում է կին-տղամարդ հարաբերություններում կնոջ երկրորդական դեր ունենալու պատկերացումները: Դրանք արտացոլված են ինչպես դպրոցական դասագրքերում, այնպես էլ՝ մանկավարժական կազմի ընկալումներում: Խնդիրը նաև այն է, որ դպրոցական դասագրքերը կազմողները խորհրդային ժամանակաշրջանի կրթություն ստացած սերունդն են, որոնց ընկալումներում կա այն կարծրատիպը, որ խորհրդային ժամանակաշրջանի կրթությունն ամենալավն է: Փորձագետ Ա. Թադևոսյանը խնդրի լուծումը տեսնում է կրթական համակարգում՝ արդեն

իսկ հաջողված օրինակները տեսնելով Արևմուտքում. «Որովհետև էնտեղ նաև ուսուցիչներն են փոխված, մտրեցումն ա փոխված, սեռերի հանդեպ վերաբերմունքի պրակտիկաներն են փոխված: Էնպես չի, որ փղաները անում են մենակ փղայական գործեր, իսկ աղջիկները՝ աղջկական: Եթե դասասենյակի խնամքի, մաքրության հետ կապված գործ են անում, ընենց չի, որ աղջիկները ավել են անում, փղաները՝ չազուճով մեխ են մեխում: Կամ եթե ուսուցչուհին հանձնարարում ա փղային ավել անել, մյուս օրը իրա մաման ու պապան չեն գալիս ուսուցչուհու հետ զրույցի, որ մեր փղային մի կտորեք, թող աղջկա գործ չանի: Ես գիտեմ դեպք, որ դպրոցում երեխայի մարերի վերջույթները կապված են նրա ուղեղի զարգացման հետ, կոնկրետ կրթահամալիր կա (նկատի ունի Երևանում), որտեղ դաս են անցնում, որտեղ երեխաները հյուսում են: Տղա երեխաներից մեկի հայրը եկել է դպրոց, որ իրա փղային չստիպեն էր դասը անի, որովհետև էր փղուն բնորոշ չի: Իրեն բացատրել են, որ դա երեխայի մրածողության, ուղեղի վրայա ազդում, կենսաբանական, ֆիզիոլոգիական կարևոր նշանակություն ունի երեխայի զարգացման գործում: Բայց էր հոր համար ավելի կարևոր էր եղել, որ իրա փղեն փղամարդ մնա, հանկարծ չղզիկանա, ձեռագործ անի, քան դա կապ ունենա երեխու զարգացման հետ: Վերջում էր երեխուն դպրոցից հանել էին ծնողները: Առիթ էր եղել նաև այն, որ ուսուցչուհին հանձնարարել էր նրանց փղային ավել հատակը, իսկ իրենց պատկերացմամբ փղաները պետք ա սեղանները դասավորեն, իսկ հատակը պետք ա աղջիկը ավլի» (Կրթության ոլորտի փորձագետ, Ա. Թադևոսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

Այն հարցին, թե այսօր կրթական համակարգում ևս հստակ արտահայտված է աղջիկ-տղա անհավասարությունը, անդրադառնում է նաև մեր փորձագետներից Հ. Գևորգյանը. «Ես սարսափում եմ մեր կրթությունից, մեր ուսուցիչներից, դասախոսների մտածողությունից: Միանշանակ շատ կարևոր ֆունկցիա ա, բայց, երբ որ կրթական

համակարգում մանկավարժը խոսում ա և օգտագործում նեգր բառը, կամ տղա երեխային դիտողություն անեն, որ մազերդ կտրի, երկար մազերով ինչի ես գալիս դպրոց, ու ծնող կանչեն (խոսքը Երևանի Կենտրոն համայնքում գտնվող դպրոցներից մեկի մասին է): Նորմալ է, որ տղաները կարող են չարություն անել, բայց աղջկներին քննադատում են դրա համար: Աղջիկները մենակ դասարանը պիտի մաքրեն: Էս մտածողությամբ մանկավարժները, որ կրթում են, մենք ինչ փոփոխություն ենք ուզում ունենալ: Տարրական գիտելիքներ չունեն մանկավարժները, թե որ փուլն է երեխայի համար ճգնաժամային, որ փուլում ա սկսվում սեռային հասունությունը» (*Կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ ոլորտի փորձագետ, Հ. Գևորգյան, Կանանց աջակցման կենտրոն*):

Մենք այսօր ունենք մասնավոր կրթահամալիրներ, որոնցում կրթության հիմքում ոչ թե սեռային տարբերակվածությունն է, այլ առավել համամարդկային արժեքները: Նման դպրոցներում տղաներն ու աղջիկներն իրար հետ ֆուտբոլ են խաղում, դասասենյակի մաքրությունն իրականացնում են հավասար, ոչ թե այնպես, ինչպես ընդունված էր խորհրդային դպրոցներում, որտեղ տղաները պետք է նստարանները դասավորեին, իսկ աղջիկները՝ սենյակն ավլեին: Առաջին հայացքից թվում է, թե նման կրթական հաստատություններում սովորած երեխաները կարող են լինել այն հիմքը, ովքեր մեր հասարակությունում կփոխեն կին-տղամարդ հարաբերությունների անհավասարությունը կամ տարբերությունը: Սակայն իրականությունն այլ է: Մեր մշակութային միջավայրում նման կարծրատիպերն այնքան արմատացած են, որ կամ արգելվում է այլ մտածողություն ունեցողների մուտքը, կամ նման մտածողության տեր անձինք գնում են այլ մշակութային միջավայրեր: «Շափ ծանր է լինում էփ բախումը, որովհետև իրենք ավելի քաղաքակիրթ արժեքների կրողն են էն իմաստով, որ իրենք ինդիվիդուալիստական մոտեցում ունեն, որի հիմքում ընկած ա իր սպեղծագործականության, անհատականության ռեալիզացումը, իսկ մնացած հարվածի համար խմբակայինն ա պետք, ռիմակայինը: Շափ դաժան ա էփ բախումը իմ դիփարկումներով, և էս երեխեքը շափ ճնշվում են էփ փոփ բաներից» (*Կրթության ոլորտի*

փորձագետ, Ա. Թադևոսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ): Կնոջ և տղամարդու հարաբերությունների անհավասարությունը կրթական համակարգում դրսևորվում է նաև ըստ մասնագիտությունների. «Կախված ա նաև ֆակուլտետից, տարբերություններ կարող ենք տեսնել: Օրինակ՝ պարմության ֆակուլտետի պարմության բաժինը ավելի պարիարխալ ա, քան արվեստաբանության կամ մշակութաբանության բաժինները: Նույնը կարող ենք տեսնել իրավաբանական ֆակուլտետում, որտեղ իրավաբանությունը ավելի շար համարվում ա տղամարդու գործ: Պարմություն պարմելն ա նաև համարվում տղամարդու գործ: Պարմությունը էտի ճիշտ ա, ոնց կարա աղջիկը ճիշտը ինքը պարմի, էն էլ ազգի ճիշտը: Աղջիկը կարա արվեստով զբաղվի» (Կրթության ոլորտի փորձագետ, Ա. Թադևոսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ): Կնոջ երկրորդային դերը կրթական համակարգում ակնհայտ է նաև գիտության ոլորտում կայանալու հարցում, որտեղ նախապատվությունը տրվում է տղաներին. «Ասենք շար մասնագիտություններ կան, որ էտ հին մոտեցումը կա, որ ասում են՝ աղջկա չենք վերցնի ասպիրանտ, պիտի պասկվի գնա, կորած ա աղջիկը» (Կրթության ոլորտի փորձագետ, Ա. Թադևոսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

- Այնուհետև անդրադառնալով խնդրի իրավական կողմին՝ պետք է նշել, որ այստեղ ևս առկա է **խտրական վերաբերմունք կնոջ նկատմամբ: Այդ ոլորտում աշխատողները, հիմնականում լինելով տղամարդ և կրելով հասարակությունում իրենց տրված իշխողի դերը, չեն կարողանում իրենց տեսակին մեղադրել, երբ խոսքը վերաբերում է ընտանեկան միջադեպերին.** «Կնոջն են մեղադրում՝ ինչի ես փնթի, որ ամուսինդ թողել գնացել է: Էս մակարդակի խոսակցություններ են լինում դարարաններում (Կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ ոլորտի փորձագետ, Հ. Գևորգյան, Կանանց աջակցման կենտրոն): Նույն խնդրի մասին բարձրաձայնում է նաև օրենսդրական դաշտի փորձագետը՝ նշելով. «Դարավորները չունեն էտ գենդերային զգայունությունը, չունեն էտ

մոտեցումները, այսինքն՝ իրանք էլ իրավիճակում ավելի շատ որպես մարդ են, որպես հասարակության անդամ են իրանց մոտեցումները ցուցաբերում, քան որպես դատավոր, որ պետք ա օրենքի տառին հետևի» (Օրենսդրական դաշտի փորձագետ, Ն. Փիլիպոսյան, Կանանց ռեսուրսային կենտրոն): Օրենսդրական դաշտում առկա թերություններն ու բացերն այնքան շատ են, որ, **եթե կինը, ֆիզիկական բռնությունից բացի, ենթարկվում է բռնության այլ տեսակների, ապա իրավական կողմով չի կարող պաշտպանվել.** «Չկա նման օրենք: Էն օրենքը, որ Ստամբուլյան կոնվենցիան են ստորագրել, ինքը հստակ, եթե լիներ, ինքը պիտի լիներ հոգեբանական բռնության շարքում ու պիտի քրեական պատասխանատվության ենթարկեր: Բայց քանի որ մեր օրենքը ավելի Ռուսաստանին ա մոտ ու քրեականացված չի, բնականաբար, մենք շատ քիչ օգնություն ենք կարողանալու տալ: Հիմա էլ գրվում են ենթաօրենսդրական ակտեր, ու էն, ինչ որ պետական կառույցներն են քննարկում...իրենք չեն հասկանում, չեն ընդունում, որ կնոջը ծեծելը, նվաստացնելը, հետապնդելը դա հանցագործություն ա» (Կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ ոլորտի փորձագետ, Հ. Գևորգյան, Կանանց աջակցման կենտրոն):

Որոշ դեպքերում, իրավական դաշտը և մշակութային միջավայրը միաձուլյալ հանդես գալով, առավել սահամանափակում են կնոջ իրավունքները՝ մի քանի առումներով: Խոսքը վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ տղամարդը զբաղեցնում է որևէ պաշտոն. «Մանավանդ էն դեպքերում, երբ ամուսինը հասարակության մեջ դիրք ունեցող անձ ա, օրինակ՝ պաշտոնյա ա կամ քրեական հեղինակություն ա, շատ ավելի դժվար ա լինում: Նման դեպքեր ունեցել ենք ու իրոք դժվար ա լինում էլ կնոջ համար, որովհետև...շատ անգամ դիմում են՝ բանի տեղ չեն դնում, ու էլ ավելի վատ ա իրա համար: Շատ դեպքեր գիտեմ, երբ որ փորձել են քայլեր անել ու շատ ավելի վատ ա ավարտվել: Այսինքն՝ նույն ոստիկանությունում իրա ընկերներն են (նկատի ունի պաշտոնյայի կամ քրեական հեղինակության),

*դադարանում իրա բարեկամներն են լինում» (Օրենսդրական դաշտի փորձագետ, Ն. Փիլիպոսյան, Կանանց ռեսուրսային կենտրոն):*

Մշակութային միջավայրն ազդեցություն ունի հատկապես խնամակալության և հոգաբարձության մարմինների դեպքում, որոնք առաջնորդվում են ոչ թե հարցի իրավական կամ բարոյական կողմով, այլ ծանոթ-բարեկամի հայտնի իրավիճակով. «Երբ որ Շիրակի մարզի գյուղից է եղել, շատ կույրոզնի դեպք էր: Որովհետև, երբ որ գյուղում ա դեպք լինում ...օրինակ երեխաների հարց էր ըլրեղ առաջանում, որովհետև կինը դուրս էր եկել, գնացել էր, հեռացել էր բնակարանից ու ուզում էր իր երեխաներին վերցնել: Եվ ստացվում է, որ խնամակալության մարմնի բոլոր աշխատողները էլ տղամարդու հարևաններն են: Իրանց գյուղն ա, էլ տղադիկը դրսից ա եկել, ինչքան էլ, որ իրեն որպես մայր կփորձեն հասկանալ, բայց չեն կարողանում դեմ գնալ իրենց գյուղի բնակչին: Գյուղերում էլ առումով ծանոթ-խնամի-բարեկամ իրավիճակը ավելի ա բարդանում, որովհետև հիմնականում տղայի գյուղն ա դա լինում» (Օրենսդրական դաշտի փորձագետ, Ն. Փիլիպոսյան, Կանանց ռեսուրսային կենտրոն):

**Փաստորեն, կնոջ իրավունքների վերաբերյալ օրենսդրական դաշտում առկա են մեծ բացթողումներ: Կինը չի կարող բարձրացնել մշակույթով պայմանավորած իր խնդիրների մասին որևէ իրավական ոլորտում՝ դրանց լուծում տալու նպատակով, քանի որ դատաիրավական դաշտը ևս գործում է տղամարդկային օրենքներով:**

- Սույն հետազոտության շրջանակներում ներկայացված կին-տղամարդ անհավասարությունները կամ տարբերությունները կազմում են հենց այն հիմքը, ըստ որի, տեղի են ունենում հղիությունների՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումները՝ նախապատվությունը տալով տղա երեխաներին<sup>8</sup>:

---

<sup>8</sup> Սեռով պայմանավորված արհեստական հղիությունների ընդհատումների վերաբերյալ առավել մանրամասն տես Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում//Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն, 2013, ՄԱԲՀ <https://goo.gl/HPbyu6>

Ինչպես արդեն նշել ենք, ուսումնասիրվող երևույթն ունի բավական ամուր և կարծրացած հիմքեր, և այստեղ փոփոխությունների հասնելու համար ի հայտ են գալիս մի շարք դժվարություններ, քանի որ երևույթի վերաբերյալ նույն ընկալումները միաժամանակ ձևավորվում են երկու գործոնների՝ ընտանիքում, համայնքում անգիտակցաբար յուրացվող և նպատակադրված կերպով ձեռք բերվող կապիտալ գիտելիքի հիման վրա: Այսինքն՝ անհնար է այս հարցում փոխել հասարակությունը՝ առանց երևույթի վերաբերյալ նրանց ընկալումները փոխելու: Անկասկած է, որ այդ փոփոխությունների համար արդյունավետ կարող են լինել նույն այն ուղիները, որոնց միջոցով ձևավորվել են կին-տղամարդ հարաբերությունների վերաբերյալ ընկալումները, այսինքն՝ խոսքը կրթական ինստիտուտների, ՁԼՄ-ների և տեղեկատվության փոխանցման այլ միջոցների (գովազդ, տարբեր միջոցառումներ և այլն) մասին է:

Այնուամենայնիվ, որպես առկա իրավիճակի փոփոխման հնարավոր տարբերակներ, **առաջարկում ենք.**

- **Փոփոխություններ իրականացնել կրթական համակարգում,** այդ թվում՝ վերանայել դպրոցական դասագրքերը, վերապատրաստել մանկավարժներին և ապահովել մանկավարժական կազմի սեռային համամասնություն: Կրթական համակարգը պետք է դիտարկել այն հզորագույն միջոցներից մեկը, որը կարող է փոխել հասարակության ընկալումները, քանի որ մենք ականատես ենք եղել, թե ինչպես է Խորհրդային կառավարությունը կրթական համակարգի միջոցով փոխել մարդկանց կարծրատիպերը: Ավելի համոզիչ լինելու համար մեջբերենք մի օրինակ. «60-ական թվականներին կինո Մոսկվայի մոդ կարող էին շալվար հագած աղջկան փղամարդիկ ծեծեին, որովհետև գտել են, որ էփ աղջիկը իրա շալվարով անբարոյականի բան ա ստեղծում, իրանց քույրերին օրինակ ա ծառայում անբարոյականության: Իրենք ծեծել են էփ աղջկան, որովհետև էփ համարել են իրենց փարածքը: Բայց 80-ականներին, եթե նման բան տեղի ունենար, կհամարվեր



Ֆանտաստիկ տրեյդինգ, հեյտանացություն, բարբարոսություն: Այսինքն 20 տարվա մեջ բուհական համակարգը, կրթական համակարգը էնպես են արել, որ հասարակությունը զգալիորեն փոխվել ա: Նույն Արևմուտքում, որ էսօր թվում ա, որ շար գարգացած ա, 67-68 թվականին մարաթոնյան մրցավազքի ժամանակ կին ա մասնակցել, որին մասնակից տղամարդիկ ծեծում էին: Դա կարծես եղել է Նահանգներում: Ոչ թե ասել են դուրս արի, ծեծում էին 4 տղամարդ: Բայց էսօր էտ հասարակություն նման բան տեսնի, կհամարի բարբարոսություն: Այսինքն՝ բազային նշանակություն ունի կրթական համակարգը» (Կրթության ոլորտի փորձագետ, Ա. Թադևոսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

- Բարձրացնել կրթական հաստատություններում աշխատող մանկավարժների գիտելիքները՝ արժեքների ձևավորման, վերակառուցման, գենդեր հասկացության վերաբերյալ:
- **Վերանայել դպրոցական դասագրքերը:** Դասագրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա է գենդերային դերերի ներկայացվածության խիստ անհամաչափություն, ավելին՝ արական դերերի գերակշռում իգականի նկատմամբ, որոնք, բացի զուտ պատկերներ և տեքստ ներկայացնելուց, միևնույն ժամանակ ներկայացնում են նաև մասնագիտական, սոցիալական դերեր, հատկանիշներ: Աշակերտը, ամեն օր շփվելով դասագրքի հետ, ակամա ընկալում և յուրացնում է այդ պատկերների ու տեքստերի թաքնված ուղերձները:
- **Իրականացնել հստակ մշակված քաղաքականություն ԶԼՄ-ների միջոցով:** Գովազդների, հաղորդումների, ֆիլմերի միջոցով բարձրացնել մարդկանց իրազեկվածությունն ընտանեկան հարաբերությունների, կին-տղամարդ հավասարության, համամարդկային արժեքների, այլ երկրների հասարակությունների արժեքային համակարգերի վերաբերյալ և այլն:

- Ճիշտ կրթության միջոցով **կնոջը հնարավորություն տալ ձեռք բերել տնտեսական ինքնուրույնություն:**
- Իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնց միջոցով հնարավոր կլինի միաժամանակ **ներգրավել ընտանիքի բոլոր անդամներին:** Քանի որ, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ ծրագրերի արդյունքները, եթե փոխվում են միայն կնոջ ընկալումները կամ գիտելիքները, դրանք, իրենց հերթին, առաջացնում են նոր խնդիրներ և նոր բախումներ ընտանիքի մյուս անդամների հետ:
- Ծնողներին ներգրավել երեխաների վերաբերյալ այնպիսի դաստիարակչական մեթոդների կիրառմանը, որոնցում չկան կարծրատիպային տարբերություններ տղա և աղջիկ երեխաների միջև: Միաժամանակ այդ մեթոդների միջոցով **մեծացնել հայրերի մասնակցությունը երեխաների դաստիարակության հարցում՝** ապահովելով ծնողների հավասար մասնակցություն:
- **«Կնոջ հզորացում»<sup>9</sup>:** Կնոջ նկատմամբ խտրական վերաբերմունքի լուծումը մեր փորձագետներից Հ. Գևորգյանը տեսնում է կնոջը «հզորացնելով». *«Միանշանակ կանանց հզորացման մեջ: Եթե մենք կանանց չհզորացնենք, մենք չենք ունենա հաղթահարման որևէ ճանապարհ: Ինչքան մենք խոսենք օրենքներից, օրենսդրական փոփոխություններ, կին-տղամարդ հավասարություն... Արդեն քանի տարի ա գործում ա կանանց և տղամարդկանց հավասարության օրենքը, բայց դա ցույց տվեց, որ մեր կյանքում որևէ բան չփոխվեց: Ընտանեկան բռնության հաղթարահման միակ ճանապարհը զոհի հզորացումն է: Եթե մենք չհզորացնենք կանանց, գիտակցությունը չփոխենք, տնտեսապես չհզորացնենք, մենք որևէ փոփոխություն չենք ունենա: ...Միայն տնտեսապես չենք հզորացնում: Կինը, ով ապրում ա էս հայրիշխանական համակարգում, ինքը չունի որոշում կայացնելու իրավունք, ինքը*

---

9 Տերմինը պատկանում է կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ ոլորտի փորձագետ Հ. Գևորգյանին:

*չունի ինքնուրույնություն: Նման փերմին ենք օգտագործում՝ «սովորած» կամ «վարժեցված անօգնականություն»: Կնոջը սովորեցնում են, որ դու անօգնական ես, դու չես կարող ինքնուրույն լինել: Իսկ մենք ասում ենք, որ դու կարող ես որոշում կայացնել, դու կարող ես ինքնուրույն լինել: Դու իրենց կամաց-կամաց բերում ես գիտակցության, որ էն ինչի մեջ դու ապրում ես, դու արժանի չես, դու արժանի ես, նորմալ արժանապատիվ ապրելու» (Կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ ոլորտի փորձագետ, Հ. Գևորգյան, Կանանց աջակցման կենտրոն):*

## 4. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 4.1 ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի որ սույն հետազոտությունը վերաբերում է գեոդերային անհավասարության դրսևորումներին առօրյայում, նախ և առաջ, մի փոքր անդրադառնանք, թե ինչպես է ընդհանրապես ձևավորվում առօրյան: Ինչպես նաև առավել բազմակողմանի հասկանալու համար քննվող խնդրի վերաբերյալ արմատացած ընկալումների պատճառները և հասարակության մեջ գեոդերային անհավասարության վերաբերյալ առկա գիտելիքը՝ անդրադառնանք, թե ընդհանրապես ինչպես է ձևավորվում գիտելիքն առօրյայում:

Առօրյայում գիտելիքի կիրառության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում գիտելիքի սոցիալական պաշարը: Համաձայն առօրեականության տեսաբանների՝ գիտելիքի սոցիալական պաշարին անդրադառնալը նպաստում է անհատի «տեղավորմանը» հասարակությունում և նրա հանդեպ համապատասխան վերաբերմունք ունենալուն: Այն տարբերակում է իրականությունը ճանաչելիության աստիճանով և տալիս է մանրամասն տեղեկատվություն առօրյա կյանքի այն հատվածների վերաբերյալ, որոնց հետ մենք հաճախ ենք գործ ունենում և, ավելի ընդհանուր, ոչ հստակ տեղեկատվություն՝ ավելի «հեռու» հատվածների վերաբերյալ: «Օրինակ՝ իմ գիտելիքը սեփական մասնագիտության, և նրա աշխարհի մասին շատ առանձնահատուկ է, խորը և ամբողջական, մինչդեռ ուրիշ մարդկանց մասնագիտական աշխարհի մասին բավական մակերեսային գիտելիք է: Գիտելիքի սոցիալական պահուստն ապահովում է տիպաբանման համակարգեր, և ոչ միայն ուրիշ մարդկանց տիպաբանման, այլ նաև ցանկացած իրադարձության և փորձի տիպաբանման՝ ինչպես սոցիալական, այնպես էլ՝ բնության»: Ըստ այս հեղինակների՝ գիտելիքի համակարգը փոխանցվում է հաջորդ սերնդին: Նրանք սոցիալականացման ընթացքում ընկալում են այն որպես օբյեկտիվ ճշմարտություն:<sup>10</sup> Ինչը կտեսնենք նաև մեր հետազոտական նյութում՝ սույն աշխատանքի հաջորդ մասերում:

<sup>10</sup> Առավել մանրամասն տես՝ Бергер П., Лукман Т., Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. М.: Изд. «Медиум», 1995, 323 с.

Իսկ ինչպե՞ս է մեզանից յուրաքանչյուրը մեկնաբանում բոլորի համար ընդհանուր սոցիալական աշխարհը, որում նա ապրում է և գործում որպես մարդ՝ ուրիշ մարդկանց շարքում, աշխարհ, որն ինքն ընկալում է որպես իր գործողությունների և կողմնորոշումների դաշտ, որը կազմակերպված է իր անհատականության շուրջը հատուկ ձևով: Նաև պետք է նկատի ունենանք, որ այդ սոցիալական աշխարհը համարվում է ուրիշ մարդկանց գործողությունների դաշտ՝ կազմակերպված իրենց տեսանկյունից: Ա. Շյուցը խնդիրը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «Այդ աշխարհը միշտ տրված է մեզ առաջին հերթին որպես կազմակերպված/ստեղծված: Մենք ծնվել և մեծացել ենք այդ կազմակերպված աշխարհում: Կրթության և դաստիարակության միջոցով, բոլոր տեսակի փորձառությունների միջոցով մենք իմանում ենք որոշ գիտելիքներ այդ աշխարհի և նրա ինստիտուտների մասին: Մենք հետաքրքրված ենք այդ աշխարհի օբյեկտներով, քանի որ դրանք որոշում են մեր կողմնորոշումը, նպաստում կամ կանխարգելում են մեր սեփական նախագծերի իրականացումը, կառուցում են այն տարրերը, որը մենք պետք է ընդունենք կամ փոփոխենք, մի խոսքով, քանի որ դրանք ինչ-որ բան են նշանակում մեզ համար<sup>11</sup>: Այդ աշխարհի կազմակերպված/ստեղծված լինելու ընկալումն էլ այն կարևոր գործոններից մեկն է, որ մինչև օրս մեր միջավայրում կանանց ունեցած դերակատարության վերաբերյալ պատկերացումները կարծրացած են և գրեթե չեն ենթարկվում փոփոխությունների:

Սոցիալական աշխարհը, որում մարդը ծնվել է և որտեղ նա պետք է գտնի իր կողմնորոշումները, նրա կողմից ընկալվում է որպես ամուր միահյուսված սոցիալական հարաբերություն, նշանների և խորհրդանշանների համակարգ՝ դրանց հատուկ իմաստային կառուցվածքով, որպես սոցիալական կազմակերպությունների ինստիտուցիոնալացված ձև, որպես կարգավիճակի և հեղինակության համակարգ և այլն: Սոցիալական աշխարհի այդ տարրերի իմաստն, ինչպես նաև դրանց ողջ բազմազանությունը և կառուցվածքը այդ աշխարհում

11 Առավել մանրամասն տես՝ Шютц А., Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии. М.: Институт Фонда «Общественное мнение», 2003, 336 с.

ապրողների կողմից ընկալվում է որպես տրված: Արդյունքում՝ սոցիալական աշխարհի ընկալումը ձևավորում է «մենք» խմբի սովորությունները, որոնք ընդունված են որպես լավ և ճիշտ միջոցներ՝ մարդկանց և իրերին վերաբերվելու: Դրանք համարվում են իրենք իրենց կառուցված, քանի որ դիմացել են ժամանակի փորձություններին, և լինելով սոցիալապես հաստատված՝ չեն պահանջում բացատրություններ<sup>12</sup>:

Այսպիսով՝ առօրյայում գիտելիքի ձևավորման խնդրի վերաբերյալ մարդը/անհատը սովորաբար իրեն չի ծանրաբեռնում այն հարցերով, թե ինչն է իր համար իրական, և ինչ գիտի ինքը, քանի դեռ չի բախվում որևէ խնդրի: Մարդն իր իրականությունը և գիտելիքը համարում է ինքն իրեն ձևավորվող: Ինչպես կտեսնենք հետագոտության արդյունքների ամփոփումից, նույնը վերաբերում է նաև կանանց կողմից իրականացվող աշխատանքների և կայացվող որոշումների մասին գիտելիքին: Օրինակ՝ հետագոտության մասնակիցները դժվարանում էին պատասխանել այն հարցին, թե երբ կամ ում կողմից է որոշվել կանանց և տղամարդկանց կողմից իրականացվող աշխատանքների բաժանման սկզբունքը: Պատճառներից մեկն այն է, որ նրանք դա համարում են տրված, իրենցից դուրս գտնվող, և առաջին անգամ էին բախվում նման հարցադրման:

## 4.2 ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈՂՆԵՐ

### 4.2.1 Անհատական խորին հարցազրույցներ

Որակական հետազոտությունը սոցիալական կյանքի մեկնաբանմանն ուղղված գործընթաց է, որը հնարավորություն է տալիս երևույթն ուսումնասիրել բնական պայմաններում և առանցքային տեղեկատուների կարծիքների հիման վրա բացահայտել ու վերլուծել սոցիալական երևույթի ամբողջական բարդ պատկերը: Խորին (որակական)

---

<sup>12</sup> Առավել մանրամասն տես՝ Шютц А., Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии. М.: Институт Фонда «Общественное мнение», 2003, 336 с.

հետազոտությունների ժամանակ ուշադրությունը բևեռվում է մարդկանց սոցիալական գործողություններին և այն իմաստներին, որոնք դրվում են այդ գործողությունների հիմքում: Այս հետազոտությունների նշանակետը սուբյեկտն է և նրա պրակտիկ գործունեությունը կոնկրետ սոցիալական իրավիճակում: Խորին հարցազրույցի մեթոդը ենթադրում է անձի սոցիալական աշխարհի բազմակողմանի և խոր ուսումնասիրություն<sup>13</sup>:

Սույն հետազոտության շրջանակներում խորին հարցազրույցների իրականացման առաջնայնության պատճառն այն է, որ ձևայնացված հարցազրույցը հնարավորություն է տալիս ստանալ «ինչքան», «որքան», «ինչ չափով» հարցերի պատասխանը, իսկ որակական հարցազրույցը պատասխանում է «ինչու», «ինչպես», «ինչ պատճառով» հարցերին: Որակական հարցազրույցի միջոցով կարելի է վերլուծել երևույթի իմաստային նշանակությունը, բացահայտել դրա պատճառահետևանքային կապերը: Բացի այդ՝ որակական (խորացված) մեթոդի առավելությունն այն է, որ վերջինիս միջոցով հնարավոր է ուսումնասիրել խնդիրն իր բազմազանությամբ և խորությամբ:

Մեր աշխատանքի հիմքում ընկած խորին հարցազրույցներն իրականացվել են կիսաձևայնացված (Semi-Structured) հարցազրույցի միջոցով, որի էությունը հետևյալն է. նման հարցազրույցում նախատեսվում է հիմնական բաց հարցերի ցանկ, և հարցազրույցը տեղի է ունենում որոշակի տրամաբանական հաջորդականությամբ՝ պայմանավորված ինչպես հարցաշարով, այնպես էլ՝ հարցազրույցի գործընթացով: Այս մեթոդի առավելությունն այն է, որ հարցաշարի օգտագործումը նպաստում է տվյալների բազմակողմանիությանը, և տեղեկատվության հավաքումը ինչ-որ չափով դառնում է ավելի համակարգված:

Մեր հետազոտության ընթացքում խորին հարցազրույցներն իրականացվել են գրուցակիցների հետ դեմ առ դեմ՝ առանց որևէ երրորդ անձի ներկայության: Բացառություն են կազմել որոշ դեպքեր, որոնց

13 Առավել մանրամասն տես՝ Թադևոսյան Գ., Որակական սոցիալական հետազոտություններ, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2006, 374 էջ

Ժամանակ, ելնելով հետազոտության նպատակից, ներգրավվել է նաև ընտանիքի այլ անդամ:

Անհատական խորին հարցազրույցներն իրականացվել են ՎՎՀ ծրագրի իրականացման տարածաշրջաններում, ինչպես նաև Սյունիքի մարզի Կապան քաղաքում և Երևան քաղաքի Կենտրոն համայնքում: Կապանը և Երևանի Կենտրոն համայնքը հանդիսացել են ստուգողական խմբեր (control group), որոնց ներգրավվման պատճառը համեմատական-վերլուծական նյութի ձեռքբերումն է, քանի որ ՎՎՀ թիրախային տարածաշրջանները հիմնականում աչքի են ընկնում ավանդույթների պահպանմամբ, և նորույթների ընդունումը մշակութային միջավայրում տեղի է ունենում դանդաղ: Ստուգողական խմբերի համայնքների ներգրավումն ունի հետևյալ պատճառները՝ 1) հետազոտական նյութերը թույլ են տալիս նշել, որ, ի թիվս մի քանի այլ մարզային բնակավայրերի, Կապան քաղաքի բնակչությունն առանձնանում է երևույթների վերաբերյալ ոչ կարծրատիպային ընկալումներով, 2) Կենտրոն համայնքի ընդգրկման պատճառն այն է, որ նորույթների ներմուծումն ու ընկալումների մակարդակում փոփոխությունների իրականացումն առավել ընդգծված ձևով բնորոշ է մայրաքաղաքային բնակչությանը, հատկապես՝ ոչ ծայրամասային համայնքների բնակչությանը:

Ելնելով մեր հետազոտության թեմատիկ առանձնահատկություններից՝ խորին հարցազրույցներն անցկացրել ենք ՎՎՀ ծրագրի իրականացման տաս բնակավայրում (ընդ որում՝ և քաղաքաբնակ, և գյուղաբնակ հանրության շրջանում) և ստուգողական խումբ հանդիսացող երկու բնակավայրում: Յուրաքանչյուր բնակավայրում անցկացվել է չորս խորին հարցազրույց:

Խորին հարցազրույցների անցկացման համար գրուցակիցներն ընտրվել են ըստ մի քանի սկզբունքների: Դրանք են՝

1. *Ըստ ընտանիքի կառուցվածքի*, այդ թվում՝
  - 1.1. միասերունդ
  - 1.2. երկսերունդ



- 1.3. եռասերունդ
- 1.4. քառասերունդ ընտանիքներ
2. *Ըստ ընտանիքում առկա երեխաների սեռի*, այդ թվում՝
  - 2.1. միայն արական սեռի
  - 2.2. միայն իգական սեռի
  - 2.3. և՛ արական, և՛ իգական սեռի երեխաներ
3. *Ըստ ընտանեկան կարգավիճակի*, այդ թվում
  - 3.1. չամուսնացած երիտասարդ աղջիկներ (18-30 տ.)
  - 3.2. ամուսնացած երիտասարդ կանայք (մինչև 35 տ.), ովքեր ունեն սկեսուր
  - 3.3. ամուսնացած երիտասարդ կանայք (մինչև 35 տ.), որոնց տանը չկան այլ չափահաս կանայք (սկեսուր, տալ, տեգոր կին և այլն)
  - 3.4. 36-49 տ. ամուսնացած կանայք
  - 3.5. ամուսնացած միջին տարիքի կանայք (50-69 տ.), ովքեր ունեն սկեսուրի կարգավիճակ
  - 3.6. ամուսնացած միջին տարիքի կանայք (50-69 տ.), ովքեր միաժամանակ ունեն և՛ սկեսուրի, և՛ հարսի կարգավիճակ
  - 3.7. ամուսնացած միջին տարիքի կանայք (50-69 տ.), ովքեր ունեն սկեսուր, բայց չունեն հարս
  - 3.8. ամուսնացած միջինից բարձր տարիքի կանայք (70 տ. և բարձր), ովքեր տանն ունեն մեկ կամ երկու տարբեր սերնդի հարսներ
  - 3.9. չամուսնացած տղամարդիկ (մինչև 35 տ.)
  - 3.10. ամուսնացած երիտասարդ տղամարդիկ (մինչև 40 տ.)
  - 3.11. ամուսնացած միջին տարիքի տղամարդիկ (մինչև 63 տ.):

#### **4.2.2 Ներգրավված դիտարկումներ**

Ներգրավված դիտարկումը հետազոտողին թույլ է տալիս ավելի լավ պատկերացնել հետազոտության համատեքստը, ինչն իրականության ընկալումը դարձնում է ամբողջական: Դիտարկման միջոցով

հետազոտողը կարող է ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը կարող է բացակայել հետազոտվողների բանավոր նկարագրություններում: Դիտարկումը թույլ է տալիս բացահայտել այնպիսի երևույթներ, որոնք առաջին հայացքից կարող են չնկատվել և վրիպել հետազոտողի ուշադրությունից: Դիտարկման միջոցով ստացված տվյալները թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել ինչպես դիտարկվող օբյեկտի, այնպես էլ նրան շրջապատող միջավայրի վերաբերյալ:

Դիտարկման մեթոդն ունի մի շարք յուրահատկություններ, որոնք այն դարձնում են առանձնահատուկ և երբեմն անփոխարինելի սոցիալական երևույթներն ուսումնասիրելիս: Դիտարկման ժամանակ տեղեկությունները ստացվում են դիտարկվողների հետ ակտիվ փոխազդեցության արդյունքում: Այդ փոխազդեցության շնորհիվ հետազոտողը կարողանում է ներթափանցել հետազոտվողի կենսաշխարհի և իրերն ուսումնասիրել այդ տեսանկյունից: Այս մեթոդը պահանջում է դաշտում հետազոտողի երկարատև ընդգրկվածություն, ինչը ևս նպաստում է երևույթի ամբողջական ըմբռնմանը:

Չնայած մեթոդը կիրառման տեսանկյունից ամենից բարդն է և դժվար իրագործելի, այնուամենայնիվ, մեր հետազոտության մեջ այն կիրառել ենք՝ հետևյալ պատճառներով.

1. Ելնելով ոլորտում ունեցած մեր փորձից՝ կարող ենք վկայել, որ սեռով պայմանավորված բռնությունները որոշ դեպքերում ունեն «միջնորդավորված» բնույթ, այսինքն՝ պայմանավորված են սոցիալ-մշակութային ոչ անուղակի գործոններով: Դրանց բացահայտումը միայն հարցազրույցների միջոցով կարող է լինել ոչ ամբողջական և/կամ աղավաղված: Մինչդեռ ներգրավված դիտարկումների ժամանակ հնարավոր է լինում վեր հանել հետազոտությանը վերաբերող, առաջին հայացքից ոչ առաջնային, սակայն իրականում խնդրի ձևավորմանը նպաստող կարևորագույն գործոնները ևս:
2. Մեթոդի առավելություններից մյուսն այն է, որ ներգրավված դիտարկման ժամանակ հետազոտող-հետազոտվող կապը

հստակ ընդգծված չի լինում, իսկ հետազոտությունը դառնում է առավել ոչ պաշտոնական՝ հնարավորություն տալով հասկանալ խնդիրը պայմանավորող գրեթե բոլոր հանգամանքները:

3. Ըստ մեր նախնական կանխավարկածի՝ հետազոտության մասնակիցները երևոյթները կարող են գնահատել և մեկնաբանել ոչ թե համաձայն իրականության, այլ՝ ըստ իրենց պատկերացումների/ցանկությունների: Մինչդեռ ներգրավված դիտարկումը հնարավորություն կտա հնարավորինս փոքրացնել, իսկ որոշ դեպքերում՝ չեզոքացնել տեղեկատվության աղավաղումը:

Սույն հետազոտության շրջանակներում ներգրավված դիտարկումներն իրականացվել են թիրախային տասներկու համայնքներում. յուրաքանչյուր համայնքում իրականացվել է մեկ դիտարկում: Դիտարկողը թիրախային յուրաքանչյուր ընտանիքում անցկացրել է մեկ լրիվ օր՝ հնարավորինս ներկա գտնվելով հետազոտվող խնդիրներին վերաբերող իրավիճակներում:

Ներգրավված դիտարկումների անցկացման համար թիրախային ընտանիքներն ընտրվել են ըստ մի քանի սկզբունքների: Դրանք են՝

1. *Ըստ ընտանիքի կառուցվածքի*, այդ թվում՝
  - 1.5. միասերունդ
  - 1.6. երկսերունդ
  - 1.7. եռասերունդ
  - 1.8. քառասերունդ ընտանիքներ
2. *Ըստ ընտանիքում առկա երեխաների սեռի*, այդ թվում՝
  - 2.1 միայն արական սեռի
  - 2.1 միայն իգական սեռի
  - 2.1 և՛ արական, և՛ իգական սեռի երեխաներ
3. *Ըստ ընտանիքի անդամների կրթական մակարդակի*, այդ թվում՝
  - 3.1 բարձրագույն կրթությամբ ընտանիքներ
  - 3.1 միջնակարգ կրթությամբ ընտանիքներ

4. *Ըստ սոցիալական կարգավիճակի*, այդ թվում՝
  - 4.1 սոցիալապես ապահովված ընտանիքներ
  - 4.1 սոցիալապես անապահով ընտանիքներ
5. *Ըստ SS կանանց զբաղվածության*, այդ թվում՝
  - 5.1 զբաղվածություն ունեցող/աշխատող (ոչ գյուղատնտեսությամբ)
  - 5.1 զբաղվածություն չունեցող/չաշխատող կանայք

#### **4.2.3 Փորձագիտական հարցազրույցներ**

Վերոնշյալ մեթոդի կիրառումը սույն հետազոտության շրջանակներում ունեցել է մի քանի պատճառ, որոնցից նշենք երկու ամենակարևոր երկուսը՝

1. Այն հնարավորություն կտա առավել համապարփակ դիտարկել հետազոտական նյութը և չսահմանափակվել միայն հետազոտության մասնակիցների՝ երևույթի վերաբերյալ ունեցած պատկերացումներով և ընկալումներով:
2. Ոլորտի վերաբերյալ նեղ մասնագիտական կարծիքներն ու առաջարկները կարող են օգնել և նպաստել հետազայում խնդրի լուծման վերաբերյալ միջոցներ մշակելիս:

Փորձագիտական հարցազրույցներն անցկացվել են դեմ առ դեմ՝ կիսաձևայնացված հարցաշարի կիրառմամբ: Հարցազրույցներն անցկացվել են երեք ոլորտների չորս ներկայացուցիչների հետ՝

1. Կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Հասմիկ Գևորգյան, Կանանց աջակցման կենտրոն,
2. Օրենսդրական դաշտի փորձագետ՝ Նվարդ Փիլիպոսյան, Կանանց ռեսուրսային կենտրոն,
3. Կրթական ոլորտի ներկայացուցիչներ՝ Աղասի Թադևոսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Նիկոլ Մարգարյան, Երևանի պետական համալսարան:





**ԱՍՈՂԻԿ**

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Մայրաք-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)